

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهيرة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

40-րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 423

VOL. XXXX N° 423

السنة الأربعون - العدد رقم ٤٢٣



ՀԱՎԵՐԺ ՓԱՌԲ  
ԿԱՄԱՎՈՐ ԲԱՆԱԿԻ  
ԱՆՍԱԿ ԽԻՉԱԽՆԵՐԻՆ

ՅԱԲԵՐԺ ՓԱՌԲ  
ԵՐԿՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՏԵՐԵՐՈՒՆ՝  
ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՏԻՔԻ  
ԻՐԵՆՑ ԿԵԱՆՔԸ ԶՈՎԾՆԵՐՈՒՆ



ԱՆԺԱՄԱՆԱԿ  
ԿՈՐՈՒՄՏ



## ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ճանչնալ պատմությունը 2

### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հաղորդագրություն 4

Յարգանքի տուրք 6

Պատգամներ 15

Անդրադարձ 18

Անուանակոչում 22

Յիշատակի ոգեկոչում 27

### ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Քարոզչական առցանց 32

Ա. սեմինարը

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ի գործունեությունը 36

մայր հայրենիքի մէջ.

1918-1927 (Ե. մաս)

### ԱԿՆԱՐԿ

Մարգադաշտերու 48

կառուցումը հիմք՝

մեր վերականգնումին

Հ.Մ.Ը.Մ.ին երկմտանք 49

երբեք արտօնուած չէ

### ՅՈՒՇԵՐ

Ապտակը 50

### Ի ՅԻՇԱՏԱԿ

Քոյր Մարալ Մելքոնեանի 52

յիշատակին



### ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմաթիւ սերունդներու 73

դաստիարակը՝

Եղբ. Մանուէլ Հալլաճեան

Եղբ. Մանուէլ Հալլաճեան

հայրն ու Հ.Մ.Ը.Մ.ականը 75

Կենսագրական տեղեկություններ

Եղբ. Մանուէլ Հալլաճեանի 77

մասին

Ազնուութեան եւ ծառայութեան

խորհրդանիշը՝ Եղբ. Կարօ

Յովակիմեան 78

Նուիրաբար ծառայեց,

բարձրացաւ եւ բարձրացուց 79

Ծերանալ մերժող Սամուէլ

Սկրտիչեանը 80



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բա.Ֆ.Ֆի Սիլվահեան, Սիւզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Սիլվա Ալավերդեան:

**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Վարդուի Ֆրոնզլեան, Վարդան Զսաճիկեան, Տիրան Ծա- հինեան եւ Եղիա Քիլիճեան:

**Էջադրում եւ ընդհանուր չեւադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստություն:** Y Concept International, **Գրաշարու- քին:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստություն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Մէքեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Բաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ նշողած է՝ Լիբանան 25 \$, Սիջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 55 \$: Լիբա- նանի մէջ քերթին հարստացման սակն է 5000 Լ.Ն.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուի- ջով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»-ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս քերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հաստած, Պուրճ Հա- մուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org



Ոչ եւս է Հ.Մ.Ը.Մ.ական գրչի ու մտքի մեծ երախտաւոր եղբ. Սամուէլ Մկրտիչեան 83

**ԱՆԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՈՒՄՏ**

Տիպար կերպարդ եւ ծառայութեան օրինակելի կեցուածքներդ միշտ պիտի մնան մեզի հետ 54

Պարտականութեան գիտակից նուիրեալ միութենականը 56

Տիպար մարդն ու տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը 57

Մեծահոգի, ազնիւ ու ազնուական Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Արմանտօն Անկեղծութեան եւ նուիրումի խորհրդանիշ եղբայր Արմանտօն Օրինակը, որ մեզի ձգեց 60

Անմոռանալի Արմանտոյին. «Ոչ ոք անփոխարինելի է, բայց բոլորս կարելոր ենք» 60

Հ.Մ.Ը.Մ.ի Արմանտօնները 62

Հայութիւնն ու Հ.Մ.Ը.Մ.ը յաղթական ապագայ ունենալու համար եղբ. Արմանտօ Թորգոմեանի մահուան առիթով ցաւակցագիրներ Կենսագրական գիծեր եղբ. Արմանտօ Թորգոմեանի 71

Եղբ. Արմանտօ Թորգոմեանի մահուան քառասունըը շրջանէ շրջան 72

**ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂԷ** 84

Ի յիշարակ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան վաղամեռիկ անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի, «ՄԱՐԶԻԿ»-ի այս քիւին «ԱՆԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՈՒՄՏ» բաժինին հովանաւորութիւնը կը սրբանշանն ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԻՇԽԱՆ ԵՒ ՓՍՈՒԼԱ ԵՂԻԱՅԵԱՆՆԵՐ:



**Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ԱՄԵԱԿԻ  
ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՄՐՅԱՆՔԸ**

16 Նոյեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 103-րդ տարեդարձին օրը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբը յայտարարեց կազմակերպումը լուսանկարչական մրցանքի մը, որուն պայմանները կը ներկայացնենք ստորեւ.-

Ա) Լուսանկարչական մրցանքին կրնան մասնակցիլ 18 տարեկանէն վեր Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ ոչ-Հ.Մ.Ը.Մ.ականներ: Արհեստավարժ լուսանկարիչներ չեն կրնար մասնակցիլ սիրողական նկարիչներու համար նախատեսուած այս մրցանքին:

Բ) Լուսանկարչական մրցանքին թեման է «Հ.Մ.Ը.Մ.ի առօրեան»: Հեղեւաբար, մրցանքին կարելի է ներկայացրնել Հ.Մ.Ը.Մ.ի սկաւորական, մարզական, անդամական, ընկերային, հանրային թէ քարտէսական գործունէութեան առնչուած որեւէ լուսանկար, որ հարազատօրէն կը ցոլացնէ միութեան կեանքն ու առօրեան:

Գ) Մրցանքին ներկայացուած լուսանկարները (սեւ-ճերմակ կամ գունաւոր) պայման է որ ըլլան նոր նկարուած եւ մասնագիտական վերամշակումի (Photoshop-ի) չենթարկուած:

Դ) Լուսանկարները կրնան նկարուիլ որակաւոր հրատարակութեան յարմար լուսանկարչական քամերայով եւ բջիջային հեռաձայնով:

Ե) Լուսանկարները հարկ է ունենան համապատասխան խորագիր:

Չ) Լուսանկարները պարտին մինչեւ 16 Փետրուար 2022 ուղարկուած ըլլալ մրցանքի կազմակերպիչ յանձնախումբի ե-նամանակի հեղեւեալ հասցէին Karozchagan@homenetmen.com

Է) Մրցանքին առաջին երեք դիրքերը գրաւող մասնակիցները կ'արժանանան հեղեւեալ մրցանակներուն.-

Առաջին մրցանակ.- 1000 ամերիկեան փոլար արժողութեամբ CANON վաճառանիշով լուսանկարչական մեքենայ մը:

Երկրորդ մրցանակ.- 300 ամերիկեան փոլար արժողութեամբ լուսանկարչական քամերայի portable tripod մը եւ պայուսակ մը:

Երրորդ մրցանակ.- Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը յանդարտող արժեքաւոր ծամացոյց մը յարուկ հաստատագրելով: Երեք մրցանակակիրները կը ստանան Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի մէկ տարուան բաժանորդագրութիւն:

# ՃԱՆՉՆԱԿ ԴԱՏԱՌՈՒԹԻՒՆԸ

**Փ**ետրուար 1911-ին, երբ հազի քսանհինգ զարուհներ բոլորած Շաարշ Բրիտան Պոլսոյ մէջ յանդգնութիւնը ունեցաւ Օսմանեան կայսրութեան առաջին մարզական թերթը՝ «Մարմնամարզ»ը հիմնելու, շատեր թերահաւատութեամբ ընդունեցին լոյս աշխարհ եկող նախաձեռնութիւնը:

Նոյեմբեր 1918-ին, երբ Բրիտանի նահատակութենէն երեք տարի ետք, անոր երբեմնի գործակիցները որոշեցին ձեռն ու մարմին տալ հայ մարմնակրթութեան մեծ երախտատրին երազին եւ հայ մարզական բոլոր ակումբներն ու խումբերը հաւաքել մէկ դրօշի տակ, շատ-շատեր չհաւատացին այդ երազին իրականացման: Կարելի՞ է որբերէ եւ տարագիրներէ մարմնակրթական շարժում ստեղծել,- հեզնեցին անոնք, պարագայական խանդավառութեան մը վերագրելով Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը:

Չորս տարի ետք, Սեպտեմբեր 1922-ին, երբ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութիւնը միութիւնը պաշտօնապէս լուծուած յայտարարեց իր բնօրրանին մէջ, մարդիկ չվարանեցան անոր մահը շեփոթելու: Հողին վրայ ուրիշ է, դուրսը կը մեռնի՜, յայտարարեցին անտեղի աճապարանքով մը:

Հ.Մ.Ը.Մ. սակայն չմեռա՛ւ, ապրեցաւ եւ իրնով սերունդներ ապրեցուց:

Ապա գրաւը դրին ժամանակի եւ միջավայրի պայմաններուն վրայ, ենթադրելով որ տարիներն ու շրջապատի ազդեցութիւնները կրնան տկարացնել Հ.Մ.Ը.Մ.ը: Խանդավառութիւնը երկար չի տներ, շուտով կը կլանուին տեղական հոգերու մէջ, միութիւն եւ միութենականութիւն կը մոռնան, մտածեցին անոնք պահ մը:

Չախտեցան մաեւ իրենց գրաւին մէջ:

Դիմեցին ամէն տեսակ ճնշումի եւ հալածանքի. երկրորդ համաշխարհային պատերազմի թռուրտիւնն մէջ, տեղ մը մասնաճիւղեր փակեցին, այլ տեղ Հ.Մ.Ը.Մ.ականներ քստորավայր առաջնորդեցին, մէկ ուրիշ տեղ «հրաժարականներու» բեմադրութիւն սարքեցին:

Քայց դարձեալ չյաջողեցան:

Ընդհակառակն, Հ.Մ.Ը.Մ. տարուէ տարի արեւի մեծցաւ, հզօրացաւ եւ ինքզինք պարտադրող ներկայու-



թեամբ նախ՝ Մերձաւոր Արեւելեան մակարդակի կառոյցով օժտուեցաւ, ապա՝ համագաղութային տեսք ու մարմին ստացաւ, դեր ու առաքելութիւն ստանձնեց:

Վրայ հասան Միջին Արեւելեան երկիրներու քաղաքական ցնցումները. մեծաթի հայեր աւանդական գաղութներէ տեղափոխուեցան արեւմտեան նոր ոստաններ: Տեղափոխուողներու շարքին էին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ նախկին լիբանանահայեր, սուրիահայեր, իրաքահայեր թէ այլ: Յռե-

տեսական նախատեսութիւնները այս անգամ եւս չուշացան, կարծելով որ երրորդ սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականները չեն կրնար ապրեցնել միութիւնը: Անպայման կ'այլաւերին ու կը ձուլուին, մկատել տուին շատերը:

Հ.Մ.Ը.Մ. սակայն ապրեցաւ ու զարգացաւ ո՛չ միայն երրորդ, այլեւ՝ չորրորդ եւ հինգերորդ սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականներու հետ, որոնք միութիւնը պահեցին կանգուն եւ կենսունակ: Արեւի, Հ.Մ.Ը.Մ. թափ առաւ եւ վերընձիւղուեցաւ Հայաստանի մէջ, արմատներ նետեց Ստեփանակերտի, Թիֆլիսի եւ Մոսկուայի մէջ: Դարձաւ համահայկական երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը՝ իր թիւով, աշխարհագրական տարածումով եւ գործունէութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնն է այս, գոր պարտաւոր է ճանչնալ միութեան նոր միացող թէ արդէն անդամ իրաքանչիւր հայորդի: Հանգրուան առ հանգրուան, կամաւոր աշխատանքով եւ անսահման զոհաբերութեամբ կերտուած պատմութիւն մը, որուն իրաքանչիւր էջին վրայ կայ ամբողջ սերունդի մը ջանքն ու ճիգը՝ ապրելու մարդկօրէն առողջ, հայօրէն աննահանջ եւ հաւաքականօրէն գիտակից ու կազմակերպ կեանքով:

Հ.Մ.Ը.Մ.ի այս պատմութիւնը անցեալին չի պատկանիր միայն: Անցեալին պատահած դէպքերը հետքեր կը ձգեն յիշողութիւններու եւ արձանագրութիւններու մէջ: Այդ հետքերը երբ քով-քովի կը բերուին, կրնան վերակազմուիլ, վերակենդանանալ եւ պատմութեան վերածուիլ: Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը միութեան անցեալին վերակառուցումն է, վերակենդանացումն է, գիտնալու համար, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ի անցեալէն ստեղծուեցաւ ներկան: Ի՞նչ է այդ ներկան եւ ո՞ր է անոր տեղը այսօրուան աշ-





խարհին մէջ, մեր ժողովուրդի կեանքին եւ ապրած օրերուն մէջ:

Պատահական որեւէ միութեան պատմութեան չի նմանիր Հ.Մ.Ը.Մ.ի հաւաքական կենսագրութիւնը: Ծանցնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ ծանօթանալ հաւաքքի հսկաներու, որոնք երբեք դիրքին ճամբաներէ չքալեցին: Տկարութիւն չճանչցան, այլ՝ հաստատ մնացին իրենց համոզումներուն մէջ, ինքնավստահ՝ իրենց քայլերուն մէջ: Չվախցան նորութիւններէ, չմերժեցին նորերը:

Ծանցնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կ'ենթադրէ ճանցնալ մենք մեզ, մեր միութեան իրագործումները եւ զանոնք կերտող խոնարհները, որոնք իրենց կեանքով փաստը տուին, թէ ինչպէ՛ս կարելի է կրաւորականութիւնը փոխարինել նախաձեռնութեան ոգիով, համակերպուածութիւնը՝ մար-

տահրաւրներ դիմագրաւելու քաջութեամբ, իսկ ինքնագոհութիւնը՝ մնայուն կատարելագործման ձգտումով:

Ծանցնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ մանաւանդ ծանօթ ըլլալ միութեան նպատակին, որուն իրագործման համար տեսական վազք մը եղաւ միութեան կեանքը՝ ի խնդիր նորահաս սերունդներու մարդկային, ընկերային եւ ազգային առողջ դաստիարակութեան:

Վերջապէս, ճանցնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ հաղորդուիլ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական, միութեանական ու բարոյական այն բոլոր արժէքներուն հետ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի իսկական դիմագիծն ու ինքնութիւնը կը կերտեն եւ զայն արժանի կրողը կը դարձնեն այս միութեան 103 տարիներու հարուստ անցեալին, վաստակին ու փառքին:

## Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄՆԱՃԻՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արուիեան (Արուիեան), «Հ. Առուստամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վեպի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սրեպիանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Գիւնի, Անթիլիաս, Ժըլէյ-յրէ, Պաուշիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղրապ. **Քուէթ:** Քուէթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Մյունխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթելիա. **Պուլիարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթո, Քէմպրիճ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Բրասիլիս, «Սասուն» (Ֆրեզնո), Մոնթրէալ, «Ազատամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կրեմլի), Օրէնճ Բաունթի, «Մասիս» (Սան Ֆրանցիսկո), «Սեւան» (Սան Տիէյո), «Արազ» (Ինլընդ Էմիլայթ), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Քրեմլինսկ Լոնդոն), «Սիփան» (Պրոպէնք), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Բրիք) «Չալախ» (Նորթ Հոլիվուդ), «Լոռի» (Մաքրամենթո), «Կիլիկիա» (Սանթա Բարթոլոմէ), «Հրազք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքակո, Ֆիլադելֆիա, Տիքոնոք, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ, Մերիլանդ Հոլիպ. **Հարաւային Ամերիկա:** Պուերտո Րիչ, Գորդոնյա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիդնի), «Արաքս» (Մելբուրն), «Կամք» (Սիդնի), «Նաւասարդ» (Սիդնի), «Արարատ» (Սիդնի).

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**Ե**րկու փարուան առցանց հանդիպումներէ ետք, 26-29 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 2019-2023 քառամեակի իր երկրորդ լիազումար նիստերը կատարեց Երեւանի մէջ, Հայաստան:

Քառօրեայ նիստերը ընդհանուր քննարկման ենթարկեցին միութեան գործունէութիւնը եւ հաստատեցին, որ հակառակ քորոնայի համաճարակին, Միջին Արեւելքի տագնապայի պայմաններուն եւ Արցախի ու Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումներուն, Հ.Մ.Ը.Մ. կը մնայ աշխոյժ եւ կենսունակ, հաւաքարիւճ նորահաս սերունդներու ազգային առողջ դասփարակութեան իր առաքելութեան:

Լիազումար նիստերուն յարուկ օրակարգով մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի Մեկուսի Ծրջաններու արեւնապետները եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ներկայացուցիչները, որոնց հետ առանձնաբար արծարծուեցան յիշեալ շրջաններու գործունէութեան զարգացման առնչուող հարցեր: Լիազումարը իր գնահատանքը արձանագրեց չորս շրջաններու նկատմամբ գործունէութեան համար նորանոր ծրագիրներ մշակելով յառաջիկայ երկամեակին համար:

Լիազումար նիստերը առիթ մը եղան արժեւորելու անցնող երկամեակի գլխաւոր աշխատանքները, որոնք առցանց ըլլալով հանդերձ կարողացան բաւ փայլ միութեան համահայկական գործունէութեան.- համա-



Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումար, «Արարտեան» կարգի դասփարակչական ծրագիր, մարզական Ա. սեմինար, մարզական միջ-ցամաքամասային հանդիպումներ, հեռակայ մարզախաղեր, սկաուտական JOTI բանակում եւ այլն:

Լիազումարը հանգամանօրէն քննեց Արցախեան պարերազմի, Լիբանանի տնտեսական տագնապի եւ Պէյրութի նաւահանգիստի պայթումի օրերուն միութեան աշխարհափարած մասնամիջոցներուն կատարած բարեսիրական աշխատանքները եւ շեշտեց, որ իբրեւ «կամաւոր բանակ» Հ.Մ.Ը.Մ. ամէնուր իր բովանդակ կարողականութիւնները ի սպաս կը դնէ հայութեան, Հայաստանին ու Արցախին:

Այս առիթով Կեդրոնական Վարչութիւնը խոնարհեցաւ յիշարակին դիմաց այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք Արցախեան վերջին պարերազմին գերագոյն զոհաբերութեան օրինակներ հանդիսացան:



Յարուկ օրակարգով լիազումարը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի վաղաժամ մահուան առիթով սրեղծրած ֆոնդին եւ նպատակայարմար նկատեց ֆոնդին եկամտութեան յարկացնել Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի բանակավայրի բարգաւաճման ծրագիրներուն եւ, առ այդ, միաշայնութեամբ որոշեց բանակավայրը կոչել «Հ.Մ.Ը.Մ.ի Գառնիկ Մկրտիչ-



**Հ.Յ.Գ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐԸ ԳՈՒՄԱՐՈՂ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**



Երեքշաբթի, 26 Հոկտեմբեր 2021-ի կեսօրին, Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրեան այցելեց Երեւանի մէջ իր լիազումար նիստերը կատարող Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ յարուկ նիստով մը ներկայացուց հայ կեանքի ներկայ մարտահրաւերները եւ Հ.Մ.Ը.Մ.Ի դերն ու առաքելութիւնը՝ այդ մարտահրաւերներու դիմագրուման մէջ:

Այցելութիւնը առիթ մը եղաւ քննարկելու Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհապարսժ մասնաճիւղերուն գործունէութիւնը յարկապէս եւ Հայաստանի, Արցախի եւ նախկին Խ. Միութեան երկիրներուն մէջ յարկապէս:

Այս առիթով, Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչը կէսօրուան ճաշի հիւրը եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան:

եան սկաուրական բանակավայր»։ Կեդրոնական Վարչութիւնը նաեւ ցաւով արշանագրեց իր կազմի անդամներէն եղբ. Արմանարօ Թորգոմեանի անակնկալ մահը Արժանքինի մէջ:

Լիազումարին առանձին նիստ մը յարկացուցեցաւ միութեան քարոզչական-փեղեկատրական մարզի արդիականացման ծրագիրներուն (կայքէջ, ընկերային ցանցեր, «Մարզիկ» պաշտօնաթերթ, Database): Քննարկուեցաւ նաեւ այս քառամեակին սրբեօրում քարոզչական յանձնախումբին բեղուն գործունէութիւնը, որուն նշանակալի նորութիւնը կը հանդիսանայ 6 եւ 13 Նոյեմբերին փեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական առցանց Ա. սեմինարը, որ առաջին անգամ ըլլալով պիտի համախմբէ միութեան այս մարզի պարասխանատուները եւ Հ.Մ.Ը.Մ.ական մասնագէտները:

Իբրեւ յառաջիկայի ծրագիրներ, Կեդրոնական Վարչութիւնը իր սկզբունքային համաշայնութիւնը յայտնեց 2022-ին միջ-դիւանական խորհրդաժողով եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր կատարելու, իսկ 2023-ին երիտասարդական համագումար եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում իրականացնելու:

Լիազումար նիստերու կողքին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը իր մասնակցութիւնը բերաւ նոյն օրերուն փեղի ունեցող Հ.Յ.Գ. ուղեկից միութիւններու Կեդրոնական Վարչութիւններու երկօրեայ առցանց խորհրդաժողովին: Կեդրոնական Վարչութիւնը այցելեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արմաւիրի նորակառոյց «Էմիլ Մաղարեան» կեդրոն եւ ոգեկոչական շեռնարկներու շարքով մը՝ Հրազդանի, Պոռչեանի, Բիւրականի եւ Եռաբլուրի մէջ նշեց Արցախեան պատերազմի նահապահները ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ական անձնագոհները յարկապէս:

Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Բիւրականի «Գառնիկ Սկրպիչեան սկաուրական բանակավայր»-ին անուանակոչութեան արարողութիւնը:

Կ'արժէ նշել, որ Երեւանի մէջ իր լիազումար նիստերը կատարող Կեդրոնական Վարչութեան այցելեց Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրեան եւ խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ միութիւնն ու հայութիւնը յուզող համահայկական նիւթերու շուրջ:

4 Նոյեմբեր 2021

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**









**Հ.Մ.Ը.Մ. ՈԳԵԿՈՉԵՑ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ  
ԶՈՀՈՒԱԾ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՓԱՌՔԻՆ  
ԱՐԺԱՆԱՑԱԾ ՆՈՒԻՐԵԱՎՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ**

**«ԱՆՄԱՀ ԽԻԶԱԽՆԵՐ»ՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄ ԲԻԲԻԱԿԱՆԻ ՄԷՋ,  
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՌԱԲԼՈՒՐԻ ՄԷՋ, ՅԱՐԳԱՆՔԻ  
ԽՈՆԱՐՀՈՒՄ ՊՈՕՇԵԱՆԻ ԵՒ ՀՐԱԶԴԵԱՆԻ ՄԷՋ**







Հոկտեմբեր 2021-ի վերջին շաբաթավերջը իրայայտուկ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար, որ շեռնարկներու շարքով մը յարգանքի իր փորձը ընծայեց Արցախեան վերջին պատերազմին զոհուած նուիրեալներուն ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ական նահապահներուն յարկապէս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաշեռնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան կազմակերպութեամբ յիշարակելի չորս նախաշեռնութիւն իրականացնելով Բիւրականի, Եռաբլուրի, Պոռչեանի եւ Հրազդանի մէջ:

**«ԱՆՄԱՀ ԽԻՉԱԽՆԵՐՈՒ» ՅՈՒՇԱՐՉԱՆԻ ԲԱՑՈՒՄ**


Ոգեկոչական ձեռնարկներուն գլխաւորը տեղի ունեցաւ Շաբաթ, 30 Հոկտեմբերի կէսօրուան ժամը 12-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի բանակավայրին մէջ, քանի մը ամիս առաջ ստեղծուած «Խիզախներու պուրակ»ին մէջ կանգնեցնելով անմահ խիզախներու յիշատակին յուշարձան (գործ՝ Հայկ Մարկոսեանի), նուիրուած «Կամաւոր բանակ»ի Արցախեան առաջին եւ երկրորդ պատերազմներու նահատակներուն: Յուշարձանին բարերարութիւնը ստանձնեցին Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն իտմբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Յուշարձանին բացման հանդիսու-

թեան ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի անդամ Դաւիթ Իշխանեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ եղբ. Բագրատ Եսալեան, «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչներ, իրենց լիազուգումար նիստերը Երեւանի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, նոյն նիստերուն հրաւիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի, Թիֆլիսի եւ Արցախի մասնաճիւղերու ատենապետներ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, սկաուտներ եւ նահատակներու ծնողներ:







Ձեռնարկին սկիզբը ներկաները վայրկեան մը լուովեամբ յարգեցին Արցախեան պատերազմի բոլոր նահատակներուն յիշատակը: Ապա, առաջին խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան: Ան ըսաւ, որ մեր նահատակները այսօր այստեղ չեն, բայց անոնք ամէնուր են եւ աւելի քան երբեք անոնք մեր շարքերուն մէջ յաւերժական ներկայութիւն են:

Այս յուշարձանը,- նկատել տուաւ քոյրը,- այսուհետեւ միշտ եւ անընդհատ բանակումի մասնակցող պատանիներուն պիտի յիշեցնէ կամաւոր բանակի անմահ հերոսները: Անոնց հայրենասիրութիւնը, հայրենիքը կեանքի գնով

պաշտպանելու, անոնց կիսատ մնացած երազանքներն ու նպատակները: Ամէն անգամ այս ծառուղիի եղեւիններու քովէն դէպի յուշարձան քալելով մեր պատանիները աւելի ու աւելի պիտի զգաստանան, գիտակցելով հայրենիքին գինը եւ կորսուածը վերադարձնելու յանձնառութեամբ անոնք աւելի վստահութեամբ պիտի նային Արարատին, շէտեց ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Դաւիթ Յակոբեան: Ան ըսաւ, որ այստեղ, Բիրականի այս բանակայրին մէջ, արդէն երեք տասնամեակէ ի վեր կը կոփուի Հ.Մ.Ը.Մ.ական պատանիին եւ երիտասարդին հայրենասիրութիւնը:

Եղբայրը ընդգծեց, որ հայրենասիրութիւնը միայն հայրենիքը սիրել չէ, որովհետեւ հայրենիքը միայն սիրելով չես կրնար կառուցել ու զարգացնել, չես կրնար պաշտպանել: Հայրենիքի հանդէպ անասման սիրոյ պէտք է ընկերայն ազգային խոր դաստիարակութիւնը, անվերապահ կարգապահութիւնը, գիտելիքները ճշգրիտ տնօրինելու ընդունակութիւնը, աշխատասիրութիւնը եւ նպատակասլացութիւնը:

Նորակերտ յուշարձանին մասին խօսելով, եղբ. Յակոբեան յայտնեց, որ այս յուշարձանը պիտի չխորհրդանշէ մեր սարսափելի կորուստներն ու մեր սոս-





կալի ցաւը: Հակառակը, ան պիտի խորհրդանշէ մեր ունեցած պարտքը՝ մեր զոհուած եղբայրներուն, ազատ Հայաստան ու Արցախ, պաշտպանուած ու ամուր Հայրենիք ունենալու անոնց երազը իրագործելու մեր ձգտումը: Այս յուշարձանի խոհուն հայեացքին ներքեւ ազգային-հայրենասիրական ոգիով պիտի դաստիարակուին նորանոր սերունդներ, որոնք իրականութիւն պիտի դարձնեն այդ երազը: Պիտի ազատագրեն մեր կորսնցուցած հայրենիքը եւ պիտի կառուցեն իսկապէս ազատ եւ արդար Հայաստան:

Այնուհետեւ խօսք առաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ ըսաւ. փա՛ռք այս տղոց, որոնք իրենց յիշատակով, իրենց գործով անգամ մը եւս ցոյց տուին, որ իրենք պատրաստ են իրենց քրտինքն ու արիւնը խառնելու հայ հողին եւ վերջիվերջոյ իրենց յաւիտենական հանգիստն ու անդորրը գտնելու հայրենի այս հողին մէջ: Մենք կը հաւատանք, որ իրենց օրինակը ներշնչող պիտի ըլլայ բոլոր սերունդներուն:

Տէր Խաչատուրեան յայտնեց, որ մենք կարող ենք կերտել մեծագոյն յաղթանակներ, ինչպէս 1980-ական թուականներէն մինչեւ 1994 կերտեցինք եւ այո կարող ենք նաեւ ունենալ պարտութիւններ, ինչպէս այս վերջին պատերազմը, բայց այդ պարտութիւնները լոկ ժամանակաւոր են: Այդ պարտութիւնները ճակատամարտի մը պարտութիւնն

են, որովհետեւ պատերազմը կը շարունակուի, որովհետեւ հայ ժողովուրդը ունի իր ներքին ուժականութիւնը, հայ ժողովուրդը այս երիտասարդներու ճամբով անգամ մը եւս փաստած է, որ ինք պատրաստ է ոտքի կանգնելու, պատրաստ է յարատեւ պայքարելու՝ մինչեւ որ իրականացնենք մեր մեծագոյն երազը, մինչեւ որ կերտենք մեր երազած ամբողջական հայրենիքը, մինչեւ որ հայ ժողովուրդը ազատօրէն ապրի, շնչէ, ստեղծագործէ իր հայրենիքի հողին վրայ:

Իր խօսքը նահատակներու ընտանեկան պարագաներուն ուղղելով, Յակոբ Տէր Խաչատուրեան հաստատեց. քաջ համոզուած եղէք, որ այս կորուստ չէ, իրենց կեանքի վատնում չէ, որովհետեւ իրենց ճամբով կ'ապրի հայրենիքը: Իրենց ճամբով մենք շարունակաբար կը գօտեպնուինք եւ իրենց ճամբով միշտ կը վերանորոգենք մեր ուխտը՝ ամէն գնով պայքարելու մեր մեծագոյն երազներու եւ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսլականին իրականացման համար:

Խօսքերէն ետք տեղի ունեցաւ յուշարձանի օրհնութիւն՝ ձեռամբ Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վրթանէս Քհնյ. Պաղարեանի:

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԵՌԱԲԼՈՒՐԻ ՄԷՋ**

Կիրակի, 31 Հոկտեմբերի կէսօրին, ոգեկոչական նշումին ժամադրաւայրը դար-

ձաւ հայոց նորագոյն սրբաւայրը՝ Եռաբլուրը, որուն մատրան մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, ապա՝ ներկաները, առաջնորդութեամբ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի, նախ այցելեցին անյայտ գինուորի յուշակոթող եւ յարգանքի ու մեծարանքի ծաղկեպսակ մը զետեղեցին Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով: Ապա, դրօշակակիր սկաուտներու ուղեկցութեամբ, անոնք այցելեցին Արցախեան առաջին եւ երկրորդ պատերազմներուն զոհուած Հ.Մ.Ը.Մ.ականներու շիրիմները, ծաղիկներ









մատուցեցին անոնց անթաուամ յիշատակին եւ գլուխ խոնարհեցին գերագոյն զոհաբերութեան անոնց վսեմ արարքին դիմաց:

Շիրիմներու այցելութեան աւարտին, ներկաները հաւաքուեցան Եռաբլուրի մատրան հանդիպակաց տարածքը եւ միասնաբար հնչեցուցին Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը:

**ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՊՌՕՇԵԱՆԻ «ԶՕՐԱՅ» ՊԱՆԹԷՈՆ...**

Բիւրականի եւ Եռաբլուրի ոգեկոչումներու նախօրեակին, Շաբաթ, 30 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան եւ սկստական խումբերու բազմաճամ պատուիրակութիւն մը այցելեց Պոսշեանի «Զօրաց» պանթէոն:

Պանթէոնին մէջ, Հ.Մ.Ը.Մ. յարգանքի իր տուրքը ընծայեց Արցախեան վերջին պատերազմի Վարանգաթաղի հերոսներու շիրիմներուն եւ անոնց կողքին հանգչող Պետոյի եւ Հրաչ Մուրատեանի գերեզմաններուն:



Այս առիթով կատարուեցաւ ծաղկեպսակի գետեղում, ապա՝ Հ.Մ.Ը.Մ. ական նահատակ եղբ. Գէորգ Հաճեանի շիրիմին շուրջ բոլորուած, Պոսշեանի համայնքի այցելու հոգեւոր հովիւ Յովսէփ Քհնյ. Ալեքսանեան հոգեհանգստեան պաշտօն կատարեց բոլոր նահատակներու յիշատակին եւ այս առիթով արտասանեց գօտեպնդիչ խօսք մը, նշե-

լով, որ եթէ մահը անխուսափելի է՝ ուրեմն թող ըլլայ անմահութեամբ: Եթէ մահը իւրաքանչիւրիս կեանքի անբաժանելի մէկ մասնիկն է՝ ուրեմն այդ մահը հերոսական մահ թող ըլլայ: Յովսէփ քահանայ նկատել տուաւ, որ աշխարհի վրայ չկան պետութիւններ, երկիրներ ու ժողովուրդներ, որոնք իրենց հողը պահելու եւ պաշտպանելու







Համար արիւն չեն թափած, որովհետեւ հողը, սրբութիւնը, սրբատեղին կը պահպանուին կեանքի գնով եւ այս կեանքի մէջ ամէն բան ունի իր արժէքը, իսկ հայրենիքի արժէքը հայրենիքի մէջ բնակուող կամ այդ հայրենիքի գաւակ համարուող իրաքանչիւրին կեանքն է: Պէտք է իւրաքանչիւր օր ապրիլ ի փառս հայրենիքի: Մեզի հասնող հարուածները մեզի պէտք

է սորվեցնեն, թէ մենք իրաւունք չունինք հայրենիքը ձգելու բախտի քմահաճոյքին, որովհետեւ եթէ հայրենիքէն կը վերցնենք անխնայ, հայրենիքին պէտք է տանք թանկագինը՝ մեր եղբայրներու, մեր գաւակներու կեանքերը: Մեր պարտքն է մեր նահատակներու անաւարտ գործը աւարտին հասցնել: Տայ Աստուած, որ այդ իրականութիւն դառնայ եւ մեր նահատակ եղբայրները՝ ազգի գաւակները խաղաղութեամբ ննջեն, իսկ մենք ապրող, յիշող, յիշատակող եւ իրենց գործը շարունակողները ըլլանք, եզրափակեց քահանայ հայրը:

Յաջորդեց նահատակներու շիրմներու ծաղկեմատոյց, որմէ ետք ներկաները պանթէոնին հրաժեշտ տուին «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով:



**ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ  
ՀԱՅՈՑ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ  
ԱՆՄԵՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ**



Կիրակի, 24 Հոկտեմբեր 2021-ի առաւօտեան, Եռաբլուր այցելութեան նախօրեակին, Հ.Մ.Բ.ի Կեդրոնական Վարչութիւնը յարգանքի իր փութքը մատուցեց Հայոց Յեղասպանութեան անմեռ նահապարակներու յիշարակին, Ծիծեռնակաբերդի յուշամահալիք այցելութեամբ եւ Հ.Մ.Բ.ի կողմէ յարուց ծաղիկապսակի զերեկումով:

Կեդրոնական Վարչութեան ընկերացան Հ.Մ.Բ.-Հ.Ա.Ս.Կ.ի արեւնապետ քոյր Սանգրա Վարդանեան եւ վարչութեան անդամ քոյր Շուշան Մելիքեան:





**... ԵՒ ՀՐԱՉԴԱՆԻ  
ՆԱՀԱՏԱԿԱՑ ՊԱՆԹԻՈՆ**  
«Զօրաց» պանթեոնն այցելութիւնը երեք օրով կանխեց Հրազդանի նահատակաց պանթեոնն այցելութիւնը, Զո-

րեքշաբթի, 27 Հոկտեմբերին: Այցելութիւնը կը զուգարդիպէր ճիշդ տարի մը առաջ, 27 Հոկտեմբեր 2020-ին, Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Հրազդանի մասնաճիւղի անդամ եղբ. Արտակ Մարտիրոսեանի նահատակութեան առաջին տարելիցին: Եղբ. Արտակ իր յաւիտենական հանգիստը գտած էր հայրենի գիւղին նահատակաց պանթեոնին մէջ:



Հ.Մ.-Լ.Մ-ի պատուիրակութիւնը Հրազդանի գերեզմանատուն հասնելով, ծաղկեպսակ մը գետեղեց եղբայր Արտակի շիրիմին, իր ցաւակցութիւնները փոխանցեց նահատակին հօր՝ Արայիկ Մարտիրոսեանին, ապա «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ հրաժեշտ տուաւ 19-ամեայ յաւերժի ճամբորդին:

Գերեզմանատունէն մեկնելէ առաջ, Հ.Մ.-Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան ջրբաժնի կատարեց շրջանի նահատակներու ծառուղիին վրայ եղբայր Արտակին անունով ցանուած ծառին:





# ԱՅՍ ՏՂՈՅ ՕՐԻՆԱԿԸ ՆԵՐՇՆՉՈՂ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԲՈՒՈՐ ՄԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «ԱՆՄԱՀ ԽԻԶԱԽՆԵՐՈՒ» ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ, ԲԻՒՐԱԿԱՆ)

**Մ**ենք միայն ու միայն կրնանք մեր գլուխները խոնարհել՝ տեսնելու համար, թէ ի՞նչպէս հայու առասպելական վճռականութիւնն ու ոգին կը վերածնին այս երիտասարդներուն շնորհիւ: Անցնող 150 տարիներուն, մենք շարունակական պայքարի մէջ եղած ենք մեր գոյութիւնը, մեր պատիւը, մեր հայրենիքը պաշտպանելու համար: Ֆետայական շրջանի ոգին այսօր զարթնած է, եւ այդ զարթոնքին լաւագոյն ապացոյցներն են այն հերոսները, որոնց յիշատակը մենք կը նշենք այսօր:

Ես գիտեմ, թէ որքան մեծ է Հ.Մ.Ը.Մ-ի աւանդը հայ ժողովուրդի դաստիարակութեան մէջ: Ես ալ Հ.Մ.Ը.Մ-ի գաւակ եմ: Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով ունեցած եմ ազգային դաստիարակութիւն, ինչ որ առաջնորդած է իմ առաջին քայլերս: Ահա այդ դաստիարակութեան արդիւնք է այն առաւելագոյն զոհողութիւնը, որ հայ երիտասարդ է մը կ'ակնալուի: Առաւելագոյն զոհողութիւնը, որ խօսք չէ մնացած, իսկ այս հերոսներուն համար, որոնց անունները յիշուած են այստեղ, այդ խօսքը վերածուած է գործի: Ես միայն ու միայն կը հպարտանամ, որ իրենց ճամբով մենք անգամ մը եւս հասկցանք, թէ ի՞նչ ըսել է զերագոյն զոհողութիւն: Մենք անգամ մը եւս հասկցանք, որ ինչպէս ամէն Դաշնակցական իր երդումին մէջ կ'ըսէ՝ որ մենք պատրաստ ենք ամէն գնով ծառայելու Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին եւ ի հարկին, եթէ պէտք ըլլայ նաեւ կեանքի գնով:

Փա՛ռք այս տղոց, որ իրենց յիշատակով, իրենց գործով անգամ մը եւս ցոյց տուին, որ իրենք պատրաստ են իրենց քրտինքն ու արիւնը խառնելու հայ հողին եւ վերջիվերջոյ իրենց յաւիտենական հանգիստն ու անդորրը գտնելու հայրենի հողին մէջ:

Մենք կը հաւատանք, որ իրենց օրինակը ներշնչող պիտի ըլլայ բոլոր սերունդներուն, մանաւանդ այն երիտասարդներուն եւ պատանիներուն, որոնք այստեղ են եւ բոլոր անոնց, որոնք աշխարհով մէջ կը հետեւին այս արարողութեան եւ անոր ընդմէջէն անգամ մը եւս կը ներշնչուին, թէ այդ մենք պատրաստ ենք ամէն գնով ծառայելու հայրենիքին: Այո, մենք կարող ենք կերտել մեծագոյն յաղթանակներ, ինչպէս



1980-ական թուականներէն մինչեւ 1994, եւ այդ կարող ենք նաեւ ունենալ պարտութիւններ, ինչպէս այս վերջին պատերազմը, բայց այդ պարտութիւնները լոկ ժամանակաւոր են: Այդ պարտութիւնները ճակատամարտի մը պարտութիւնն են, որովհետեւ պատերազմը կը շարունակուի, որովհետեւ հայ ժողովուրդը ունի իր ներքին ուժականութիւնը, հայ ժողովուրդը այս երիտասարդներու ճամբով անգամ մը եւս փաստած է, որ ինք պատրաստ է ոտքի կանգնելու, պատրաստ է յարատեւ պայքարելու՝ մինչեւ որ իրականացնենք մեր մեծագոյն երազը, մինչեւ որ կերտենք մեր երազած ամբողջական հայրենիքը, մինչեւ որ հայ ժողովուրդը ազատօրէն ապրի, շնչէ, ստեղծագործէ իր հայրենի հողին վրայ:

Քաջ համոզուած եղէք, որ սա կորուստ չէ: Իրենց կեանքի վատնում չէ, որովհետեւ իրենց ճամբով հայրենիքը կ'ապրի: Իրենց ճամբով մենք շարունակաբար կը գօտեպնուինք եւ իրենց ճամբով միշտ կը վերանորոգենք մեր ուխտը՝ ամէն գնով պայքարելու մեր մեծագոյն երազներու եւ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսլականին իրականացման համար:

Յաւե՛րժ փառք այս սերունդին եւ այդ սերունդի լաւագոյն ներկայացուցիչներուն, որոնց յիշատակը կը նշենք այսօր:





# ԱՅՍ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԽՈՀՈՒՆ ՀԱՅԵԱՑՔԻ ՆԵՐՔՈՅ ԱՋԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱՄԻՐԱԿԱՆ ՈԳՈՎ ՊԻՏԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԵՆ ՆՈՐԱՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԴԱԻԻԹ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԽՕՍԳԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «ԱՆՄԱՀ ԽԻԶԱԽՆԵՐՈՒ» ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ, ԲԻԻՐԱԿԱՆ)

**Ա**յստեղ, Բիւրականի այս բանակայրում արդէն երեք տասնամեակ կոփուում է Հ.Մ.Ը.Մ.ական հայ պատանու ու երիտասարդի հայրենասիրութիւնը:

Հայրենասիրութիւնը միայն հայրենիքը սիրելը չէ, որովհետեւ հայրենիքը միայն սիրելով չես կարող կառուցել ու զարգացնել, չես կարող պաշտպանել զայն:

Հայրենիքի հանդէպ անսահման սէրը պէտք է ուղեկցուի ազգային խորը դաստիարակութեամբ, անվերապահ կարգապահութեամբ, գիտելիքները ճշգրիտ տնօրինելու ընդունակութեամբ, աշխատասիրութեամբ ու նպատակասլացութեամբ:

Ահա սա է, որ տարիներ շարունակ փոխանցուել է Հ.Մ.Ը.Մ.ական պատանիներին ու երիտասարդներին այստեղ՝ մեր հայրենիքի այս չքնադ անկիւնում:

Իսկ մեր հայրենիքը, ցաւօք, իր պատմութեան մէջ հերթական անգամ ծանր ժամանակներ է ապրում: Ուղիղ մէկ տարի առաջ, այս օրերին, մեր հայրենիքում մոլեգնում էր հերթական պատերազմը, որն աւա՛ղ մենք տանուլ տուեցինք: Տանուլ տուեցինք ի հեճուկս նրա, որ մեր գինուորները կուռեցին քաջաբար, պայքարեցին մինչեւ վերջ ու նրանցից շատերն ընկան:

Այս կուռուղների մէջ էին բազմաթիւ հայորդիներ, ովքեր



տարբեր տարիների եղել են այս բանակայրում, ստացել գիտելիքներ ու հմտութիւններ, վարժել իրենց միտքն ու մարմինը: Ու պատրաստ եղել ցանկացած պահի ելլել հայրենիքի պաշտպանութեան: Ու պատպաստ եղել զոհուել յանուն հայրենիքի ազատութեան:

Եկէք խոնարհուենք մեր քաջերի վիշատակի առջեւ: Այս խոնարհման մի դրսեւորում է այս յուշարձանը, որը կեանքի է կոչուել Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգների շրջանի մի խումբ եղբայրների բարերարութեամբ:

Բայց այս յուշարձանը, որն անշուշտ մեր խոնարհումն է մեր հերոսների առջեւ, չպիտի խորհրդանշի մեր սարսափելի կորուստներն ու մեր սոսկալի ցաւը:

Հակառակը, այն պիտի խորհրդանշի մեր պարտքը մեր ընկած եղբայրների առջեւ, ազատ Հայաստան ու Արցախ, պաշտպանուած ու ամուր հայրենիք ունենալու նրանց երազանքը ի կատար ածելու մեր ձգտումը:

Այս յուշարձանի խոհուն հայեացքի ներքոյ ազգային-հայրենասիրական ոգով պիտի դաստիարակուեն նորանոր սերունդներ, որոնք էլ իրականութիւն պիտի դարձնեն այդ երազանքը: Պիտի ազատագրեն մեր կորցրած հայրենիքը եւ կուռուցեն յիւրաւի ազատ եւ արդար Հայաստան:





# ԱՅՍ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՄԻՇՏ ԵՒ ԱՆԸՆԴՀԱՏ ՅԻՇԵՑՆԵԼՈՒ Է ԿԱՄԱԲՈՐ ԲԱՆԱԿԻ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՔՈՅՐ ՍԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «ԱՆՄԱՀ ԽԻՉԱԽՆԵՐՈՒ» ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ)

Յարգելի հիւրեր,  
Արդէն հարազատ դարձած իմ շատ սիրելի տղաների ընտանիքների անդամներ,  
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր մեր բոլորի համար տարբեր յոյզերի միաձուլման օրն է: Գարնանը, երբ մենք էլի հանդիպեցինք այստեղ, տեղադրելու մեր անմահ խիզախների անուանական եղեւնիները, ծնողներից մէկն ինձ ասեց. տղաս մէկն էր ու միակը իմ համար, բայց այսօր ինքն ամէնուր է, ու այս եղեւնու տեղադրմամբ այլեւս ընդմիշտ նաեւ իր ամենասիրելի վայրում, Բիւրակահանի բանակավայրում...

Այո՛, մեր տղաները ամէնուր են եւ, ինչպէս միշտ նշում ենք, իրենք առաւել քան երբեւէ մեր շարքերում են ու յաւերժ ներկայ...

Այսօր խիզախների ծառուղում բացումը կատարեցինք յուշարձանի, որը նուիրուած է ոչ միայն Հ.Մ.Ը.Մ.ական անմահ կամաւորներին:

Անցեալ տարի, այս փամանակ, հէնց այստեղ, որտեղ մենք կանգնած ենք, սկառտները տեղադրել էին վրաններ, բայց այս անգամ ինչքան էլ տարօրինակ էր, որ իրենց խմբերի համար ու ոչ սկառտական ուրախ բանակում անցկացնելու



նպատակով: Այստեղ իրենց մարզումներն էին անցկացնում անձնուէր կամաւորներ, պատերազմի մեկնելուց առաջ:

Այս յուշարձանը, այսուհետեւ, այստեղ միշտ եւ անընդհատ, բանակման բարձրացած պատանիներին յիշեցնելու է կամաւոր բանակի անմահ հերոսների մասին: Նրանց հայրենասիրութեան, հայրենիքը կեանքի գնով պաշտպանելու, կիսատ մնացած երազանքների ու նպատակների մասին:

Այս ծառուղու եղեւնիների կողքով, ամէն անգամ դէպի յուշարձան քայլելով նրանք աւելի ու աւելի են զգաստանալու, գիտակցելով հայրենիքի գինը եւ կորցրածը վերադարձնելու յանձնառութեամբ վրատահ նայելու են Արարատին:

Յաւերժ փառք ձեզ տղաներ, իմ անփոխարինելի եղբայրներ:





# ՉԵՐ ԿԻՍԱՏ ՉԳԱԾ ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾԸ ԱՆԱԲԱՐՏ ՊԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ





**Մարտ Բեռնի Երեւան**

**Հ**ոկտեմբեր 2021-ի վերջին շաբաթավերջը յատկանշական եւ, ինչո՞ւ չէ նաեւ, պատմական եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին համար: Շաբաթ, 30 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Բիւրականի բանակավայրի նահատակներու պուրակին մէջ, բացումը կատարուեցաւ Արցախի ազատագրական մարտերուն զոհուած Հ.Մ.Ը.Մ-ական ազատամարտիկներու յիշատակը անմահացնող յուշարձանին:

Նոյն օրը, յետմիջօրէին, յատուկ արարողութեամբ նոյն բանակավայրը պաշտօնապէս անուանակոչուեցաւ «Հ.Մ.Ը.Մ-ի Գառնիկ Մկրտիչեան Սկառուսական Բանակավայր», վաստակաշատ ա՛յն Հ.Մ.Ը.Մ-ականին անունով, որ ամբողջ կեանք մը տուաւ իր սիրելի կազմակերպութեան վերելքին համար:

Իսկ Կիրակի, 31 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի ներկայացուցիչները այցելեցին Եւաբլուր եւ մասնակից դարձան Արցախի 44-օրեայ պատերազմին զոհուած ազատամարտիկներու եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ական նահատակներու հոգիներու խաղաղութեան համար նախաձեռնուած հոգեհանգստեան պաշտօնին: Յարգանքի իրենց տուրքը յայտնելու համար Եւաբլուր փութացած էին Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կազմը, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան փոխատենապետ եւ ներկայիս ատենապետի



պաշտօն վարող Սիրվա Եուզպաշեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը, մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ եւ արի-արեւոյշներ, այլ երկիրներէ Հ.Մ.Ը.Մ-ական քոյր-եղբայրներ եւ բազմաթիւ հիւրեր:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ պատուիրակութիւնը, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշներու եւ



արի-արեւոյշներու առաջնորդութեամբ, առաջին հերթին իր խոնարհումը կատարեց անձանօթ զինուորի յուշարձանին, ինչպէս նաեւ ծաղկեպսակ մը զետեղեց անոր առջեւ, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեանի ձեռամբ:

Ապա, պատուիրակութեան անդամները այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նահատակ անդամ եղբ. Վարդան Բախչեանի շիրիմը, ծաղիկներ դրին անոր վրայ եւ իրենց ցաւակցու-







Թիւնները յայտնեցին որդեկորոյս մօր ու հարազատներուն: Այցելութեան յաջորդ կայանը եղաւ լիբանանահայ նահատակ եղբ. Վիգէն Զաքարեանի շիրիմը, որուն վրայ եւս ծաղիկներ դրին, ծուռնկ մը աղօթք կատարեցին եւ շարունակեցին իրենց հոգիին պարտքը կատարել մէկ առ մէկ այցելելով այն բոլոր շիրիմները, ուր կը ննջեն Հ.Մ.Ը.Մ.ական նահատակներ, ծաղիկներ դրին անոնց շիրիմներուն վրայ, խուռնկ վառեցին եւ մխիթարեցին անոնց հարազատները:

Սրտաճմլիկ երեւոյթ մը, որուն ականատես ըլլալով դժուար



է չյուզուիլ, չընդվզիլ, չընդդիմանալ ու նաեւ չչալ: Մխիթարական խօսքեր չկան ի տես որդեկորոյս մօր ողբին, իր յուզմունքը գսպող սակայն ներքնապէս խեղդուող լուսկեաց հօր, բարձրաձայն լացող քրոջ ու եղբօր, կնոջ կամ հարազատին:

Ահա անընդունեթի իրողութիւն մը, որուն որքան ալ դժուար է հաշտուիլ, սակայն միաժամանակ նաեւ կարելի է մխիթարուիլ, որ այս հերոսներու պայքարն ու քաջաբար նահատակութիւնը յստակ նպատակ ունէ՛ր՝ պաշտպանել հայրենիքը, հայրենի սահմանները անվտանգ պահել, որպէսզի հայ ժողովուրդը ապահով ու հանգիստ ապրի:

Անոնք այս հաւատքով ռազմաճակատ մեկնեցան եւ կատարեցին իրենց ազգային պարտականութիւնը եւ անմահացան: Այո, անոնք ինկան քաջաբար, հայրենիքը դասելով ամէն բանէ վեր՝ ընտանիք, ծնողք ու զաւակ: Անոնք ընտանեկան, ազգային ու ծնողական շատ պարտականութիւններ կիսատ ձգեցին եւ անմահացան յանուն մեր Սուրբ հողին:

Սակայն վստահ եղէ՛ք մեր քաջ հերոսներ, ձեր կիսատ ձգած սրբազան գործը անաւարտ պիտի չմնայ: Ան պիտի շարունակուի ձեր օրինակին հետեւող նոր սերունդներով: Որքան ալ չարամիտներ ինչ-ինչ նպատակներով փորձեն մոլորեցնել հայ ժողովուրդը, պիտի չյաջողին, որովհետեւ պահանջատէր հայ ժողովուրդը գիտէ իր արդար դատը պաշտպանել, որովհետեւ

մեր հերոսածին մայրերը գիտեն ձեր թափած արեան արժէքը, որովհետեւ վերջ ի վերջոյ արդարութիւնը պիտի յաղթէ:

Ննջեցէ՛ք խաղաղ, սիրելի եղբայրներ ու ընկերներ, ձեր թափած արիւնը ապարդիւն չէ: Դուք մեր սրբտերուն մէջ էք եւ մենք «Ձեզ բացակայ չենք ղնի»:







## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՐՄԱԲԻՐԻ «ԷՄԻԼ ՄԱՂԱՔԵԱՆ» ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆ

**Ո**ւրբաթ, 29 Հոկտեմբեր 2021-ի կէսօրին, իր լիազուժար նիստերը Երեւանի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը այցելեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Արմաւիրի «Էմիլ Մաղաքեան» կեդրոն: Կեդրոնին մէջ, Կեդրոնական Վարչութիւնը դիմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեանի եւ վարչութեան անդամ եղբ. Պերճ Թիւֆէնկեանի կողմէ: Այցելութեան պահուն, կեդրոնին մէջ խոսք մը աստիճանաւորներ կը կատարէին սկստական Wood Badge-ի դասընթացը:



Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան բարի գալուստի խօսք արտասանեց քոյր Սանտրա Վարդանեան, մինչ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան իր սրտի խօսքը փոխանցեց ներկայ սկստաներուն:



Ապա, Կեդրոնական Վարչութեան անդամները շրջեցան կեդրոնին զանազան բաժինները եւ ծանօթացան անոր ակմբային յարմարութիւններուն եւ միութեան կողմէն իրականացուող ծրագրերուն:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԲԻՒՐԱԿԱՆԻ «ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ» ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

**Շ**աբաթ, 30 Հոկտեմբեր 2021-ի կէսօրէ ետք ժամը 1.30-ին, Բիւրականի մէջ, Հայաստան, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի բանակավայրի անուանակոչութեան արարողութիւն, ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան կազմակերպութեամբ իրականացած այս արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի անդամ Դաւիթ Իշխանեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ եղբ. Բազրատ Եսայ-

եան, իրենց լիազուժար նիստերը Երեւանի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներ, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ընտանիքի անդամներ, հարազատներ ու բարեկամներ:

Արարողութեան բացումը կատարելով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչ քոյր Անուշիկ Փանոսեան նկատել տուաւ, որ եղբ. Գառնիկ Մկրտիչեան տասնամեակներ շարունակ նպաստած է հայ երիտասարդութեան ազգային դաստիարակութեան: Իբրեւ հայկական մարզական եւ սկստական մեծագոյն կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ,



ան աշխոյժ դերակատարութիւն ունեցած է Հայաստանի եւ Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի կառուցի հիմնադրման եւ գործունէութեան ծաւալման մէջ: Անուրանալի է անոր դերակատարութիւնը յատկապէս Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի նախաձեռնութիւններու իրականացման մէջ:

Քոյր Փանոսեան շեշտեց, որ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մահով սփիւռքահայութիւնը եւ համայն հայութիւնը կորսնցուց ազգային-միութենական վաստակաւոր գործիչ մը, որուն հասարակական գործունէութիւնը հիմք հանդիսացաւ մշտապէս վերարժեւորելու ազգային ու պետական մեր արժէքները:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան եւ յայտնեց, որ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի վաղաժամ մահուան առիթով, Կեդրոնական Վարչութիւնը եղբ. Գառնիկի ընտանիքին հետ համախորհուրդ որոշեց հիմնել Փոնտ մը՝ միութենական օգտակար եւ մնայուն ծրագիրով մը յաւերժացնելու համար անոր յիշատակը եւ միութենական ժառանգը: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.Ի Բիւրականի բանակավայրը եղբ. Գառնիկ Մկրտիչեան անուանելով եւ այդ ֆոնտը յատկացնելով բանակավայ-







րի բարգաւաճման ծրագիրներուն, կարելի պիտի ըլլայ իրականացնել ո՛չ միայն բանակավայրին արդիականացումը, այլեւ՝ նորութիւններու յաւելումը անոր կառոյցին վրայ:

Եղբ. Նաճարեան հաստատեց, որ այս որոշումը կը բխի այն նկատողութենէն, որ եղբ. Գառնիկ մեծ ներդրում ունեցած է բանակումի շինարարութեան եւ ընդարձակման մէջ, նաեւ՝ բանակավայրը լաւագոյն տեղն է Հ.Մ.Ը.Մ.ական մարդուժի պատրաստութեան, որուն ամբօրէն կը հաւատար ան, հաւատարով որ այս բանակավայրը երկրորդ տունը կը հանդիսանայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտի: Բանակավայր մը, ուր մեր նոր սերունդի զաւակները իրենց ազգային ինքնութիւնը կը կերտեն Արագածի լանջերուն, իրենց հայեացքները ուղղելով դէպի սրբազան լեւորան գագաթը, որ կը մարմնաւորէ եղբ. Գառնիկի միութենական-զաղափարական համոզումը եւ կազմակերպական աշխատանքին առանցքը:

Այս առիթով, Մկրտիչեան ընտանիքին անունով խօսք առաւ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի զաւակը՝ եղբ. Նժդէհ Մկրտիչեանը, որ նշեց, թէ ինը ամիսներ ետք տակաւին դժուար եւ անհնար է ընդունիլ անոր բացակայութիւնը մեր կեանք-

քէն ներս: Եւ այսօր ա՛լ աւելի դժուար է գտնուիլ հոս, շրջապատուած Հ.Մ.Ը.Մ.ականներով եւ զգալ, նկատել անոր բացակայութիւնը եւ իր մասին խօսիլ անցեալ եղանակով: Ծանր է իրականութիւնը, իսկ աւելի ծանր՝ անոր համակերպիլը:

Իր հօր մասին վկայութիւններ փոխանցելով, եղբ. Նժդէհ Մկրտիչեան յայտնեց, որ կարելի չէ չյիշել եղբ. Գառնիկին մշտական ներկայութիւնը այս բանակավայրէն ներս, առնուազն վերջին 10 տարիներուն: Կարելի չէ չյիշել այս բանակավայրին ընդարձակման աշխատանքները, 100-ամեակի ձեռնարկները, բանակումը...: Կարելի չէ չյիշել ընդհանրապէս անոր կապուածութիւնը այս միութեան, անոր մտահոգութիւնները, ծրագիրները, միտքերը, աշխատանքները, որոնք երբեմն դուրս գալով միութենական կեանքէն մաս կը կազմէին իր անձնական կեանքին:

Այսուհետեւ, շարունակեց եղբ. Նրժդէհ Մկրտիչեան, ՝ ան այս բանակավայրը պիտի հսկէ ո՛չ թէ աչքերով, այլ՝ իր հոգիով, ո՛չ Ֆիզիքապէս հոս կանգնած, այլ՝ իր բարձունքէն, երկնային նոր բնակարանէն, իր շուրջ համախմբած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերն ու եղայրները, որոնք յաւէտ հեռացած են երկրային մեր կեանքէն, այս աշխարհէն, ու բանաւոր բացակայութեամբ հեռու կը մնան միութենական գործունէութենէ, սակայն անոնք միանալով Արարատ ու Արագած լեռներուն պիտի պաշտպանեն այս բանակավայրը: Բանակավայր մը, որ էր, է՛ ու պիտի շարունակէ մնալ հաւաքավայրը Հ.Մ.Ը.Մ.ա-





կան յաջորդական սերունդներու, որոնցմով միշտ հպարտ էր եղբ. Գառնիկ:

Առիթը պատեհ նկատելով, եղբ. Նրժդեհ Մկրտիչեան շնորհակալութեան խօսք յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ այս գեղեցիկ նախաձեռնութեան մտայղացման եւ իրականացման համար: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք ընտանիքին հետ եղան, յիշեցին, յարգեցին ու կը շարունակեն վառ պահել եղբ. Գառնիկին յիշատակները ու կը շարունակեն ու պիտի շարունակեն անոր աշխատանքները, իրականացնելով անոր ակամայ անաւարտ ձգած գործն ու ծրագիրները:

Խօսքերու աւարտին, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի անունը կրող սկստութեան բանակավայրի յուշաքարին օրհնութիւնը կատարեց եւ անոր յիշատակին աղօթք արտասանեց Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վրթանէս Քհնյ. Պաղարեան:

Արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով:



**«100** տարի ապրած եւ իր կրօնական շարունակելու յանձնարար այս միութեան գաղտնիքը այն է, որ Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցողը չի կրնար բաժնուիլ անկէ»:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեան այս խօսքերով կը փորձէր ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ը 100-ամեակի հանդիսութիւններուն ընթացքին: Իր եւ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի նուիրումին գաղտնիքը ներկայացնելով սիրելի միութեան հանդէպ:

Դժբախտաբար, ո՛չ ոք կրնար երեւակայել, որ դառն համաճարակը պատճառ պիտի ըլլար, որ եղբ. Գառնիկը բաժնուի իր շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ.էն, գէթ՝ Փրիզքայէս:

Եղբ. Գառնիկը իր անջնջելի դրոշմը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի փառաւոր հանդիսութիւններուն պատուաւոր ձեռով իրականացման մէջ մասնաւորապէս եւ միութեան վերջին քսան տարւան պատմութեան կերտման մէջ ընդհանրապէս:

Եղբ. Գառնիկին մոռտքը Հ.Մ.Ը.Մ.ի

ընտանիք կը կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին անդամակցութեամբ: Ան կը գործէ մասնաճիւղին եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպական յանձնարարութիւն մէջ եւ 1999-ին, միութեան եօթներորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Ապա, ան կը վերընտրուի եւ կը ստանձնէ Կեդրոնական Վարչութեան ատենապետի պաշտօնը: Այնուհետեւ, քառամեակի մը ընդմիջումէ ետք, ան կը վերընտրուի երկու շրջան եւս՝ 2011-2019, միշտ վարելով ատենապետի պատասխանատու պաշտօնը, եւ ծառայութեան ամբողջ տեւողութեան մնալով աշխոյժ ու կորովի ղեկավար:

Իբրեւ ժողովական, եղբ. Գառնիկ յատկութիւնը ունէր նիւթերը նախապէս լաւ ձեռով համադրելու եւ հետապնդելու, որպէսզի հարցերը հասնին իրենց բարեւոք լուծումին, ի շահ միութեան: Վարպետ ժողովականի իր այս մօտեցումը միշտ իր դրական արդիւնքը կ'ունենար աշխատանքներու ընթացքին վրայ:

Նմանապէս, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կարիքը ունեցաւ ընդարձակելու եւ բարեզարդելու Բիւրականի բանակավայրը, որպէսզի կարենայ ընդունիլ օրէ օր Հ.Մ.Ը.Մ.ական սկստաներու աճող թիւը, եղբ. Գառնիկ ունեցաւ իր կեդրոնական դերը, վաստակաւոր այլ եղբայրներու կողքին, աշխատանք տանելու Բիւրականի բանակավայրը ընդլայնելու եւ նոր հատաւածով օժտելու:

Բիւրականի այս բանակավայրը, 20 հազար քառ. մետր տարածութեամբ,





# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԼԱԲԱԳՈՅՆ ՏԵՂԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՎԱՅԻՐ»-Ի ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

Հայաստանի պետութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին յատկացուեցաւ 5 Դեկտեմբեր 2000-ին: 2011-ին, անհատոյց օգտագործման նպատակով, Հայաստանի պետութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին տրամադրեց նաեւ բանակավայրին կողքի մէկ հեկտար տարածութիւնը: Այնուհետեւ ընթացք առին բանակավայրին ընդարձակման եւ բարեգարդման աշխատանքները՝ հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամին նիւթական աջակցութեամբ:

Այս նոր հատուածին յաւելումին շնորհիւ, 2018-ին, Հ.Մ.Ը.Մ. կարողացաւ 100-ամեակի իր բանակումը կատարել 1200 սկաուտով:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեանի վաղաժամ մահուան առիթով, Կեդրոնական Վարչութիւնը, համախորհուրդ եղբ. Գառնիկի ընտանիքին հետ, որոշեց ստեղծել Փոնտ մը, միութեան օգտակար եւ մնայուն ծրագիրով մը յաւերժացնելու համար անոր յիշատակը եւ միութեանական ժառանգը: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.Ի Բիւրականի բանակավայրը



Գառնիկ Մկրտիչեան անուանելով եւ այդ Փոնտը նուիրելով բանակավայրի բարգաւաճման ծրագիրներուն, այս Փոնտին կատարուած մնայուն նուիրատուութիւններով կարելի պիտի ըլլայ իրականացնել ո՛չ միայն բանակավայրին արդիականացումը, այլ նաեւ՝ նորութիւններու յաւելումը անոր կառույցին վրայ:

Այս առաջարկը կը բխի այն նկատու-

ղութենէն, որ եղբ. Գառնիկ մեծ ներդրում ունեցած է բանակումի շինարարութեան եւ ընդարձակման մէջ, նաեւ՝ բանակավայրը լաւագոյն տեղն է Հ.Մ.Ը.Մ.ական մարդուժի պատրաստութեան, որուն կը հաւատարմ եղբայր Գառնիկ, հաւատարմով որ այս բանակավայրը երկրորդ տունը կը հանդիսանայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտի: Բանակավայր մը, ուր մեր նոր սերունդի զաւակները իրենց ազգային ինքնութիւնը կը կերտեն Արագածի լանջերուն, իրենց հայեացքները ուղղելով դէպի սրբազան լեռան գագաթը, որ կը մարմնակոծէ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին միութեանական գաղափարական համոզումը եւ կազմակերպական աշխատանքին առանցքը:

Յարգանք իր յիշատակին: Այս առիթով, ես սա պահուն պատիւը ունիմ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով Բիւրականի այս բանակավայրը կոչելու «Հ.Մ.Ը.Մ.Ի Գառնիկ Մկրտիչեան Սկաուտական Բանակավայր»:





# ԲԻՒՐԱԿԱՆԻ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸ ԿՐ ԴԱՌՆԱՅ ՄԵՐ ՆԵՐՇՆՉԱՐԱՆԸ, ՅՈՅՍԻ ԵՒ ՈՒԺԻ ԱՂԲԻՒՐԸ

(ՅԱՆՈՒՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԵՂԲ. ՆԺԴԵՀ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ»Ի ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

**Ա**յս պահուն, այս վայրէն, այս ձեռնարկէն կարելի չէ գսպել զգացումներու վերիվայրումները, զորս կ'ապրինք: Հպարտութիւն՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին կիներն ու զաւակները ըլլալով: Բախտաւորութիւն՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին հետ ապրած ու աշխատած ըլլալով: Միաժամանակ, ափսոսանք ու ցաւ՝ եղբ. Գառնիկի վաղաժամ մեկնումին եւ բացակայութեան համար:

Տակաւին մեզի՝ ընտանեկան պարագաներուս համար անհաւատալի կը թուի Գառնիկ Մկրտիչեանին մահը:

Ինը ամիսներ ետք, տակաւին դժուար եւ անհնար է ընդունիլ անոր բացակայութիւնը մեր կեանքէն ներս: Եւ այսօր ա՛յլ աւելի դժուար է գրտնուիլ հոս, չըջապատուած Հ.Մ.Ը.Մ.ականներով եւ զգալ, նկատել անոր բացակայութիւնը եւ իր մասին խօսիլ անցեալ եղանակով:

Ծանր է այս իրականութիւնը, իսկ աւելի ծանր է անոր համակերպիլը:

Գտնուելով հոս, կարելի չէ պահ մը չկտրուելի ներկայէն եւ այս իրականութենէն ու երթալ մօտիկ անցեալ ու յիշել:

Յիշել եղբ. Գառնիկին մշտական ներկայութիւնը այս բանակավայրէն ներս, առնուազն վերջին 10 տարիներուն:

Յիշել այս բանակավայրի ընդարձակման աշխատանքները, 100-ամեակի ձեռնարկները, բանակումը...

Յիշել ընդհանրապէս անոր կապուածութիւնը այս միութեան, անոր մտահոգութիւնները, ծրագիրները, միտքերը, աշխատանքները, որոնք երբեմն դուրս գալով միութեանական կեանքէն, մաս կը կազմէին իր անձնական կեանքին, երբեմն նաեւ մեր կեանքին:

Վերադառնալով ներկային, այս պահուն կրնամ միայն պատկերացնել, թէ որքա՛ն ուրախ է հիմա հայրս՝ եղբ. Գառնիկը:

Կը հաւատամ, որ ան մեզի հետ է, լուռ կը հետեւի, կը դիտէ եւ իրեն յատուկ ժպիտով կը վայելէ մեր բոլորին ներկայութիւնը, մեր հաւաքը, իրեն համար շատ սիրելի վայրին՝ Բիւրականի մէջ:

Կը հաւատամ ու վստահ եմ, որ այսուհետեւ ան պիտի հրակէ այս վայրը ո՛չ թէ իր աչքերով, այլ՝ իր հոգիով, ո՛չ Փիզիքապէս հոս կանգնած, այլ՝ իր բարձունքէն, երկնային նոր բնակարանէն, իր շուրջ համախմբած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերն ու եղայրները, որոնք առյաւէտ հեռացած են երկրային



մեր կեանքէն, այս աշխարհէն ու բանաւոր բացակայութեամբ հեռու կը մնան միութեանական գործունէութենէ, սակայն անոնք միանալով Արարատ ու Արագած լեռներուն պիտի պաշտպանեն այս բանակավայրը:

Բանակավայր մը, որ էր, է՛ ու պիտի շարունակէ մնալ հաւաքավայրը Հ.Մ.Ը.Մ.ական տարբեր սերունդներու հազարաւոր սկառուտներու, որոնցմով միշտ հպարտ էր եղբ. Գառնիկ:

Բանակավայր մը, որ հանդիպման վայրն էր, է՛ ու պիտի շարունակէ մնալ կեանքով լեցուն, աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներու երգերով, պարերով, ծա-

նօթութիւններով, ուրախութեամբ եւ բաժանումի տխուր պահերով:

Իսկ մեզի համար, իբրեւ եղբ. Գառնիկի ընտանիքի անդամներ, այս բանակավայրը մեր կեանքէն ներս իւրայատուկ տեղ ունենալով հանդերձ, այս պահէն սկսեալ պիտի ստանայ տարբեր իմաստ ու պիտի դառնայ տարբեր նշանակութիւն ունեցող իւրայատուկ վայր:

Այսօր, Բիւրականի այս տարածքը մեր կեանքին անբաժան մէկ մասը կը դառնայ: Մեր ներշնչարանը, մեր յոյսի եւ ուժի աղբիւրը, մեր յենարանն ու մեր ուխտավայրը:

Ուստի, թող տուէք, որ մեր ընտանիքին կողմէ մեր խորին շնորհակալութիւնը փոխանցեմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ այս գեղեցիկ նախաձեռնութեան մտայղացման եւ իրականացման համար: Շնորհակալութիւն նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի, որ մեզի հետ եղաւ, յիշեց, յարգեց ու կը շարունակէ վառ պահել եղբ. Գառնիկին յիշատակները ու կը շարունակէ ու պիտի՛ շարունակէ անոր աշխատանքները, իրականացնելով անոր ահամայն անաւարտ ձգած գործն ու ծրագիրները:

Վերջապէս, մեր փափաքն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի Գառնիկ Մկրտիչեանին անունը կրող բանակավայրը շուտով վերագտնէ իր բնական ու ամբողջական աշխուժութիւնը եւ դիմաւորէ աշխարհի չորս կողմերէն եկած սկառուտները: Կը յուսանք նաեւ, որ հօրս կեանքը խլած անողոք հիւանդութիւնը երբեք արգելք չհանդիսանայ այս գործին յաջողութեան:

Շնորհակալութիւն եւ ձեր վարձքը կատար:



# ԱՊՐՈՂՆԵՐԸ՝ ՅԱՆՈՒՆ ԱՆՄԱՀՆԵՐԻ

Նիւթը պատրաստեց՝ Սիլվա Ալլահվերտեան  
ԵՐԵՒԱՆ

**2**021 թուականի Նոյեմբերն ասես՝ առանձնաշարուկ խոնարհումի ու երախտիքի ամիս էր մեզնից իւրաքանչիւրի համար: Ասես՝ մի քարի անց, հազիւ կարողացանք մեծ ցաւի ու սարսափելի հարուածի թմբից դուրս գալ ու փորձել զանազան քայլերով վկայակոչել Արցախեան 44-օրեայ պայերազմի ժամանակ իրենց կեանքը զոհաբերած հերոս տղաների վառ յիշատակը:

Պայերազմը, ցաւօք, չափացող վերք բացեց մեզնից իւրաքանչիւրի սրտում, ցաւ ու քրտունօջ թողեց մեր հոգիներում: Մեր լուսեղէն ու անուշ զաւակներն իրենց ծաղիկ հասակը հայրենիքին նուիրաբերեցին, եւ մեր յուշերում մնացին յաւերժ երիտասարդ՝ կենսախինդ եւ հումորով լեցուն: Յաւօք սրտի, այդ լուսաւոր ու լուսեղէն տղաներից էին նաեւ մեր Հ.Մ.Բ.Մ.ական եղբայրներնրից փասաներկուսը:

Մենք բոլորս մեր սրտում ու հոգում զգում ենք այն խորք ցաւն ու ցասումը, որն սալեցիկն ազգովի: Բառերն ու խօսքերը, երբեք ի զօրու չեն լինելու ամիսներում մեր հարազատների ու մեր տղաների կորստի անդառնալի վիշտն ու մորմորը: Այս խորք վերքերը երբեք չեն սալանալու,

սակայն մենք բոլորս, պարպաւոր ենք հե՛նց մեր հերոսների յիշատակի անմահութեան համար ամուր լինել, զինուել յոյսով ու հաւատով, քանզի զիպենք, որ մենք մեր հերոսների սերունդներին յաղթանակած հայրենիք վերադարձնելու պարպքն ունենք: Այսօր մեզանից իւրաքանչիւրի պարպքն է նահապակուած հերոսների յիշատակը անմար պահել, իսկ մեր առաքելութիւնն է վկայակոչելով նրանց լուսեղէն յիշատակը, աւելի ամուր, աւելի յամառ, աւելի ուժեղ քան երբեւէ նայել սպազայի աչքերին, հզօրանալ հոգով ու մարմնով ու զօրավիզ դառնալ մեր ազգին ու հայրենիքին:

Մեր տղաների կորուստը ոչնչով փարսալել հնարաւոր չէ, միայն կարող ենք աղօթք վերառաքել առ Աստուած, որպէսզի Տէրը հայրենիքի զոհասեղանին մեր հերոսների մատուցած ընծան ընդունի եւ փոխարէնը մեզ մխիթարի հայրենիքի նկարմամբ նոր սէր ու ներքին հպարտութիւն վերընչիւղելով բոլորիս սրտերում: Աստուծոյ օրինութիւնն ու սէրը թող յարալուել լինի մեր ընկրանիքներում, թող ուժն ու կորովը, զապանակուած կամքը միշտ ուղեկից լինեն մեզ, որպէսզի Քրիստոսի Յարութեամբ իմաստաւորուի մեր կեանքը:

Յաւօք, ոչ մի սիտփիչ խօսք չի կարող ամոքել որդեկորոյս ծնողների վիշտը, ոչ մի զերբնական չեռք չի կարող վերադարձնել նրանց լուսապակ զաւակներին, սակայն, յուշի ու վերյուշի գաղափարից ծնուած միջոցառումներ իրականացնելու հնարքը, թերեւս այն եզակի միջոցն է, որին սպաւիհնելով մենք՝ սպրողներս, փորձում ենք մեղմել սեփական հոգու քախիծն ու խռովքը:

Ու քանի որ Նրանք զոհուեցին, որ մենք սալենք, սալ-





րենք՝ հզորացնելով մեր երկիրը, կերպելով հայրենան աննկուն ոգու պարկերը, ուստի մենք մեր հերոսներին պարտք ենք հզոր հայրենիք, որը պէտք է կառուցենք՝ ապաւինելով մեր փոկուն ուժերին ու կամքին:

**Յաւե՛րժ փառք մեր հերոսներին:**

Վերոնշեալ խօսքերի վառ ապացոյցը, իրականացուած բո- յոր այն միջոցառումներն էին, որոնք կազմակերպուեցին մէ- կը միւսի ետեւից՝ ընկած հերոսների ծնողների, հարազատնե- րի ու ընկերների կողմից: Այն յուշարձաններն ու յուշաքա- րերն էին, որոնք տեղակայուեցին հայոց աշխարհով մէկ՝ մէ- կը միւսի ետեւից: Այն բոլոր մոմավառութեան, լուռ հաւաք- ների ու յուշ-երեկոնների իրականացումն էին, որոնք տեղի ու- նեցան մէկը միւսի ետեւից:

**ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐԵԱՆ**



Գարեգին Նժդեհն ասել է՝ «Բաւական չէ ազգի գաւակը լի- նել, պէտք է նաեւ նրա հրաշունչ գինուորը լինել»: Եղբայր Գրիգը ո՛չ միայն հայ ազգի արժանի գաւակն էր, այլեւ՝ նրա գինուորը, ով հերոսաբար զոհուեց յանուն Հայրենիքի, որ- պէսզի ապագայ սերունդներին փոխանցի ազատ ու արժանա- պատիւ Հայրենիք:

Գրիգոր Ղազարեանը Հայրենիքն սիրում էր առանց պա- թոսի, առանց աւելորդ խօսքի՝ կարեւորելով նուիրումը Հայ- րենիքի պաշտպանութեան գաղափարին:

Յուլիսի 20-ին Գրիգոր Ղազարեանի բնակութեան տարած- քում տեղի ունեցաւ խորհրդանշական յուշաքարի բացում, որն օրհնուեց ծուխի քահանայի կողմից, այնուհետեւ կատար- ւեց խնկարկում եւ ծաղիկների խոնարհում:

**ԵՂԲ. ԱՐՄԷՆ ԱՌՈՒՍԱՄԵԱՆ**

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերա- կանգնման 30-րդ տօնին ընդառաջ, Երեւանի թիւ 52 հիմնա- կան դպրոցում տեղի ունեցաւ ոգեկոչման միջոցառում, որի ընթացքում կատարուեց դպրոցի երբեմնի շրջանաւարտ, իսկ այժմ արդէն անմահ հերոսների պատուաւոր կոչումն ստա- ցած քաջորդիների յուշաքարի բացումը: Այդ հայորդիների



չարքում էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընտանիքի անդամ՝ եղ- բայր Արմէն Առուստամեանը:

**ԵՂԲ. ՀԱՅԿ ԴԵՐԻԿԼԵԱՆ**

Օգոստոսի 22-ին տեղի ունեցաւ 44-օրեայ պատերազմում ընկած եղբայր Հայկ Դերիկլեանի անուան ցայտաղբիւրի բա- ցումը, որին մասնակցեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկա- ուտները: Եղբոր բնակութեան տարածքում բացուած ցայ- տաղբիւրը, ասես՝ այն հոսող ջուրն է լինելու, որից ամէն ան- ցորդ մի կում ջուր է առնելու, սիրտը հովացնի ու յիշի՝ այս- տեղ է ննջում Հայրենիքի ու ազգի հերոսի՝ Հայկ Դերիկլեանի հոգին:







**ՎԱՐՂԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ**

Վարդան Պետրոսեանը թէեւ անձամբ Հ.Մ.Ը.Մ.ական չի եղել, սակայն նրա հայրը՝ եղբայր Արմէն Պետրոսեանը ո՛չ միայն պատանի հասակից ակելի քան երեսուն տարիներ ի վեր անդամակցում է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, այլեւ՝ իր սիրատուն որդու՝ Վարդանի անուան ընտրութեան մէջ էլ Հ.Մ.Ը.Մ.ական խորհուրդ պահպանուած: Բոլորովին էլ պատահական չէր, որ հայրենասէր Արմէնը, իր հարազատ ընկերոջ՝ եղբայր Վարդան Բախչեանի անունից ոգեշնչուած՝ անուանակոչեց սեփական որդուն նոյնպէս՝ Վարդան: Ցաւօք, երկու Վարդաններն էլ միեւնոյն ճակատագրին արժանացան: Երկուսն էլ իրենց կեանքը չինայեցին յանուն Հայրենիքի:

Վարդան Պետրոսեանը արիութեան համար յետ-մահու պարգևատրուել է «Մարտական Ծառայութիւն» մետալով:

Ցաւը խորն է, վէրքն՝ անբուժելի:

Ու քանի որ հերոս որդին նաեւ պասքեթպոլիստ էր, ապա Վարդանի անմար յիշատակը ոգեկոչելու համար, ծնողները մտադրացան կազմակերպել «Վարդան Պետրոսեանի անուան պասքեթպոլի մրցարշար»։ Անշուշտ, նրանց աջակցեցին նաեւ ընտանիքի անդամներն ու ընկերները։ Այսպիսով՝ Սեպտեմբերի 21-ից 26-ը Երեւանի Օլիմպական մարզահամալիրում



տեղի ունեցաւ միջոցառումը, որին իրենց մասնակցութիւնը բերեցին պատանի պասքեթպոլիստների խմբերը՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւններից։ Մրցաշարի բացման արարողութիւնը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերականգնման տօնին էր նուիրուած, իսկ ահա փական օրը՝ հերոսի 21-րդ ծննդեան օրն էր։

Փառք ու պատիւ, օրհնանք ու խնկարկում մեր անմահ հերոսների վառ յիշատակին։

*Մենք մեր հերոս եղբայրներին անկախ Հայրենիք ու փառահեղ ապագայ ենք պարտք։ Ուրեմն եկէ՛ք ապրենք ու պայքարենք յանուն արդարութեան վերականգնման, պայքարենք յանուն մեր հայրենիքի ու մեր հայրենակիցների բարօրութեան, եւ պայքարենք յանուն մեր լուսաւոր գալիքի ու պայծառ ապագայի։ Ինչպէս մեծ քանասարեղծ Սեւակն է ասում*

*...Նրանք ընկան կոիւներում,  
Բայց ապրում է հոգին նրանց  
Ապրողների հոգիներում.  
Չի՛ մեղմացել ցաւը կրած,  
Արեւուրթինը փրփրած  
Եւ յաղթութեան րեւչը խորին  
Ի գիպութիւն ա՛յն բոլորի,  
Որ նայում են շիրմին նրանց  
Միայն իբրեւ մի բլուրի,  
Որ հարթում է կամաց-կամաց-  
Անմիտի պէս մոռանալով,  
Ոչ եթէ չար թշնամու դէմ  
Ապրողները իրենց ուժով  
Ու զէնքով են անպարտելի,  
Ընկածները իրենց յուշով.  
Վրէժո՛ւ վ են սարսափելի...  
(Սեւակ - «Ընկածները»)*





**Ֆրիտա Գզրլեան-Յաճեան  
ԵՐԵՒԱՆ**

**Թ**էկէ Հ.Մ.Ը.Մ.ական Գէորգ Յաճեանի կեանքին թիւը կտրուեցաւ 6 Հոկտեմբեր 2020-ին, Վարանգաթաղի բարձունքին մղուած հերոսական կռիւին, սակայն ան չմեռաւ, այլ՝ անմահացաւ, իր խիզախութեան եւ անձնուիրութեան համար յետ-մահու արժանանալով բազմաթիւ շքանշաններու, մետալներու եւ յուշ-երեկոններու: Այսպէս,  
2020

18 Հոկտեմբերին, Լիբանանէն Հայաստան ժամանած լիբանանեան ՕՏՎ լրատուական կայանի լրագրողներ Պոօշեան գիւղի «Զօրաց» պանթէոն այցելելով, հարցազրոյց մը ունեցան Գէորգի կնոջ՝ Ֆրիտայի հետ՝ Գէորգին նկարագիրին, բնաւորութեան եւ Արցախեան պատերազմի մասնակցութեան պայմաններուն մասին:

20 Դեկտեմբերին, Գէորգ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան կողմէ յետ-մահու արժանացաւ «Խիզախութեան» շքանշանի:

21 Դեկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ այցելութիւն Պոօշեանի «Զօրաց» պանթէոն եւ քաջարի Գէորգի

# ԳԷՈՐԳԸ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔՈՎ

Թարմ հողակոյտին գետեղուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի խորհրդանշանը կրող պազալթ քարը:

2021

8 Փետրուարին, Կոմիտասի անուան երաժշտանոցին մէջ տեղի ունեցաւ յիշատակի երեկոյ՝ նուիրուած Գէորգին եւ այլ երաժիշտներու:

13 Փետրուարին, «Զայն Հայրենեաց» հասարակական կազմակերպութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ յիշատակի երեկոյ՝ նուիրուած Գէորգին եւ չորս նահատակ արուեստագէտներու:

14 Ապրիլին, «Կամաւորական Շարժում» հասարակական կազմակերպութեան կազմակերպութեամբ, «Յակոբ Պարոնեան» թատերասրահին մէջ, Լ.Ղ.Հ. նախագահին հրամանագիրով (17 Դեկտեմբեր 2020 թ.), Գէորգը յետ-մահու պարգեւատրուեցաւ «Արիւթեան համար» մետալով:

25 Ապրիլին, Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնամարզի օրուան նախարարուհի՝ Վարդինէ Օհանեան-Գէորգեան այցելեց Հայաստան եւ յարգանքի տուրք մատուցեց «Զօրաց» պանթէոնին մէջ հանգչող նահատակ Գէորգին եւ ընկերներուն:

1 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան նախաձեռ-





նույն ժամանակ, Բիւրականի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ «Խիզախներու պուրակ»ի բացում՝ ի յիշատակ Գէորգին եւ Հ.Մ.Լ.Մ.ական 11 եղբայրներու, որոնք խիզախաբար մարտնչելով իրենց թանկ կեանքերը զոհաբերեցին յանուն հայրենիքին:

11 Յունիսին, Գէորգին տիկնոջ, գաւկիյն եւ Գոհար Շագոյեանի կազմակերպութեամբ, Արամ Խաչատուրեանի տուն-թանգարանին մէջ տեղի ունեցաւ Գէորգին ծննդեան 50-ամեակի յուշ-երեկոն: Այս առիթով, Հ.Հ. Արցախի վեթեռաններու միութեան նախագահին կողմէ, յետ-մահու, Գէորգին շնորհուրեցաւ «Կոմիտասի» մետալը:

12 Սեպտեմբերին, Խաչվերացի տօնին եւ Մուսա լեռան հերոսամարտին խորհուրդով, ի յիշատակ Գէորգին, կնոջ եւ գաւկիյն նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ աղօթք եւ խրուկարկում՝ «Զօրաց» պանթէոնին մէջ, ապա յուշաքարի բացում՝ Գէորգին ձեռակերտ տան շրջափակին մէջ: Յայտարարուեցաւ Գէորգ Հաճեանի յիշատակին մշակութային հիմնադրամի ստեղծումը:

6 Հոկտեմբերին, Գէորգին նահատակութեան Ա. տարելիցին, կնոջն ու գաւկիյն նախաձեռնութեամբ, հակառակ անձրեւախառն եղանակին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ «Զօրաց» պանթէոնին մէջ, Շահան Արք. Սարգիսեանի եւ Յովհաննէս Մ. Վարդապետ Սաղորձեանի ձեռամբ: Այնուհետեւ, Գէորգին ձեռակերտ տան մէջ գետեղուած յուշաքարին օրհնութիւնը կատարեց Շահան Արք. Սարգիսեան: Աւելի ուշ, Յովհաննէս Թումանեանի թանգարանին մէջ տեղի ունեցաւ Գէորգ Հաճեանին նուիրուած յուշ-երեկոյ՝ «Վերջին սերմնացանը» խորագրով:

17 Հոկտեմբերին, Հ.Յ.Գ. «Կարմիր լեռ» կոմիտէին նախաձեռնութեամբ, Գէորգին ծննդավայր Լիբանանի Այնճար հայալանին մէջ կատարուեցաւ նահատակին հօրենական տան պատին ամրացուած յուշաքարին բացումը: Թաղը կոչուեցաւ Գէորգ Հաճեանի անունով:

30 Հոկտեմբերին, իր լիազուգումար նիստերը Հայաստանի մէջ կատարող Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ընկերակցութեամբ, այցելեց



«Զօրաց» պանթէոն եւ հոգեհանգստեան պաշտօն կատարեց Գէորգին եւ զինակից ընկերներուն յիշատակին, ապա Հ.Մ.Լ.Մ.ի Բիւրականի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ «Անմահ խիզախներ»ու յուշարձանի բացում, ի յիշատակ Գէորգին եւ Հ.Մ.Լ.Մ.ական բոլոր նահատակներուն:

30 Նոյեմբերին, Հայաստանի Հանրապետութեան նախագահին 29 Հոկտեմբեր 2021 թուակիր թիւ 347 հրամանագիրով Գէորգը յետ-մահու արժանացաւ «Մարտական ծառայութեան» մետալին՝ հայրենիքի պաշտպանութեան եւ անվտանգութեան ապահովման գործողութիւններու ժամանակ կամաւորաբար ցուցաբերած խիզախութեան եւ նուիրումին համար:





**Նորություն մը եւս:**

Այս անգամ քարոզչական մարզին մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններ ցարդ կը գործէին անջատարար, իւրաքանչիւրը իր հայեցողութեամբ եւ փնդական պայմաններուն թելադրականութեամբ: Կը պակսէր համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր ուղեգիծը, համադրումի եւ համակարգումի բաժինը, ինչ որ ընդհանրական մտահոգութիւն էր, փնտրական պահանջ:

Ահա, այդ մտահոգութեան եւ պահանջին գոհացում տալու համար, 6 եւ 13 Նոյեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբը կազմակերպեց միութեան պարմութեան աննախընթաց այս սեմինարը, նոր սկիզբ մը նշելով Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական աշխատանքներու ծրագրումն, կազմակերպման եւ իրագործման աշխատանքներուն մէջ, թէ՛ իբրեւ գործելա-շէն եւ թէ՛ իբրեւ բովանդակութիւն, աւելի արդիական, ազդու եւ փարածուն քարոզչական մեքենայի մը սպեկտրման առաջադրանքով:

Առջանց սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին միութեան Շրջանային եւ Մեկուսի 26 շրջաններէն աւելի քան 50 քարոզչական պատասխանատուներ, վարչականներ եւ փնդեկարտութեան արհեստագիտութեամբ զբաղող մասնագէտներ:

**ԲԱՅՈՒՄԸ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական Ա. առցանց սեմինարին բացումը կատարեցաւ Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներով: Ապա, յանձնախումբի անդամ եղբ. Նփղեհ Մկրտիչեան հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան քարտուղար եւ քարոզչական յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Աւագեանը՝ փոխանցելու իր խօսքը:


միութեան մէջ աննախընթաց այս սեմինարը կու գայ շեշտելու քարոզչական աշխատանքներու կարեւորութիւնը եւ այդ աշխատանքները համադրելու, հունաւորելու եւ աւելի մասնագիտական հիմքեր վրայ դնելու անհրաժեշտութիւնը: Սեմինարը կը ջանայ առաջին անգամ ըլլալով ի մի բերել եւ արժեւորել միութեան քարոզչական աւանդական

եւ արդի բոլոր միջոցները (տպագիր մամուլ, հրատարակութիւններ, ռատիո-կայանի եւ պատկերասփիւռի հաղորդումներ, կայքէջեր, ընկերային ցանցեր եւ այլն) եւ ապահովել բոլորին ներդաշնակ ու համակարգուած գործունէութիւնը՝ միութեան կան յստակ սկզբունքներու հիմամբ:





Իր խօսքին մէջ եղբայրը շեշտեց, որ քարոզչութիւնը ինքնանպատակ չէ, ան կը ծառայէ կատարուած աշխատանքներու լուսաբանման ճամբով անդամահաւաքի եւ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերու խտացման: «Լաւ անդամահաւաք կ'ենթադրէ լաւ քարոզչութիւն, իսկ լաւ քարոզչութիւնը կը պահանջէ լաւ քարոզչական միջոց, ճիշդ եւ սերտուած քարոզչական քաղաքականութիւն», ըսաւ ան: Ապա, եղբայրը հաստատեց, որ մինչեւ մօտիկ



**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ Ա. ԱՌՅԱՆՅ ՍԵՄԻՆԱՐԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՅ ԿԸ ԲԱՆԱՅ ՆՈՐ ԳՈՐԾԵԼԱԴԱՇՏԻ ՄԸ ԼԱՅՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**







անցեալը կը խօսէինք Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական եւ մարզական ուժին մասին, սեմինարին ներկայութեան պատկերը իրաւունք կու տայ այսուհետեւ խօսելու նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի քարոզչական ուժին մասին, որուն բաղադրիչներն են այսօրու ներկայ միութեանականները»:

**«Հ.Մ.Ը.Մ-ի ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ» ՏԵՍԱՆԻԹՈՎ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՒՈՐՈՒՄՈՎ**

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչու-

թեան խօսքին յաջորդեց «Հ.Մ.Ը.Մ-ի քարոզչական աշխարհը» ծանօթացնող տեսանիւթին ցուցադրութիւնը, որմէ ետք քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գէորգ Յակոբեան փառըր-փոյնթով ներկայացուց միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերու քարոզչական աշխատանքներուն պատկերը՝ նախապէս պատրաստուած հարցաւարներու պատասխաններուն հիմամբ:

**ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի դիմատետրի էջով հանրութեան ներկայացուած առաջին նիստին յաջորդեց սեմինարին աշխատանոցներու բաժինը, ուր մասնակիցները առիթը ունեցան խմբակային դրութեամբ առցանց ծանօթանալու մասնագիտական հետեւեալ երեք նիւթերէն մէկուն.-


- «Ազդու հաղորդակցութեան հմտութիւններ»- գեկուցաբեր՝ լրբանան-

եան USJ համալսարանի դասախօս Լուիզա Պապոյեան-Ազէզեան:





- «Ազդու լրագրութեան հմտութիւններ»- գեկուցաբեր՝ քարոզչական յանձնախումբի անդամ եւ «Ազդակ» օրաթերթի պատասխանատու խմբագիր քոյր Նորա Բարսեղեան:

- «Հ.Մ.Ը.Մ-ը, լուսանկարչութիւնը եւ վիտէօ նկարչութիւնը»- գեկուցաբեր՝ քարոզչական յանձնախումբի անդամ եւ ստեղծագործ արհեստագիտութեան Թումօ Կեդրոնի աշխատակից եղբ. Նրժդէ Մկրտիչեան:

Աշխատանոցներու աւարտին, մասնակիցները միացեալ նիստով մը լսեցին իւրաքանչիւր խմբակի ներկայացուցչին գեկուցումը՝ փոխանցուած նիւթին գլխաւոր կէտերուն մասին, որմէ ետք կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Գէորգ Յակոբեան ամփոփ գիծերով ներկաներուն պարզեց Հ.Մ.Ը.Մ-ի քարոզչական գործունէութեան նորաստեղծ ուղեգիծին նախագիծը՝ առ







ի ուսումնասիրությունն եւ մինչեւ սեմինարի յաջորդ նիստ՝ քննությունն:

**ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԸ**

Շաբաթ, 13 Նոյեմբեր 2021-ի երեկոյեան տեղի ունեցան քարոզչական Ա. առցանց սեմինարին երրորդ եւ չորրորդ նիստերը, միացեալ եւ խմբակային դրուժեամբ:

Երրորդ նիստը կատարուեցաւ սեմինարի բոլոր մասնակիցներու ներկայութեամբ եւ քննարկեց շատ այժմէական նիւթ մը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի աշխուժացումը ընկերային ցանցերու վրայ»: Մասնագիտական եւ վիճակագրական գեկուցումներով հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրո-

նական Վարչութեան քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գէորգ Յակոբճեան եւ յանձնախումբի անդամ եւ Picsart միջազգային ընկերութեան ընկերային ցանցերու բովանդակութեան արտադրութեան պատասխանատու քոյր Դալար Մազլումեան:



**ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐԸ**

Չորրորդ նիստը դարձեալ յատկացւեցաւ առցանց աշխատանոցներու, ուր մասնակիցները առիթը ունեցան խմբակային դրուժեամբ առցանց ծանօթանալու մասնագիտական հետեւեալ երեք նիւթերէն մէկուն.-


- «Փաստագրումի, արխիւի եւ թրուայնացումի աշխատանքներ»- գեկուցաբեր՝ Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի եւ Հայոց Յեղասպանութեան թանգարանի գիտաշխատող Միհրան Մինասեան:

- «Մարզիկ պաշտոնաթերթը. մարտահրաւէրներ եւ զարգացման կարելիութիւններ»- գեկուցաբեր՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ «Մարզիկ» պաշտոնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան:

- «Հ.Մ.Ը.Մ.ի կայքէջը»- գեկուցաբեր՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան տեղեկատուական արհեստագիտութեան աշխատանքներու պատաս-







խանատու եղբ. Շանթ Տէմիրճեան:

Աշխատանոցներու աւարտին, մասնակիցները անգամ մը եւս միացեալ նիստով լսեցին իւրաքանչիւր իմբալի ներկայացուցիչին զեկուցումը՝ փոխանցուած նիւթին գլխաւոր կէտերուն մասին:

Յայտնենք, որ զեկուցումներուն մեծամասնութիւնը ներկայացուեցան փառք-փոյնթերով եւ տպաւորիչ կարճ տեսանիւթերով:


**ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՕՍԲԸ**

Սեմինարին փակման եզրափակիչ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրո-

նական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբայրը նշեց, որ սեմինարը դարձակէտ մը նշեց միութեան պատմութեան մէջ՝ ցարդ կատարուող քարոզչական աշխատանքները ղնելով աւելի ամուր, մասնագիտական եւ նորարար հիմերու վրայ: Այսօր քարոզչական աշխատանքներու ժամանակաշրջանն է,- նկատել տուաւ եղբ. Նաճարեան,- յատկապէս քորոնայի պարտադրած առցանց գործունէութեան պայմաններուն մէջ: Հ.Մ.Ը.Մ. ժամանակին հետ քայլ պահող միութիւն է եւ գիտէ իր կարողականութիւնները ճիշդ ձեւով ճիշդ տեղին օգտագործել: Համակարգըլած եւ նպատակաուղղուած աշխա-

տանքը ազդու քարոզչութեան հիմնական գրաւականներն են,- հաստատեց ան,- իր խօսքին աւարտին շնորհակալութիւն յայտնելով սեմինարին մասնակից շրջաններու ներկայացուցիչներուն, կազմակերպիչ յանձնախումբին, զեկուցաբերներուն եւ հրաւիրեալ մասնագէտներուն:

Երկու շաբթուան վրայ երկարած չորս նիստերէ եւ եօթը ժամուան քննարկումներէ հոք, սեմինարը իր աշխատանքները յաջողութեամբ աւարտեց՝ որդեգրելով միութեան քարոզչական մարզի գործունէութեան ուղեգիծին նախագիծը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԹԻՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ. 1918-1927 (Ե. ՄԱՍ)



Հ.Մ.Ը.Մ.Ի պատմության նշանակալից ու անձանօթ մեկ հանգրուանին վրայ կարելու լոյս սփռող աշխատասիրություն մըն է ստորեւ տրքուած պատմական ակնարկը, գրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Չեքիճեանի կողմէ:

Ակնարկը հինգերորդ մասն է երկար ուսումնասիրութեան մը, որ մաս առ մաս կը հրատարակուի «Մարգիկ»-ի յաջորդական թիւերով:

Նիւթը կ'անդրադառնայ Ա. Հանրապետութեան եւ անոր յաջորդող շրջանին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած գործունէութեան: Այս մասին միութեանական պատմագիտութիւնը գրեթէ բան չէ հաղորդած մեզի:

Չեքիճեան նիւթը ուսումնասիրած եւ ներկայացուցած է Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի գիտաժողովին, ապա գայն վերամշակելով եւ յաւելեալ նիւթերով հարստացնելով, գայն պատրաստած է հրատարակութեան:

եղած, որովհետեւ չկար կազմակերպչական ոգի ունեցող անձ մը, չկար մարդ մը, որ գործին նուիրուած ըլլար եւ ունենար դաստիարակչական ընդունակութիւն, այնպէս որ թէ՛ Ֆիզիքականը եւ թէ՛ բարոյական զարգացումը կը գտնուէր բաւական ցած աստիճանի վրայ:

«Մեր մէջ կը տիրէր խառնիճաղանձ դրուժիւն մը, ուր կը տիրէր սուտը, խաբեբայութիւնը, անձնասիրութիւնը, կեղտոտութիւնը եւ այլն:

«Սակայն բախտաւոր եղանք, որ նախկին անբնական դրուժեանէն ազատինք:

«Ահա այդ ազատարարն էր Օննիկ Եազմաճեանը, որ լքելով իր տունը եւ ծնողքը, Հայաստան եկաւ գործ մը կատարելու համար:

«Ահա այս գործին նուիրուած՝ ան կարճ ժամանակի մէջ մեծ գործ տեսաւ, կազմակերպելով սկստուական խումբեր, որոնք համեմատելով նախկին կեանքին հետ բաւական բարձր մակարդակի վրայ կը գտնուէին, ուր բաւական զարգացած է Ֆիզիքական եւ բարոյական կրթութիւնը եւ մենք պարծանքով կրնանք ըսել, որ կանգնած ենք յառաջադէմ հաստատուն հիմերու վրայ:

«Իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ մեր բոլոր սկստներուն կողմէ Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին, որ մեզի չէ մոռցած եւ մինչեւ վերջ պիտի չմոռնայ, մեր ժողովուրդն ալ ճակատաբաց կրնայ ըսել, որ մենք ալ տեղ կու տանք սկստութեան»:

## Յարութ Չեքիճեան ՊԵՅՐՈՒԹ

Այս թիւով կը ներկայացնենք 1921-1922 տարիներուն Հ.Մ.Ը.Մ.Ի պաշտօնաթերթ «Հայ Սկստ»-ի մէջ հայրենի սկստներու կողմէ գրուած յօդուածներ, ինչպէս նաեւ աշխարհի մեծագոյն որբանոցին՝ Ալեքսանդրապոլի Կազաչի Փոստի որբերու կեանքէն նմոյշներ:

- Հայաստան գործողուած Հ.Մ.Ը.Մ.Ի եռանդամ պատուիրակութեան առաքեալներէն Օննիկ Եազմաճեանի Երեւանեան գործունէութեան մասին տեղեկութիւնները քիչ են: Ուշագրաւ է որբանոցի նախկին սան՝ Երեւանէն խմբապետ Անդրանիկ Նազարեանի «Ինչ էր մեր կեանքը առաջ եւ ինչ է այժմ» խորագիրով հետեւեալ յօդուածը՝ «Հայ Սկստ»-ի մէջ, ինչ որ որոշ չափով լոյս կը սփռէ Եազմաճեանի կատարած աշխատանքներուն վրայ:

«Մեր նախկին կեանքին ապրելակերպի բոլոր պայմանները դառն էին, իսկ դաստիարակութիւնը՝ բոլորովին աչքաթող





«Անդրանիկ Նազարեան, տարօնցի, Երեւան, թիւ 3 խումբի պատասխանատու վարիչ»:

- Գրագէտ Գուրգէն Մահարի (Աճէմեան), որ Դիլիջանի եւ Երեւանի որբանոցներուն մէջ մեծցած եւ շատ հաւանաբար սկառու եղած է, հետեւեալ բանաստեղծութիւնը՝ «Սկառուտին երգը» գրած է 1922-ին կամ աւելի առաջ<sup>2</sup>: Շատ հաւանական է, որ ան Ալեքսանդրապոլ մնացած եւ Վահան Զերագի պահակ սկառուտներէն եղած է<sup>2</sup>:

«Օրը մթնում է, քնդում են անքուն  
Սրտերը մեր ժիր խնդութեամբ ջահիլ.  
Ստուեր է հագել մեր պահակապուն.  
Ու մենք չենք կարող մեր միջը պահել:

Անցնում ենք շարքով առաջ,  
Մեր ոտների փակ գեպինն է քնդում.  
Մեզ հրդեհել է նոր կեանքի մի կանչ  
Ու մենք հզօր ենք աշխարհիկ բանքում...

Շարքեր նոյնազօր, շարքեր բիրաբիր  
Փռուել ենք որպէս Վարդավառ մի փօն,  
Կազաչի-Փոսպից միևնույն ջիւնջ Վոսփոր.  
Միևնույն արեւմուտք, հեռաւոր Բոսպորն...

Անկումներից վեր, վերելքից վերեւ լք,  
- Եկէք, կանչում ենք ուշացածներին,  
Եկէք շարք առ շարք մեր աշխարհով մէկ,  
Հները անցան, նոր բախար չբերին...

- Եկէք, կանչում ենք, թող մեր կանչը սեզ  
Ձեր հոգիներում հուրի պէս այրի.  
Մեր յաղթանակին եկէք ու հասէք,  
Եկէք միացէք մեր հոծ շարքերի...

Երկիրը մեր հին, մորթուած բիր անգամ,  
Կանչում է արթուն, կանչում ու կրկին  
Մեր խումբերն են անցնում յաղթական,  
Հիւսում նոր պսակ, նոր կեանքի փառքին»:

- Վանի Հայոց Զոր գաւառէն գաղթական սկառու՝ Խաչիկ Հայկազեան, իր կարգին, «Սկառու ընկերներխ» խորագիրով հետեւեալ ոտանաւորը գրած է<sup>3</sup>.



Երեւանի որբանոցներէն մէկը, որ ո՛չ մէկ կահ կարասի ունէր եւ այս գետինը փռուած անկողիները որբ տղաքն ու աղջիկները շինած էին, 1922:



«Ուժեղացիր, ո՛վ սկաուտ,  
Ուժեղացուր քո խեղճ ազգին,  
Նայիր շուրջդ՝ աչքովդ րես,  
Ի՞նչ ես րեսնում, արիւն, դիակ...

Տէս, ինացիր, ի՛նչ է քաշել  
Խեղճուկ ազգդ այսքան րարի,  
Այդ ցաւերով դու բորբորուած  
Քու շարքերդ սեղմիր ուժգին:

Մեր աւերակ Հայասարանը  
Կանչում է քեզ, ո՛վ հայ րդայ,  
Նա կարօր է մարտդ բազկիդ,  
Ու քեզ նման շար շարերին:  
Մասիսի պէս դու միշտ հպարտ  
Պատրաստ եղիր հլու հանդարտ  
Եռագոյնդ բարձր պահիր  
Թող ծածանի լեզու առած»:

- Ալեքսանդրապոլէն վանեցի Խորէն Աճէմեան «Սկաուտներ» խորագիրով գրած է<sup>2</sup>.

«Անցնում են մեր շարքեր մարտդ  
Շարքեր մանուկ եւ հօր  
Անցնում են միշտ կայրառ, ուրախ,  
Սրբերնին վեհ, անբիծ ու անդորր:

Մեր փոքրիկ աշխարհում սրբազան,  
Կոփում ենք ու կերպում մեր հոգին,  
Հոգիներ յարակ, մանկական,  
Հրաշագործ կերպողի մեծ ձեռքին:

Մենք ունինք երկու մեծ սկզբունք  
Սկզբունք երկնային ու մարտը  
Պահում ենք այս խօսքեր մեր սրբում  
Վեհ խօսքեր՝ «Բարձրացիր-բարձրացուր»:

- Վանեցի Մկրտիչ Մալխասեան «Հայ պատանուն» խորագիրով գրած է<sup>3</sup>.

«Հայ պատանի, սիրտդ մաքրիր  
Վար գործերից դու եր քաշուիր  
Ֆիզիքապէս եւ գործերով  
Հոգով մարմնով անբիծ դարձիր:  
Արգելքներէն եր մի կանգնիր,  
Առաջ քայլ դու համարչակ  
Նուիրիր քեզ սուրբ գործերի,  
Փրկելու քո անշէն երկիր:

Մանուկներին միշտ բարձրացուր  
Որ մեծանուն, լաւ մարդ դառնան  
Բարձրացնեն միշտ ուրիշին  
Հայասարանի պարծանք ըլլան»:

- Սկաուտութեան ուսուցիչ Մամիկոն Գասպարեան «Սկաուտական ոգին» խորագիրով գրութեան մը մէջ բաղդատականը կը կատարէ Վահան Զերագէն առաջ եւ ետք որբանոցի պատանիներու ունեցած կենցաղին միջեւ<sup>5</sup>.



Ալեքսանդրապոլի որբանոցի երկյարկանի հսկայ շէնքերէն, որուն առջեւ որբեր կը զբօսնին:

«Այս տարուան [1921- Այս եւ նման փակագիծերով լուսաբանական միջամտութիւնները կատարուած են մեր կողմէ-Յ.Զ.] Մարտի սկիզբէն երեք ուսուցիչներով պաշտօնավարած էինք ամերիկեան կոմիտէի որբ պահակներու դպրոցին մէջ [Կազաչի Փոստ]: Հակառակ անոր, որ գործադրած էինք բարոյակրթական եւ դաստիարակչական բոլոր հնարաւոր միջոցները, ինչպէս նաեւ պահակապետին ամենախիստ պատիժները, չյաջողեցանք երկու ամսուան ընթացքին լուրջ հիմքերու վրայ դնել դպրոցական գործը եւ որեւէ կերպով բարձրացնել տղոց բարոյականը:

«Թուրքերուն վերջին ներխուժման ժամանակ խուճապալին փախուստի մատնուած եւ սարսափներ տեսած այս տղաները բոլորովին գռեհիկ եւ սանձարձակ դարձած էին, իրենց պարտականութիւնները անբարեխիղճօրէն կը կատարէին եւ ինկած էին պատանեկան մոլութիւններու ետեւէն: Դպրոցին մէջ կը կոտորէին կարասին եւ գրեհական պիտոյքները: Դասարաններուն թիթեղեայ վառարաններուն վրայ ցորեն կը խարկէին, փճացած աղուած ձուկ կ'ուտէին, դասարանին օդը կ'ապականէին: Կը կռուէին ու իրար կը հասցոյցէին, օր ցերեկով գրասեղաններուն վրայ կը քնանային ու կը խուկային եւ այլ տգեղ ու անվայել արարքներ:

«Մեծ դժուարութեամբ դասարանները կը յաջողէինք կարգաւորել եւ դասի սկսիլ: Տղաքը կանոնաւոր կերպով չէին յաճախեր, շարունակ բացակայելով կամ ուշանալով:

«Այս դառն իրականութեան պատճառները ոչ թէ միայն ժամանակի պայմաններն ու գործին անկազմակերպ ըլլալն էին, այլ նաեւ՝ միակողմանի կրթութիւնը: Մենք հաւասարապէս չէինք զարգացներ տղոց մարմինն ու միտքը, ինչպէս որ պէտք է, այլ միայն չոր ու ցամաք առարկայական կրթութիւն կու տայինք եւ տնտեսական փաստերու պաշարով կը ծանրաբեռնէինք անոնց յոգնած ուղեղները: Պահակապետն ալ պահակներուն հետ քիչ ժամանակ կ'անցընէր եւ անոնց համար որեւէ խաղ կամ զբաղում չէր կազմակերպեր: Տղաքը անգործ ու առանց հսկողութեան կը փճանային: Չէ՞ որ անգործութիւնը չարեաց մայրն է:

«Այս անմխիթար վիճակը շարունակուեցաւ մինչեւ այժ-



մու պահակապետին [Վահան Չերազ] գործի անցնելը, որ տղոց սկառուտական դրօշի տակ մտցուց եւ կարճ ժամանակի ընթացքին սկառուտական ուժեղ կազմակերպութիւն յառաջացուց: Խօսքին՝ ամէնուրեք փոխարինեց կենդանի գործ եւ գիտակից խիստ կարգապահութիւն:

«Շուանդուն պահակապետը որք պահակներէն կազմեց սկառուտական խումբ մը իր եւ օգնականին [Ճորճ Մարտիկեանին] գլխաւորութեամբ: Խումբը բաժնեց ջոկատներու, պատրաստել տուաւ համազգեստ, դաւազաններ, սկառուտական նշանակներ, դրօշակներ, ձեռք բերուաւ փող, թմբուկ եւ այլն, պատրաստեց ֆուլթպոլի կանոնաւոր դաշտ, երկայնութիւն, բարձրութիւն եւ արդելքներ ցատկերու եւ կռիւմարտի վայրեր բոլոր յարմարութիւններով: Կանոնաւոր տուչով [ցնցուղով] բաղնիք շինեց, սկառուտական ամառանային դպրոց բացաւ, գրադարան, ընթերցարան, տղոց ձեռքով մշակեց ընդարձակ ծաղկանոց-բանջարանոց եւ այլն:

«Տղաքը աշխարհի մեղուներ դարձած են, իրենց անմիջական պարտականութիւնները ամենայն բարեխղճութեամբ կատարելէն ետք, անգործ չեն մնար, այլ ամբողջ օրը կը զբաղին դպրոցին, գրադարան-ընթերցարանին, բանջարանոցներուն կամ մարզավայրերուն մէջ: Դպրոցին մէջ օրական երկու ժամ կը սորվին գործնական եւ կարեւոր սկառուտական գիտելիքներ ու խրատական՝ բարոյական պատմութեան քերական Գրադարան-ընթերցարանին մէջ անոնք կը թերթատեն անգլիական ու ֆրանսական պատկերազարդ սկառուտական շքեղ պարբերաթերթեր, դիտելով սկառուտական կեանքէն գեղեցիկ տեսարաններ եւ կը կարդան հայերէն գիրքեր:

«Հողագործ սկառուտները թէ՛ իրենց եւ թէ՛ այլ ընդհանուրին բանջարանոցները կը խնամեն, ոմանք թուշուներուն համար բոյներ կը շինեն, ոմանք՝ իրենց որսացած ճագարներուն եւ նապաստակներուն՝ վանդակներ: Մարզադաշտին մէջ ջո-



Ամերիկեան Նպաստամատոյցի շոգեկառքի սայլերէն: Ոսքի աջին՝ Էրնեսթ Եարօ եւ իր ընտանիքը, գործակիցներով:

կատները գինուորական եւ շուէտական մարզանքներ կ'ընեն, ծանրութիւն կը վերցնեն, գործիքներով մարզանք կ'ընեն, դրօշախօսութիւն կ'ընեն, ցնցուղով կը լողան, ներկայացման [թատերական] համար փորձեր կ'ընեն, օտար պարբերաթերթերէն ընդօրինակելով, սկառուտական որմագղներ կը պատրաստեն եւ պատերը կը զարդարեն, դասախօսութիւններ կ'ունենդրեն եւ պէյսպով կամ զանազան տեղական խաղեր կը կազմակերպեն:

«2-3 ամսուան մէջ տղոց մէջ սկառուտական ոգին մեծ յեղաշրջում յառաջացուց: Այդ «անյոյս ինկածները», «անառակ որդիները» բարոյապէս բարձրացած են, կարգապահ, պարտաճանաչ, քաղաքավար, լուրջ, աշխատասէր եւ յարատեւող: Մարզանքը, խաղը, լողալը, արշաւները եւ ընդհանրապէս սկառուտութիւնը տղոց շատ կը հետաքրքրեն: Անոնք բոլորովին պարապ չեն մնար, այլ հաւասարապէս կը զարգացնեն մարմինը, միտքը եւ հոգին: Անոնք գոց չեն սորված սկառուտին դաւանանքն ու գիտելիքները, այլ հասկցած եւ իւրացուցած են եւ կը կիրարկեն դաւանանքի բոլոր կէտերը: Անկարգներուն եւ անհնազանդներուն ընկերները միշտ կը յիշեցնեն իրենց պարտականութիւնները եւ ուղղակի երեսին տալով անոնց անվայել արարքները:

«Տղոց մէջ կատարուած այս մեծ յեղաշրջումը մենք կը պարտինք ոչ միայն պահակապետին վարչական եւ մանկավարժական ընդունակութիւններուն եւ բարեխիղճ գործունէութեանը, այլ՝ գլխաւորապէս սկառուտական ամենակարող ոգիին՝ անոր բազմակողմանի եւ գործնական դաստիարակութեան»:

- Պոլշեկիներու տիրապետութեան ընթացքին, Մկրտիչ Յարութիւնեան կը գրէ. «Ի՞նչ նպատակի պէտք է ձգտի հայ սկառուտը» խորագիրով հետեւեալ յօդուածը: Ստորեւ՝ արեւմտահայերէնը՝ «Մենք



Սկառուտներ պարանաձգութիւն կը խաղան, Ալեքսանդրապոլ, 1922:





Ձախիմ՝ պարտիզական սկաուտներ իրենց շինած թիթեղածածկ տնակին շուրջ, 1922, Ալեքսանդրապոլ: Աջիմ՝ բանջարանոց, Կազաչի Փոստ, 1920:

գիտենք, որ Հայաստանը դարերէ ի վեր միշտ եղած է ճնշումներու տակ, եւ մինչեւ այսօր ալ այդ լուծին տակն է:

«Այս վերջին տարիներուն [1918-1920] Հայաստանի մէջ ծագած էր փայլուն արեւը, սակայն սեւ ամպերը շուտով եկան եւ արեւու ճառագայթները խափանեցին եւ մինչեւ այսօր ալ կը խափանեն:

«Իսկ այժմ կը տեսնենք, որ այդ սեւ ամպերը հետզհետէ կը հեռանան եւ կը նկատենք արեւու ճառագայթները: Այդ ճառագայթները հայ սկաուտի խումբերն ու խմբակներն են, որոնք հիմնուած են գլխաւորապէս Կ. Պոլսոյ մէջ [Հ.Մ.Ը.Մ.] եւ անկէ տարածուած են Անդրկովկաս եւ այլուր:

«Ահաւասիկ անոնք են Հայաստանի մեր փառքն ու պարծանքը, որոնք պէտք է բարձրանան Մասիս լեռան նման:

«Ուրեմն, ճիգ թափէ հայ սկաուտ, որպէսզի արժանանաս այդ փառքին ու պատիւին: Զարգացուր քու միտքդ ու մարմինդ, ուժեղացուր քու ջղոտ բազուկներդ եւ բարձր պահէ հայրենիքին պատիւը, որպէսզի օր մը երբ ժամանակը գայ մեծ պարծանքով դուրս գաս եւ ծածանեցնես մեր Եռագոյնը:

«Ահաւասիկ, հայ սկաուտ: Դուն պէտք է հասնիս այդ նպատակին, որուն հասնելու համար պէտք է յուսահատիս, որովհետեւ շատ յուսահատեցողիչ դէպքեր եկած են, սակայն դուն միշտ եղած ես անսասան, եւ այժմ պէտք է աւելին ընես: Իսկ որպէսզի հասնիս այդ նպատակին, այդ կախեալ է նաեւ բարձրացողներէն, որոնք պէտք է քեզ Մասիս լեռան նման բարձրացնեն»:

- Սեպտեմբեր 1920-ի սկիզբը, Վահան Չերազ Ալեքսանդրապոլի մարզական իրավիճակը Երեւանին բաղդատելով գրած է՝. «...Կարծես այստեղ ուրիշ երկիր է, կեանք կայ, մաքրութիւն կայ, գործ կայ, ազգային ոգի, աշխատութիւն, կազմակերպութիւն կայ: Զինուոր, ոստիկան լաւ հագուած են եւ պարտաճանաչ: Սկաուտները աւելի գիտակից են եւ մեծ դեր ունին քաղաքին մէջ: Սասունին [Կարօ] յուսամիտ նահանգապետ մըն է, լայն եւ առողջ գաղափարներով:

«Ծանօթացայ Պ. Մարգարեանին, որ այստեղի մարմնակրթական շարժման գլուխն է: Չափազանց լաւ տպաւորուե-

ցանք իրմով, թէ՛ հոգեպէս, թէ՛ ֆիզիքապէս: Որոշեցինք առանց սպասելու Երեւանի բանակցութիւններուն արդիւնքին, իսկոյն այստեղ հիմնել Հ.Մ.Ը.Մ-ի ճիւղը: Այսօր վաղը գրասենեակնիս կը բացուի եւ մինչեւ մեր գալը, գայն կը վարեն Մարգարեանը, Եղիշը [Քաջունի], Փիթը [Պետրոս Պարտիզականեան], Աղասին եւ գործին տեղեակ քանի մը տեղացիներ:

«Քաղաքապետը՝ Գ. Լեւոնեան [աշուղ Զիւլանիի որդին, «Հայաստան»ի նախկին խմբագիր] մեզի անվերապահ աջակցութիւն խոստացաւ:

«Այստեղ արդէն կան մարմնակրթական քանի մը միութիւններ, որոնցմէ մէկը՝ «Բագէ»ն («Սոքոլ») ունի լաւ աթլէթներ, որոնք շատ վարժ են գործիքներու վրայ փորձեր ընելու: Ուսուցիչն է Մարգարեանը, որ գարմանալի վարժութիւն ունի այդ ճիւղին մէջ: Լաւ մարզասրահ կայ արդէն»:

- Կիւմրիի այժմու մանկավարժական հիմնարկի ֆիզիքական դաստիարակութեան եւ դասաւանդման մեթոտի ամպիոնի փրոֆեսոր Ռ. Գ. Պապոյեան 13 Սեպտեմբեր 2014-ին կատարած է աշխատասիրութիւն մը՝ «Վահան Չերազի մանկավարժական եւ մարզական գործունէութիւնը Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցներում 1920-1925» խորագրով: Աշխատասիրութիւնը լոյս տեսած է ամպիոնին թիւ 1, 2014 պարբերականին մէջ: Ստորեւ՝ գայն արեւմտահայերէնի վերածուած՝.

«Չերազը պատմական կերպար է՝ իր ազգային, մարդկային, բարոյական, հայրենասիրական, մանկավարժական գաղափարներով եւ գործունէութեամբ:

«Հայրենասէր, առողջ եւ ուժեղ սերունդ դաստիարակելու համար մենք պէտք է Վահան Չերազի ժառանգութիւնը, անոր դաստիարակութեան իւրայատուկ ձեւերն ու մեթոտները հասանելի դարձնենք մեր ժամանակներու երիտասարդ սերունդին եւ մարմնամարզի ապագայ մասնագէտներուն:

«Չերազը ունէր մեծերուն բնորոշ յատկանիշ. որքան ալ փոքր ու թշուառ ժամանակներու մէջ ապրէր, կը ստեղծէր մեծ ժամանակ եւ կրցաւ այնպիսի հայրենանուէր, բազմակողմանի գործունէութիւն ծաւալել Ալեքսանդրապոլի ամե-









**Չախիմ՝ Վահան Չերազ Գստած կեդրոնը, Ֆութպոլի «Տորք» խումբին հետ, Պոլիս: Աջին՝ Կազաչի Փոստի աղջիկները կը պատրաստուին պարանաձգութեան խաղին:**

տարիներով երազած եմ, իրականութիւն դարձաւ այստեղ, երեք ամիսը մէկ կը չափեմ տղաներս եւ ամէն անգամ 1, 2, 3 քիկ-ով կամ ամ-ով աւելցած կ'ըլլան թէ՛ կշիռքը, թէ՛ կուրծքը, թէ՛ սրունքը»: Անկասկած կարելի է պնդել, որ Վահան Չերազի մանկավարժական եւ մարզիչի գործունէութիւնը 1920-1925 Արեքսանդրապոլի որբանոցներուն տուած է գերազանց արդիւնք:

«Նախապէս հայհոյող պատանիները ի սպառ մոռցած էին անցեալը, կիրարկուած մանկավարժական մեթոտները ամբողջովին բարեփոխած էին զանոնք: Աստուածատուր շնորհով օժտուած էր Չերազ: Ան խիստ կարեւորած է կրթութեան, դաստիարակութեան, հաւատքի, հայրենասիրութեան, կարգ ու կանոնի դերը ազգապահպանման գործին մէջ: Ան կը նշէր, որ մարմնակրթմանը մեր ազգին գոյութեան խնդիրն է: Մարզուած է ազգը՝ ուրեմն յաջողութիւններ կ'ունենայ, հակառակ պարագային պարտութիւնները անխուսափելի են»:

- Կ'արժէ անդրադառնալ որբանոցի ամերիկացիներէն Երեւանի պատասխանատու՝ բփշկ Քլերընս Աշըրին (Clarence D. Ussher, 1870-1955)<sup>9</sup>, որ հայերէնին կը տիրապետէր եւ այս յօդուածաշարքի Գ. մասին մէջ Տիգրան Խոյեանին խօսած էր «Յառաջ» թերթին մէջ կարդացած Գրիգոր Չախուչեանի սկառտներուն դրօշախօսութեան մասին յօդուածը: Իսկ նախորդ՝ Գ. մասին մէջ ան Երեւանի մէջ ապաստան տուած, բուժած էր ճորճ Մարտիկեանը եւ զայն ղրկած էր Վահան Չերազի քով:

Բժշկութիւնը աւարտելէն ետք, Աշըր 1898-ին կը միանայ ամերիկեան Մերձաւոր Արեւելքի ինքնապաշտպանական ընկերակցութեան եւ տարի մը Խարբերդի մէջ ծառայելէ ետք, երկար տարիներ ան

կը ծառայէ Վանի մէջ, ուր տիկնոջ հետ ականատես կ'ըլլայ Համիտեան ջարդերէն վերապրողներուն, ապա ուղղակի ականատես՝ Վանի կոտորածներուն, ուր «շուրջ 55.000 հայեր կը մորթուին թուրք կառավարութեան հրամանով», կը գրէ ան:

Ականատես կ'ըլլայ նաեւ Վանի ինքնապաշտպանութեան: Արամ Մանուկեան իր յուշերուն մէջ այսպէս կ'անդրադառնայ անոր մասին<sup>10</sup>. «Բժշկական օգնութեան գործում մեզ մեծ ծառայութիւններ են մատուցել ամերիկեան [հիւանդանոցի] բփշկները, մանաւանդ տղթ. Աշըր, որ անվախ, միշտ յաճախում էր մեր հիւանդներին, ճրիաբար բժշկում եւ ոչ մի անգամ, ոչ ցերեկ եւ ոչ գիշեր չէր մերժում գալ», աւելցնելով, որ ան վիրաբուժական գործողութիւններ ալ կը կատարէր, նաեւ հիւանդապահներ եւ դեղորայք կը ղրկէր:

1 Ապրիլ 1921-ին կեդրոն ղրկած նամակի մը մէջ, Աշըր կը գրէ. «Սովամահութիւնը կը շատնայ եւ զալ ամիս սոսկալի



**Սկաւտական հանդիսութիւն մը եւ բուրգ:**





**Զախիճ՝ Վանաձորի տղոց որբանոցի տնօրէն՝ Զիաուր Կրեմք սկառուտները արշաւի կը տանի: Աջիճ՝ աղջկանց բուրգ ամերիկեան դրօշակով:**

պիտի ըլլայ: Յորենին քիօն 11.000-15.000 ուուբլի է, հացին քիօն շուրջ 20 հազար ուուբլի: Պատերազմը արգելք եղաւ գարնան ցանքին, այնպէս ինչպէս աշնան ցանքին եւ հեռանկարը մութ է: Այժմ առանձին եմ»:

Աչրը գիրքերու հեղինակ է եւ Համաշխարհային Ա. պատերազմէն ետք Պոլսոյ մէջ պատերազմի ոճիրներու ատեանին կը վկայէ թուրք կառավարութեան ոճիրներուն մասին: 1917-ին ան հրատարակած է «Ամերիկացի բժիշկ մը Թուրքիոյ մէջ, խաղաղութեան եւ պատերազմի արկածախնդրութեան պատմութիւն մը» գործը («An American physician in Turkey, a narrative of adventures in peace and war»):

- Հատուածներ 1922-ին Չերագի կողմէ իր ընկերներէն Սիւմոնին ղրկուած նամակներէն<sup>11</sup>. «...Գործս գրաւած է բոլոր եռանդս, ժամանակս, ուշադրութիւնս: Ոգի ի բռին կ'աշխատիմ, օր մը լաւ, օր մը վատ արդիւնքով: Պահակապետի մշտական հսկումէս ու պատասխանատուութենէս զատ, պէտք է հսկեմ իմ 180 փառաւոր պատանիներուս բարոյական կամ ֆիզիքական ամէն մէկ շեղումին, մարմնին ամէն մէկ մկանին, նկարագրիին ամէն մէկ գիծին: Իմ բժախնդիր բնաւորութիւնս թոյլ չի տար ըսելու, որ ամէն ինչ կատարեալ է, բայց արդիւնքը գնահատելի է: Վերջին ծայր առողջ ու տաքարիւն, բաւական կարգապահ, եւ մանաւանդ խիզախ ոգիով տղաք ունիմ, որոնք ո՛վ գիտէ ուր պիտի չգային ետեւէս:

«Միջավայրս նեղ, սակայն վերջին ծայր ջերմ է: Առաւել կամ նուազ վերապահ, բայց եւ այնպէս անկեղծ համակրանքներով շրջապատուած եմ: Օգը, բնութիւնը, ամէն ինչ միօրինակ է: Կազաչի Փոստի սահմաններէն դուրս չենք գար: Ո՛ւր են Պոլսոյ զանազանութիւնները, ընկերութեան, ժամանցի, արշաւանքի:

«Հիմնարկութիւնս աստղ մըն է Հայաստանի մէջ: Կազաչի Փոստին մէջ, որ կատարեալ փոքրիկ քաղաք մըն է, եզական դիրք ունինք մենք: Այս փոքր անկախ ու վասիսին բանակը, գեղարուեստական եւ մարզական ուժը մենք ենք: «Սկառուտ»... այս բառին տուած ենք առասպելական հմայք մը, ինչպէս ժամանակ մը «Տորք»ը:

«Մեր թատրոնը անուանի է, նուազախումբը ամէն հաւաքոյթի զարդն է: Խրոխտ տողանցքնիս մեծ օրերը կը տօնէ: Վերջապէս, Սիւմ ջան, լաւ ենք: Պէտք էր դուն ալ հոս ըլլայիր: Գործ կ'ըլլայ քեզի: Նիւթական գոհացումը քիչ, սակայն բարոյականը՝ շատ:

«Հիմա շատ զբաղած եմ ամառուան ծրագիրը մշակելով, տղոց թեթեւ հագուստները պատրաստելով եւ այլն: Աշխատանքը վերջ չունի, սակայն այնպէս քաղցր է որ չեմ յոգնիր:

«Ունինք նաեւ ագարակ, ուր խոզերը ոչինչով կը սնանին մեծ արդիւնքներ տալով: Սակայն իմ խկական «ագարակ» տղաքն են: Տեսնես ինչ ֆիզիքականներ ձուլեցի: Երանի իմ կողքիս ձեռնհաս անձ մըն ալ ստանձնէր աղջկանց «ագարակ» մը»: Համբոյրներով Վահան:

- 4 Յունիս 1921-ին, ամերիկեան Նպաստամատոյցի Կովկասի ընդհանուր տնօրէն էրնեսթ Շարօն կը գրէ, որ Կարսի 6400 որբերը դժուարին պայմաններու մէջ Ալեքսանդրապոլ փոխադրուեցան եւ այնտեղի որբերուն թիւը 18 հազարը անցաւ<sup>12</sup>: Կ'արժէ իմանալ այդ օրերու փոխադրութեան գումարկային դժուարութիւնները, զորս Եարօ կը նկարագրէ, նաեւ իր հիացումը կը յայտնէ գաղթական հայ բեռնակիրներու անսպառ կորովին մասին:

«Ամիսներէ ի վեր պարենաւորումի համար երկաթուղին չէր բաներ, եւ թուղթի վրայ մինչեւ Յունուար [1922] բաւարար ուտելիք ունէինք: Պայմաններու չափով մը բարելաւումէն ետք, անմիջապէս գործի թօնեցանք նոր պարէն բերելու: Բարեբախտաբար Պաթումի մէջ [Ալեքսանդրապոլէն շուրջ 200 քմ. հեռու, Սեւ Ծովու նաւահանգիստ] տակաւին շուրջ 6 թոն ուտեստեղէն ունէինք: Շատ դժուարութիւններու հանդիպեցանք, յատկապէս երկաթուղիներու խցանումին պատճառով: Որոշեցի անձամբ Պաթում երթալ [Թիֆլիսէն]: Շոգեկառքի այն սայլը, զոր մեզի տրուած էր, միացած չէր շոգեկառքին, ուստի օգնականիս հետ վազեցինք եւ մագլցեցանք այլ սայլ մը, ուր հագիւ ոտքի կենայիք տեղ գտանք:

«Պաթումի մէջ քանի մը ժամէն շոգեկառքի երեք բեռնատար սայլ լեցուցինք, բեռնակիրներ ապահովեցինք [60 հայ





Ձախին՝ «Լուսանկարիչ» պատուելի Պարբլի Աչխըն սկաուտներուն միջեւ, 1922: Աջին՝ սկաուտական տողանցքի պատրաստութիւն, առջեւը աջին՝ փողերախումբը:

գաղթականներ] ու ճամբայ ելանք [դէպի Ալեքսանդրապոլ]: Բոլոր կամուրջներէն [պատերազմին քանդուած] միայն մէկը տակաւին նորոգութեան մէջ էր. պէտք էր բոլոր ապրանքը հետիտան, ուսամբարձ անցընէինք առժամեայ կամուրջին վրայէն, որուն համար միայն երկու ժամ ունէինք, որմէ ետք անցքը երեք օր պիտի փակուէր՝ կամուրջին նորոգութեան համար եւ եթէ չյաջողէին, առնուազն երկու շաբաթ եւս գոց պիտի մնար:

«Օգնականս [Ռէյ Օկտըն], որ լաւատես մըն է յուսահատեցաւ, սակայն ես պնդեցի արագ շարժիլ եւ կարելի եղածին չափ ապրանք փոխադրել գետին միւս կողմը: Քանի մը ժամէն մէկ սալ փոխադրած էինք եւ մեզի յայտնեցին, որ քառորդ ժամէն կամուրջը պիտի գոցէին: Բեռնակիրները կ'ըսէին, որ հնարաւոր չէ պաշարները տեղափոխել, սակայն պնդեցի, որ իրենց ունեցած քիչ ժամանակը չվատնեն: Դժկամութեամբ անոնք շարունակեցին: Սակայն փոխանակ միւս կողմի սալերը լեցնելու, որ աւելի հեռուն էր, ապրանքը կուտակեցինք կամուրջին մօտ՝ գետինը, եւ այս ձեւով մինչեւ առաւօտեան ժամը 5 անդադար աշխատեցանք եւ միայն 5 պարկ բրինձ մնաց միւս կողմը, երբ կամուրջը փակեցին:

«Մարդոց մէկ ժամ հանգիստ տուի, ապա նաւակով միւս կողմը անցանք: Այնտեղ մենք ունէինք շուրջ երեսուն թոն պաշար, որ պէտք էր տեղափոխուէր շուրջ 500 մեթր անդին գտնուող դատարկ բեռնատար սալերուն մէջ: Ես շատ աշխատող մարդիկ տեսած եմ, սակայն երբեք չեմ տեսած այնպիսի աշխատանք, զոր այս վախճանը հայ գաղթական բեռնակիրները կատարեցին, այն քսաներեք ժամուան ընթացքին [միայն մէկ ժամ հանգստանալով], որ տեւեց այդ 30 թոն ապրանքները շարակով փոխադրելու համար:

«Քանի մը հարիւր մեթր կամուրջէն գատ, մէկակիւսն նորոգութեան շոգեկառքեր կային կամուրջին երկու կողմերը, եւ մեր սալերը անոնցմէ աւելի ետեւ էին: Այնպէս որ փոխադրութեան հեռաւորութիւնը 1200-էն 1600 մեթր էր: Գիշերը մուլթ, սեւ էր եւ միայն կամուրջը լուսաւորուած: Կամուրջը ունէր առժամեայ երկաթեայ քայելու արահետներ, որ այս ճօճ-

ուող նեղ ուղին նոյնիսկ առանց իսկ բեռի դժուար էր անցնիլ: Սխալ քայլ մը եւ մէկը գլուխն ի վար կ'իյնար կատաղի գետին մէջ: Տեսայ բեռնակիր մը, որ 113 քլկ. պարկը կուսակին սահեցաւ եւ հագիւ կրցաւ ինքզինք փրկել: Ռուս զինուորները ազատեցին զայն, սակայն երկու սնտուկ կաթը, որ շալկած էր, գետին մէջ ինկաւ եւ ձուկերուն կեր դարձաւ:

«Գրեթէ ողորմելի էր տեսնել, որ ինչպէ՛ս անոնք իրենց բեռներուն տակ կ'երերային եւ ուժասպառ գետին կը փռուէին, երբ վերջապէս իրենց բեռները կ'իջեցնէին որոշուած տեղը: Գիշերուան ընթացքին շատ անգամներ անոնք բացարձակապէս մերժեցին շարունակել, սակայն մենք կ'աղաչէինք, կը կատակէինք ու կը սպառնայինք: Սակայն միա՛կ պատճառը, որ անոնք կը շարունակէին աշխատիլ այն էր, որ Ալեքսանդրապոլի մէջ գտնուող շուրջ քսան հազար հայ որբեր սոված մահ կ'ըլլային, եթէ այդ պաշարները ժամանակին չհասնէին:

«Կամուրջը նորոգող ռուս զինուորներուն, որոնք օգտակար դարձան մեզի, դրամական պարգեւ մը տուի, սակայն անոնք վերադարձուցին, իբրեւ իրենց կողմէ նուէր որբերուն ...»:

- ՆԻՌ-ի 16 Յունիս 1921-ի թիւին մէջ<sup>13</sup> կը կարդանք «Ալեքսանդրապոլի բնիկ պաշտօնեաները կամաւոր կը ծառայեն եւ կէս ժում ճաշով, առանց ամսականի» խորագիրով գրութիւն մը: 8 Ապրիլ 1921-ի թուակիր տեղեկագիրէ մը հատուած մը ներկայացնելով գրութիւնը կը հաստատէ. «Անոնք վերջին ամսականը Դեկտեմբեր 1920-ին ստացան: Այս նուիրեալ աշխատանքին համար Ալեքսանդրապոլի մէջ, նոյնիսկ պուլչեւիկեան հայածանքի եւ որբանոցները թալանելու օրերուն, 17 ամերկացի եւ շուրջ 1000 հայ պաշտօնեաներ մնացին ծառայելու՝ մերժելով լքել որբերը»: Նշենք, որ 1 ամերիկեան տոլարը այդ օրերուն կ'արժէր 1 միլիոն պուլչեւիկեան ռուբլի... իսկ ամերիկեան գործածուած հագուստները, որոնք կը զրկուէին ամերիկացի ժողովուրդին կողմէ, դրամի կարգավիճակ ստացած էին... օրինակ՝ որբանոցներուն փայտի կարիքներուն համար իբրեւ վճարում վաճառականները ռուբլի չէին ընդունել, այլ՝ գործածուած հագուստ<sup>14</sup>:





Ձախից՝ պահակ սկաուտներ, Ալեքսանդրապոլ 1922:  
Աջից՝ Չերազի երեք սկաուտ պահակներին:

- 18 Յունիս 1921-ին «Նիր Իսթ Ռիլիֆ» թերթը՝ ՆԻՌ «Հայ Սկաուտ»-ին քաղելով իր տեղեկությունները կը հաղորդէ հետեւեալ վերնագիրով լուրը՝ «Պր. Կրենթի եւ պր. Օկտրնի սկաուտներուն համար աշխատանքը»<sup>15</sup>: Լուրը կը նշէ, որ «[Հ.Մ.Լ.Մ.Ի] 20-րդ մասնաճիւղը [Արմաշի երկրագործական դպրոցի 126 սկաուտները եւ 7 պատասխանատուները] Հայաստան ղրկուած էր երկրագործութեան համար: Այնտեղի պայմաններուն [պոլիտեխնիկական հալածանքի] պատճառով, իրենց գործունէութիւնը անկարելի դարձաւ եւ մեծ դժուարութեան մատնուեցան: Երկիրը սնունդի պակասէն կը տառապէր եւ Պաթումի ճամբով Պոլիս վերադառնալու գործին, Կրենթի, որ ինքն ալ սկաուտ խմբապետ եղած էր, անոնցմով հետաքրքրուեցաւ ու ամէն կերպով օժանդակեց, ուտելիքով եւ մինչեւ Պաթում հասցնելով զանոնք:

«Կրենթի [համաշխարհային Ա.] պատերազմին Ֆրանսա կը գտնուէր իբրեւ առողջապահական սպայ: Ապա միանալով Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոցին՝ այժմ ան Ղարաբախի [Վանաձոր] շրջանի տնօրէնն է. ան հազարէ աւելի որբերու եւ [որբանոցն դուրս ալ] բոլոր կարիքաւորներու կը հոգայ:

«Պր. Օկտրնը այլ ամերիկացի մըն է, որ յարգուած է իր ծառայած շրջապատին կողմէ: Իբրեւ Նպաստամատոցի անդամ ան կ'օժանդակէ Ալեքսանդրապոլի 18 հազար որբերուն: Ան մասնաւորապէս մարմնակրթանքով հետաքրքրուած է եւ որբանոցներուն մէջ կը քաջալերէ սկաուտութիւնը»:

- ՆԻՌ-ի 14 Մայիս 1921-ի համարին մէջ, «Կովկասի [Հայաստանի] որբանոցներուն պատանի [սկաուտ] պահակները» խորագիրով կը կարդանք<sup>16</sup>: «Կովկասի որբանոցներու աշխատանքին մօտէն հսկելու համար, համոզիչ էր, որ պատանի պահակներու դրուածները յաջողութեամբ գործէր: Որբ տղոց որբանոցի շէնքերուն եւ պարենաւորումին պատասխանատու դարձուցին, ինչ որ անոնց տուաւ սեփականութեան եւ պատասխանատուութեան զգացում, եւ անոնք հպարտութեամբ եւ նուիրումով պաշտպանեցին աշխատանքն ու ապրանքները, զգալով, որ իրենք անոնց բաժնետէրերն էին:

«Հսկայական որբանոցին որբերէն լաւ յատկանիշներով տղաք պահակ կ'ընտրուէին, անոնց կու տային կապոյտ կրծքանշան մը՝ մեծ սպիտակ «G» տառով [անգլերէն՝ Guard=պահակ], ձեռնափայտ մը եւ առանձին զօրանոց-բնակավայր, որ նպաստեց ջոկատային ընկերական ոգիի զարգացման: Միւս տղոց գերագոյն նպատակը պահակ դառնալն էր: Եթէ պահակ մը թերանար, կը պաշտօնազրկուէր եւ անոր տեղ այլ տղայ մը կը նշանակուէր:

«Բաւարար թիւով պահակներ կը նշանակուէին, որպէսզի իւրաքանչիւր տղայ կարողանար շարունակել իր դասերը, ինչպէս նաեւ օգնել պաշարներու բաշխումին եւ հսկողութեան: Մշակուած էր արտօնագիրներու դրուածները մը, որպէսզի ոչ մէկ որբ կամ պաշտօնեայ հեռանայ որբանոցէն՝ առանց ամերիկացիի մը կողմէ ստորագրուած անցագրի: Թէեւ տղաքը անգլերէն կարգալ չէին գիտեր, սակայն անոնք կեղծ կտրօններ յայտնաբերելու անսովոր ունակութիւն ունէին: Երբեմն թուականները կը խարդախուէին, սակայն քիչ կը պատահէր որ պահակ տղաքը խաբուէին: Երբ մտածենք Կովկասի եւ Մերձաւոր Արեւելքի որբանոցներուն հազարաւոր խումբերով մանուկներուն մասին, պահակութեան դրուածները մը անհրաժեշտութիւն է: Տղոց պահակութեան սկսելն ետք, պաշտօնեայ երէց պահակներուն թիւը կէսի իջաւ»:

- Պատանեկան ատեաններ. նոյն նիւթով, ՆԻՌ-ի նախագահ ձէյմս Պարթըն (James Barton, 1855-1936) «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոցի պատմութիւնը» խորագրեալ իր գիրքին մէջ կը գրէ<sup>17</sup>: «Հազարաւոր երեխաներու հաստատութիւն մը կըրնար իսկոյն գործել, միայն զանոնք բաժնելով ութիէն տասներկու հոգիէ բաղկացած խմբակներու, որոնց կը ղեկավարէր աւելի մեծ տղայ կամ աղջիկ մը: Իւրաքանչիւր փոքրիկ ունէր իր առաջնորդը եւ իւրաքանչիւր ղեկավար ունէր գերադաս խմբապետը, որ պատասխանատու էր աւագ անձնակազմին մօտ: Վճարովի պաշտօնեայի մը կողմէ ոչ մէկ գործ կը կատարուէր, որ փոքրերը կըրնային իրենք ընել: Աշխատող մը ոչ մէկ պատասխանատուութիւն կը ստանձնէր, որ երեխայ մը կըրնար արդիւնաւէտ կերպով կատարել:





Փոլիկոն որբանոցի աղջիկները մանոցներով թել կը մանեն, Ալեքսանդրապոլ 1922:

«Պաշտօնեաներուն, ուսուցիչներուն, տնօրէններուն, խնամատարներուն եւ փոքրերուն միջեւ համեմատութիւնը երբեք 15-20-էն նուազ չէր: Ինչպէս ամերիկացի այցելու մը նշեց. «Երբեք չեմ տեսած որեւէ տեղ, ուր երեխաները աւելի հիանալի կերպով ինքզինքնին հոգ կը տանին, այսքան քիչ տարեց ղեկավարներով, եւ ոչ մէկ հաստատութեան մէջ չեմ տեսած աւելի լաւ հաւասարակշռութիւն կարգապահութեան եւ անհատական նախաձեռնութեան միջեւ»:

«Մեծ մասամբ որբերուն վատահուած էր հաստատութեան ներքին կարգապահութեան պատասխանատուութիւնը: Աւելի երէց որբ ղեկավարներուն, սկառտներուն, պահակներուն, անոնց խորհուրդին եւ ատեանին լիազօրութիւններ տրուած էին: Քիչ անգամներ անհրաժեշտ կ'ըլլար հարցերը աւելի բարձր տնօրէնութեան ներկայացնել:

«Կարգ մը որբանոցներ զարգացուցին մանկական կարգապահական դատարաններ, նախագահող որբ դատաւորներով եւ օգնականներով: Օրինակ մը՝ Հայաստանի մէջ. տղայ մը անչափահասներու դատաւորներուն առջեւ բերուած է երկու պահակներու կողմէ, որոնք յայտնած են, որ բանտարկեալը բռնուած էր, երբ աւելի փոքր տղու մը հանդէպ դաժանօրէն կը վարուէր: Իր դատը լսուեցաւ: Ան ընդունեց, որ իրմէ փոքր տղուն զարկած է, սակայն իբրեւ արդարացում, ըսաւ թէ փոքրերը անդադար կը ծաղրէին զինք, քանի որ տարիքով աւելի մեծ, սակայն փոքրերուն դասարանը կը յաճախէր, ակնարկելով, որ բժամիտ էր:

«Դժբախտաբար բանտարկեալին առաջին յանցանքը չէր այս: Ատեանին արձանագրութիւնները ցոյց տուին, որ նախապէս ուսուցիչներուն նեղութիւն պատճառած էր եւ այժմ ան առկախեալ պատիժի մէջ էր: Ուստի այս, իբրեւ իր երկրորդ յանցանքը՝ կը տնօրինուի ծանրագոյն պատիժը, որ 24 ժամ ձեղնայարկին՝ առանց պատուհանի սենեակին մէջ բանտարկութիւնն էր: Պատանի դատաւորները պահակներուն հրահանգե-

ցին պատիժը անմիջապէս գործադրել:  
- «Սեփերաքի որբանոցի 5000 աղջիկները,- կը շարունակէ Պարթըն<sup>18</sup>, - կազմակերպուած էին իրենցմէ ընտրուած առաջնորդի մը ենթակայ, անոր օգնականներով եւ խմբապետներով, այնպէս մը որ իւրաքանչիւր 20 աղջիկներ իրենց առաջնորդը ունէին: Որբանոցին նշանաբանն էր «Ծառայել ուրիշին» [նման՝ սկառտական դաւանանքին՝ «Միշտ օգնել ուրիշին»]: Խումբերը մրցակցութեան շաբաթական հետեւեալ դրութիւնը եւ դրօշակները ունէին [հետեւողութեամբ սկառտական դաւանանքին]. «Միշտ բարեկիրթ»՝ մոխրագոյն դրօշ, «Միշտ կոկիկ»՝ ճերմակ, «Խօսքով ու գործով բարի»՝ վարդագոյն, «Հնազանդ»՝ մանիշակագոյն, «Վստահելի եւ ճշմարտախօս»՝ կապոյտ, «Ուրախ եւ խանդավառ»՝ դեղին եւ «Լաւագոյն խաղացողներ»՝ կանաչ: Խումբին անդամները թեւի համապատասխան գունաւոր ժապաւէններ կը կրէին»:

«Այս խումբերը ուշադիր կը հետեւէին իրենց անդամներուն, քսան հոգիէ բաղկացած խումբին, որոնք շաբթուան ընթացքին կը ջանային բարձր չափանիշներ արձանագրել, որպէսզի յաջորդ շաբաթ տիրանան 7 դրօշակներէն մէկուն: Խումբապետները յատուկ վարժութեան դասընթացներու կը հետեւէին գոհացուցիչ արդիւնքներով»:

- ՆԻՌ-ի 7 Յունուար 1922-ի թիւին մէջ, «7000-նոց ընտանիքը» խորագիրով ակնարկը<sup>19</sup> գաղափար մը կու տայ որբախրնամի առօրեային եւ հիանալի կազմակերպման մասին: Ստորեւ ակնարկը՝ թարգմանաբար.

«ՆԻՌ-ի 7000 Ալեքսանդրապոլի որբերը [3 որբանոցներէն մէկը] այնպիսի մեծ ընտանիք մըն է, որ առօրեայ յայտագիրը ժամացոյցի ճշգրտութեամբ պէտք է գործադրուի, ապա թէ ոչ տուժողներ պիտի ըլլան:

«Երեւակայեցէք շաբաթական 7000 լոգանք,- օրական 1166՝ շաբաթական 6 օր,- ժամական 146 պզտիկներ, կամ իւրաքանչիւրը 2,5 վայրկեանէն պէտք է անցնի ցնցուղին տակէն: Օրական մէկ սնտուկ օճառ կը սպառի միայն լոգանքի համար:

«Իւրաքանչիւր հագուստի 45 ամ. տեղ յատկացնելով, լուաց-



Չերագին նշած սկառտական նուագախումբը, Ալեքսանդրապոլ, 1922:





**Սեւերսքիի որբ աղջիկները դէպի Կազաչի Փոստի եկեղեցին կ'ուղղուին:**

ւած հագուստները՝ ներքնագգեստ, գուլպայ եւ 2 կտոր հագուստ 1166 լոգցողներուն համար, օրական շուրջ 2700 մեթր երկայնքով լուացք փռելիք կը պահանջէ:

«Իւրաքանչիւր ճաշի ժողով 5 անգամով կը մատուցուի [այսինքն՝ օրական 15 անգամ], քանի որ բաւարար պնակներ չունինք, ոչ ալ՝ ճաշասեղան: Օրական 7000 պնակ լուալ, որոնք եթէ քով-քովի շարենք, շուրջ 2400 մեթր կ'ըլլայ երկայնքը:

«Անկողինները եւ 3 վերամակները, որ անհրաժեշտ է այս կլիմային համար, անչուշտ եթէ բոլորը ունենային [3 վերամակ], դանոնք քով-քովի շարելով՝ Պալթիմորէն Ուաշինկթըն կը հասնին, այսինքն՝ 66 քմ.:

- 14 Նոյեմբեր 1921-ին, Սեւերսքիի որբանոցի տնօրէն բժշկուհի Ուսչի Նամակէն հատուածներ<sup>20</sup>. «Վերակառուցում առանց ապրանքի եւ գործիքներու» ենթախորագիրով ան կը գրէ. «Սեւերսքիի գորանոցին վերակառուցումը արագօրէն կ'ընթանայ: Պարոն Անտերսընը, որ վերակառուցման պատասխանատուն է [պոլշեկիկեան թալանէն եւ քանդումներէն ետք], կաշկանդուած է բաւարար թիւով հմուտ արհեստաւորներու պակասին պատճառով, սակայն աշխատող մարդոց համեմատաբար փոքր թիւը շատ բան իրագործած է: Հայերու արհեստներու գերազանց կարողութեան փաստը՝ անոնց ունեցած պարզ գործիքներով կատարած աշխատանքին ճարտարութիւնն ու գերազանցութիւնն է:

«Սեքենական սարքաւորումները, ինչպէս նաեւ համապատասխան շինանիւթը կը պակսի: Մինչ ամերիկացի կապալառու մը, բոլոր տախտակները ձեռքով սղոցելը, տանիքի թիթեղի ճմռթկուած կտորները տափակցնելով թերթի՝ ապա գործող վառարանի վերածելը, հին դամբը շտկելով իբրեւ դամ եւ յօդակապ գործածելը, պատուհաններուն ապակիները մետաղէ թելերով ամրացնելը եւ այլն, իմանալով՝ սարսափահար ձեռքերը վեր կը բարձրացնէր, ըսելով որ անկարելի է գործադրել: Սակայն, սակաւաթիւ հայ վարպետները նորոգեցին առաջին շէնքը, ուր 700 որբեր փոխադրեցինք եւ քանի մը օրէն երկրորդ շէնքն ալ կը նորոգուի 700 այլ որբերու համար:

«Կեդրոնական լոգարան-բաղնիքը, որուն հսկայ եռացնող

տակառը գրաւողները ուժանակով պայթեցուցած էին, նորոգութիւնը հայ արհեստաւորներու մեքենական հնարամտութեան այլ օրինակ մըն է: Այդ պայթած հսկայ տակառը նորոգելը անկարելի կը թուէր, սակայն շտկրաւորով եւ կարկտան կտորներով յօդակապերով նորի նման եղաւ:

«Ինչ կը վերաբերի վերջին իրադարձութիւններուն, մեր պահակները գիշերային կռիւ ունեցան աւագակներու հետ, որոնք մտադիր էին կողոպտել պահեստանոցը, անոնք դուռին կրակելով, ծակ-ծակ ըրին գայն, սակայն չյաջողեցան: Այս ընթացքին, միայն բժ. Ուսչիը եւ պարոն Անտերսընը իրենց ձիերէն վար ինկան, սակայն առանց վնասուելու»:

(Շար. 5)

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. «Հայ Սկսուտ», Բ. տարի թիւ 23 [24], 27 Օգոստոս 1922, էջ 382:
2. «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի», Վազգէն Անդրէասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան», էջ 305:
3. «Հայ Սկսուտ», Բ. տարի թիւ 23 [24], 27 Օգոստոս 1922, էջ 377:
4. «Հայ Սկսուտ», Բ. տարի թիւ 23 [24], 27 Օգոստոս 1922, էջ 373:
5. Նոյնը, էջ 382:
6. Նոյնը, էջ 373-374:
7. «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի», Վազգէն Անդրէասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան», էջ 269:
8. «Վահան Չերազի մանկավարժական եւ մարզական գործունէութիւնը Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցներում 1920-1925» Ռ. Գ. Պապոյեան, 2014, Կիւմրի:
9. [https://en.wikipedia.org/wiki/Clarence\\_Ussher](https://en.wikipedia.org/wiki/Clarence_Ussher)
10. «Արամը», Հ.Յ.Գ. հրատարակութիւն, մահուան յիւնամեակին առթիւ, տպարան Համազգային, 1969, էջ 263:
11. «Հայ Սկսուտ», Բ. տարի թիւ 23 [24], 27 Օգոստոս 1922, էջ 372:
12. «Near East Relief», vol. 3 No. 22, June 4, 1921, p 1:
13. «Near East Relief», vol. 3 No. 23, June 11, 1921, p 2:
14. «Near East Relief», vol. 4 No. 4, January 28, 1922, էջ 4:
15. «Near East Relief», vol. 3 No. 24, June 18, 1921, p 2:
16. «Near East Relief», vol. 3 No. 19, May 14, 1921, p 3:
17. «Story of Near East Relief, 1915-1930: an Interpretation», James L. Barton, New York, Macmillan Company, 1930, P 479, 256-257:
18. Նոյնը, էջ 258:
19. «Near East Relief», Vol. 4 No. 1, January 7, 1922, էջ 3:
20. «Near East Relief», Vol. 3 No. 48, December 3, 1921, էջ 3





# ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՀԻՄՔ՝ ՄԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՆ

## Մանուկ Քեռչկերեան ՀԱԼԷՊ

**Ք**է եւ մեր կեանքին մէջ յաճախ կ'ապրինք յուզիչ եւ տպաւորիչ պահեր, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի մարզադաշտերու բացման առիւնքն ող տեսարանը, հպարտանքի առիթ հանդիսանալով, մեզի վերջիչեցուց միութեան արձանագրած մարզական յաղթանակներն ու անցեալի փառքի օրերը, եւ միեւնոյն ատեն առիթը ընծայեց կենսունակ նոր սերունդներուն, որպէսզի մարզական կեանքէն ներս նոր բարձունքներ նուաճելու ձգտում ունենան:

Շնորհիւ իր նուիրեալ անդամներուն, վարչութիւններուն եւ հաւատաւոր համակիրներու անխոնջ աշխատանքին, Հ.Մ.Ը.Մ. գանազան երկիրներու մէջ ունեցած է մարզադաշտեր եւ

ակումբներ, որոնք մեծապէս նպաստած են հայկական առողջ միջնորդութի ստեղծման եւ հայապահպանութեան գործընթացին:

Պէտք է խոստովանիլ, որ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու հպարտութիւնը կրկին արթնցաւ մեր հոգիներուն մէջ, ի տես վերակառուցուած դաշտերուն, որոնք անհրաժեշտ են նոր սերունդներուն հայեցի դաստիարակութեան համար, հրամցընող դաստիարակչական ծրագիրներուն կողքին: Միջնորդութիւններին համախմբելով հայ կը պահէ մեր երիտասարդները:

Հալէպահայութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ականներս տեսանք արդիական ու այժմէական պասքեթպոլի եւ ֆուլթպոլի դաշտեր, որոնք պիտի ծառայեն նոր սերունդի ֆիզիքական եւ բարոյական դաստիարակութեան:

Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութեան օրէն հայ ժողովուրդի գաւակներուն մէջ սերմանեց հայրենասիրութեան, ազգասիրութեան, եղբայրասիրութեան եւ իրերօգնութեան ոգին: Հ.Մ.Ը.Մ. աւելի քան 100-ամեայ իր կեանքին ընթացքին հայ ժողովուրդին տուաւ երիտասարդական բանակ մը, որ ազգային ոգիով տոգորուած, պատրաստակամօրէն ծառայեց՝ պահպանելու հայկական արժէքները, ընտանեկան սրբութիւններն ու հայրենիքի ազատութիւնը: Փաստ՝ Արցախի 44-օրեայ պատերազմին Հ.Մ.Ը.Մ.ական անձնագոհ նահատակները, որոնք հայրենիքին համար զոհուելու գաղափարը վեր դասեցին իրենց անձնական կեանքէն եւ իրենց արիւնը թափեցին հայրենիքի պաշտպանութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ դաստիարակուած եւ հասակ առած նոր սերունդի գաւակները իրենց







նուիրուածութեամբ եւ յանդուգն կեցուածքով հայ ժողովուրդին յոյսն ու հաւատքը ամրացուցին:

103 տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ. եղաւ ու կը շարունակէ մնալ բոցավառ ջահը հայ երիտասարդութեան: Այդ ջահին միջոցով հայ պատանին, սկստաւոր, մարզիկը, երիտասարդն ու երիտասարդուհին առաջնորդուեցան դէպի լուսաւոր ճանապարհներ:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.ին մեծ դեր եւ առաքելութիւն վստահուած է հայ նորահաս սերունդները

առաջնորդելու բարոյական եւ ազգային առողջ դաստիարակութեամբ, պայքարելով ապագայնացման եւ այլասերման օտարոտի փոթորիկներուն դէմ:

Այս առիթով շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր նուիրատուներուն, աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ կը վստահեցնենք, որ իրենց ընծայաբերած իւրաքանչիւր լուծման իր նպաստը պիտի բերէ միութեան վեհ նպատակներուն իրականացման:

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ,

Խնամեցէ՛ք, գուրգուրացէ՛ք եւ ձեր նիւթական ու բարոյական անհատականութեամբ պահպանեցէ՛ք մեր ազգային կառոյցները եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ յաջորդող սերունդները իրենց հայկական դիմագիծն ու նկարագիրը պահելու համար այսօր, աւելի քան երբեք, պէտք ունին Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան եւ հայեցի դաստիարակութեան:

Այս առիթով կը շնորհակարտենք բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները, ի մասնաւորի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը եւ Հայէպի վարչութիւնը, մաղթելով որ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին առաջնորդութեամբ շարունակեն անարգել եւ յարածուն վերելքներ արձանագրել:

## Սերոք Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՄ

Անկեղծ ըսած, շատերու նման մենք ալ մտավախութիւն ունէինք, թէ այս տարի արդեօք պիտի կարենա՞նք Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղին ամառնային բանակումը կատարել:

Ոեւէ մէկուն գաղտնիք չեն դժուարութիւնները այսպիսի ծրագրերի մը իրագործման:

Ոեւէ մէկուն գաղտնիք չէ, թէ ինչքա՛ն դժուար է մեր շրջանին համար նման բանակումի մը համար յարմար վայր ձեռք բերելը, բաւական ժլատ ուժերէ յարմար պատասխանատուներ նշանակելը, ամբողջ շաբաթ մը թէ աւելին այդ աշխատանքին նուիրուելը եւ այլն:

Ու այդ բոլորէն աւելի գաղտնիք չէ քորոնայի ստեղծած համաշխարհային տաղտուկը:

Բայց եւ այնպէս, ի գարմանս ինծի, Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմը յաջողեցաւ նաեւ այս տարի իր բանակումին ծրագիրը գլուխ հանել:

Ան յաջողեցաւ կրկին գոնէ իր անմիջական շրջապատէն յիստուն սկստաւոր-գայիկ մէկտեղել:

Յաջողեցաւ ամբողջ շաբաթ մը դաստիարակչական իր ծրագիրը լաւապէս ամբողջացնել:

Յաջողեցաւ իրենց հայրենի տունէն շատ բաներով գրկը-

լած երեխաներուն ինչ որ չափով Հայաստանն ու Արցախը ապրեցնել:

Վերջապէս, յաջողեցաւ սկստաւորներու շնորհիւ նոր հունձք մը հայ իրականութեան շնորհիւ:

Իսկ ամէնէն յատկանշականը, եւ ինծի համար ամէնէն կարեւորը, այդ բոլորին պատասխանատուութիւնը վերցուցած էին մեծ մասամբ նոր դէմքեր ու թարմ ուժեր:

Տղաք ու աղջիկներ, որոնք տարի մը

# Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ԵՐԿՄՏԱՆՔ ԵՐԲԵՔ ԱՐՏՕՆՈՒԱԾ ԶԷ

առաջ հագիւ թէ կ'երեւէին առաջնագիծի վրայ:

Հագիւ թէ կը համարձակէին ստանձնել այսպիսի պատասխանատուութիւն:

Հագիւ թէ կարելի ըլլար իրենց պատասխանատուութեան յանձնել քանի մը տասնեակ երեխայ ու հանգիստ քնանալ:

Պրաւօ տղոց թէ աղջկանց՝ Ձոհրապին, Ձարեհին, Վահանին, Ձիւանին, Յովսէփին, Նարեկին, Մեսրոպին, Անիին, Սեւանային թէ Նարոյին աչքին լոյսը հանդիսացող Վերժինին:

Ու ոչ նուազ պրաւօ օրուան վարչութեան, որ կարողացաւ այս «նոր դեկավարներու» հոյը գործի մղել:

Ինչպէս ըսինք,

Հ.Մ.Ը.Մ.ին երկմտանք արտօնուած չէ, ո՛չ աշխատանքային իմաստով,

Ո՛չ պատասխանատուութիւն վերցնելու քաջութեամբ,

Ո՛չ ալ նոր սերունդներու ընտիր հունձքի պատրաստութեամբ:



ԵՂԲԱՅՐ ՍԻՒԼԻՒՔԻՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻՌՈՎ

# ԱՊՏԱԿԸ

Գեորգ Պետիկեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

**Չ**եմ յիշեր ո՛չ օրը եւ ոչ ալ ժամը: Մի՛ հարցնէք ինչո՞ւ, կը խնդրեմ, որովհետեւ նոյնիսկ չեմ յիշեր այդ օրուան ուսերէն կախուած այլ մանր-մոռնր մանրամասնութիւններն ալ: Այդ բոլորը մտքիս ծալքերէն արդէն շատոնց ջնջուած են: Միայն մինչեւ այսօր, այս տարիքիս, տակաւին ուղեղիս նոյն այդ ծալքերուն մէջ կը յամենայ դէպքի մը կնիքը, իբրեւ տեսակ մը գեղեցիկ եւ հպարտալի օրինակ: Տողերս պարզեմ:

Այսպէս, երեք ընկերներով, ինչպէս միշտ, այդ օր ալ մեր այդ հին քաղաքի միակ մարզադաշտը, որ «մալապա պալատի» «քաղաքապետարանի դաշտ» կը կոչուէր, ներկայ էինք մեր սիրելի միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոյի խումբի խաղին:

Դարձեալ մի՛ հարցնէք, թէ այդ օրուան խաղը որո՞ւ հետ կամ դէմ էր, որովհետեւ ըսի չէ՞, այդքան ալ կարեւոր կամ էական չեն: Տարիներ-տարիներ առաջ էր: Միայն կը յիշեմ օրուան մեծ դէպք-պատահարը: Ուսանելի եւ նոյնքան ալ դաստիարակիչ: Այս էր կարեւորը, որ մինչեւ այսօր մտքիս մէջ շալկած կը պտտւիմ եւ զանազան առիթներուն՝ իբրեւ մաքուր եւ նկարագրելի օրինակ՝ կը պատմեմ: Կը բաղդատեմ: Կը վկայակոչեմ: Կը հպարտանամ:

Այսպէս, խաղի պահուն, կարծեմ իրաւարարը իր սխալ եւ անօրէն սուլիչին պատճառով, իբրեւ պատիժ, մեզի՛ մեր խումբին «փենայթի» տուած էր: Որոշում մը, որ իբրեւ հանդիսատես քեզ, նոյնիսկ նստած տեղդ՝ կը վրդովէ: Կը ջղայնանաս: Արիւնդ գլխուդ «կը գարնէ»: Կը պոռաս: Աղմկալից բողբոջ: Տեղէդ ոտքի կ'ելլես: Իրաւարարին ձեռքով-ոտքով ցուցմունքներ կու տաս: Կ'ընդդիմանաս: Զինք իրաւարարներու «դպրոցը» կը դրկես: Ահա ճիշդ այդ պահուն, ամբողջ դաշտը արդէն «կրակի վրայ նստած է»: Անարդար որոշում: Բայց վերջապէս որոշում էր եւ ան ալ իրաւարարի սուլիչով եւ ձեռքի ցուցմունքով հաստատուած:

Ապա, մեր խումբին կոլար-բերդապահը, որուն ընդհանրապէս նաեւ կը պարտինք խումբին յաղթանակներուն մեծ բաժինն ալ, իրաւարարի որոշումին չհանդուրժելով, ի գարմանս բոլորին, այս անգամ ինք՝ առ ի բողբոջ եւ ընդվզում, պոռալով ու բարկանալով, իր խաղընկերներուն հրամայեց խաղը կիսատ ձգելով՝ դաշտէն հեռանալ:

Է՛հ... այս մէկը պարտութիւն կը նշանակէր, իսկ մեզի համար ալ՝ մեծ ամօթ: Պարտուի՛ր:

Բայց եւ այնպէս արդար բողբոջի մը մէկ արտայայտութիւնը ըլլալէ չէր դադրեր: Իբրեւ հանդիսատես այս որոշումը,



բոլորիս համար ալ շատ ծանր էր: Սակայն... անարդար կամ ոչ՝ սուլիչը սուլուած էր: «Փենայթի»: Պատիժ:

Եւ յանկարծ տեսանք, որ խումբին խմբապետը վագելով հասած էր բերդապահին մօտ: Հարցը լուրջ էր: Ստեղծուածէն աւելի լուրջ: Խմբապետը նախ իր մօտ կանչեց մեր բերդապահը: Այս վերջինը, հնազանդ եւ խելօք, մօտեցաւ ու շիտակ, զինուորականի մը նման հնազանդ կանգնեցաւ ճիշդ իր մեծին դիմաց: Խմբապետը հրահանգեց խաղին վերադառնալ: Բերդապահը, գլխով մերժողական պատասխանեց: Ու այդ պահուն էր, երբ յանկարծ խմբապետը իր աջ ձեռքով աղմկոտ ապտակ մը իջեցուց իր դէմ քարացած կանգնած բերդապահին դէմքին, միաժամանակ անոր սաստելով՝ վերադառնալ բերդ՝ իր տեղը:

Վայրկեանին մեր դէմքերուն վրայ զարմանք մը բռնեց: Անժամանակ եւ անակնկալ: Իր կարգին դաշտն ալ դիտեց եւ յանկարծ՝ ծանր լուռութիւն մը իջաւ ամբողջ տարածքին: Ամէն մարդ ապշած իր տեղը սառած-կանգնած էր կարծես: Խմբապետ-հրամանատարը ոչ միայն հրահանգած էր, այլ նաեւ ծանր ապտակով մը պատժած էր իրեն համար օրինազանց լաւագոյն մարզիկը:

Հիմա հարցը այդ անիծեալ «փենայթին» չէր, այլ՝ այդ ապտակը:

Բոլոր դաշտը պիտի կարծէր, որ մեր «կոլարը» շուտով պիտի ընդվզէր, պիտի փոխադարձէր, պիտի շարունակէր իր հակադարձութիւնը եւ այս անգամ ներքին ըսի ըսաւով կռիւ մըն ալ պիտի ստեղծուէր: Բայց սխալած էինք՝ բոլորս ալ: Իրականութեան մէջ խումբին տարիներու բերդապահը, ստանալէ ետք իր պատիժ-ապտակը, վերադարձած էր իր տեղը ու խաղը շարունակուած: Անկէ ետք՝ արդիւնքը կարեւոր չէր: Պարտութիւն եւ կամ յաղթանակ էական չէր: Ինծի համար այս բոլորին մէջ էականը նոյն այդ բերդապահին միութեանկանի վարմունքն էր, անոր հարազատ եւ հնազանդ կեցածքը ցուցաբերող արտայայտութիւնը: Ամբողջ դաշտի ներկաներուն առջեւ ապտակուի՛ր... եւ ապա առանց բողբոջելու եւ առանց ընդդիմանալու՝ հրահանգին հնազանդելով, խաղի վերադառնա՛լ: Ո՞ր տեսնուած է նման բան:

Ահա այս մէկը կը յիշեմ յստակօրէն, ու կարօտը դարձեալ



սկսած է ուռեցնել կուրծքս: Ուստի կը փորձեմ ամփոփել յիշողութիւնս: Այս պահուն, ծուռ կամ շիտակ եւ կամ աւերորդ մանրամասնութիւններ մտքէս շատոնց սրբուած են՝ հաստատապէս: Տարիներ սահած են այս դէպքին վրայէն: Իսկ այսօր...:

Ահա Հ.Մ.Լ.Մ.ը եւ ահա՝ իր սնուցած դաստիարակութիւնը: Կ'ըսեմ, ու նաեւ կ'աւելցնեմ՝ ահա մեծ միութեանականը: Օրինակելի եւ հնազանդ: Հաւաքական հրճուանք մը եւ սրբտապաղիչ երեւոյթ մըն էր, որ այդ պահուն լեցուցած էր էութիւնս: Անոր համար է, որ մեծ ու մաքուր խորհուրդ մը կը տեսնեմ, կայ, գոյութիւն ունի, այս ապտակին մէջ: Անբիծ:

Ու այս օրերուն, թէեւ ճակատագրի բերմամբ հեռու եմ ծննդավայրէս, բայց այս յիշեցումի պահուն, յանկարծ դարձեալ Հայէպը իմ աչքերով հոգւոյս մէջ ինծի կը նայի: Կը գգամ: Ա՛ն իր եւ մեր միութեան նման պատմական յիշատակ չէ, այլ՝ սրտիս մէջ խօսող, արեանս մէջ խմիչքի նման ոգեւորող, հայրենիքի վերածած եմ գայն: Ա՛ն դարձեալ սրտիս կը խօսի իր մեծով եւ պզտիկով: Ու այս «ապտակը» եւ գայն ստացողը, մինչեւ այսօր սրտիս մէջ կը ծփայ իբրեւ մաքրամաքուր յիշատակ:

Իսկ հիմա, իսկ այս օրերուն, որքան բան փոխուած է երէկի եւ այսօրուան միջեւ: Ո՞վ է այն անհատը, որ ապտակ մը ստանալէ ետք չի հակադարձեր: Ըսէ՞ք: Ո՞ւր տեսնուած է: Ո՞ւր կը գտնէք նման մարդ:

Յստակ է, թէ մեր ներկան ծածկած է նաեւ մեր անցեալը: Հակասական դար եւ վիրաւոր: Կարծես յաճախ դիմազուրկ կ'ապրինք, բայց եւ այնպէս անձնապէս միութեանական ըլլալու հպարտութիւնս միշտ կը պտուղնեմ կեանքիս մէջ: Աշխարհը դարձած է գրեթէ անշնչելի, կը կրկնեմ շարունակ եւ ամէն առիթով: Գիտենք, որ պատմութիւնը տարօրինակ խաղեր ալ կը խաղայ, բայց նոյն այդ պատմութիւնը չի կրնար մարդոց մտքէն սրբել այն՝ ինչ որ սրբազան է եւ օրինակելի: Ուստի տողերուս դրած եմ հպարտ համարձակութիւնս, հանդարտ անկեղծութեանս կողքին:

Մաքուր եւ հնազանդ միութեանականի ոճ եւ մտածողութիւն, շարունակ կը կրկնեմ: Ուրախ եմ, որ յիշողութեան թոյնը չէ պղտորած այս մէկը, մտքիս բանալիին հետ միատեղ: Անոր համար յուշերս, դէպքերն ու դէմքերը այս վայրկեանին կը հրաժարին կանգ առնելէ: Նոր ու գեղեցիկ եւ հաճելի տագնապ մը կ'ապրիմ:

Հոն, մեր այդ պատմական քաղաքին մէջ, նուիրեալներու սերունդ մը ունէիք: Անոր շունչին տակ մեծցանք, մենք ու մեր քաղաքը: Ու... որքան գեղեցիկ էր Հայէպը եւ նոյնքան ալ ինք՝ մեր Հ.Մ.Լ.Մ.ը կը շարունակեմ մտովի, որ կարողացած էր ստեղծել եւ դաստիարակել նման սերունդ մը, որ իբրեւ նկարագրի կէտեր ունէր սքանչելի հաւատարմութիւն, գնահատանք եւ մեծերու նկատմամբ յարգանք, անսակարկ գոհաբերութեամբ եւ անուրանալի նուիրումով:

Պրկուած կոկորդով դարձեալ կը յիշեմ: Քիչ մը կարօտ, քիչ մը յուշ:

Թէեւ ծննդավայրս տակաւին ունի վիրա-

ւոր ճայներու իր երգը: Թէեւ հոն հայ կեանքը զանազան շփոթանքներով լեցուած է, սակայն կը հաւատամ, որ տակաւին մեր այս «կոլարին» նման պահած է իր ոգին եւ հաւատքը:

Ձոհողութիւն, համբերանք, յարգանք, իբրեւ արձանացած իրողութիւններ հոն տակաւին կը մնան մեր կեանքի ազգային հարստութեան խորհրդանիշները: Այս բոլորը՝ նաեւ ժառանգուած նոյն այս մեծ ընտանիքէն: Հաճելի ու ծանր փորձառութիւն:

Ու միշտ կը յիշեմ գինք՝ «կոլարը», որ թէեւ բարձրացուց բողոքի դրօշը եւ սակայն վերջը հնազանդեցաւ իր մեծին, գիտակցօրէն եւ հաւատարիմ: Ինքն էր որ այս օրերուն բացաւ մտքիս դռները: Անոր համար, ապրումներս ժողովելով, յատուկ յարգանքիս կողքին ունիմ իւրապատուկ զմայլանք մըն ալ:

Յաճախ պէտք է դիտել, պեղել խորհուրդը, ստեղծել ժամանակը, որպէսզի չպղտորի մեր կեանքի հոսքը, կը մտածեմ: Իսկ այսօր, կը յիշեմ այդ միութեանականը ու մտածումներովս կ'որսամ լուրթիւնն ու ուրախութիւնը: Ու անմեղ հարցում մը կը դժագրուի մտքիս մէջ՝ այս օրերուն նոր մարդիկ արդեօ՞ք կը լսեն ապտակին «պատգամը», որ բացուած գիրքի նման պարզ եւ խոր ու գեղեցիկ էջերով տեղաւորուած է մտածումներուս մէջ: Անոր համար դէմքիս վրայ ծանր շուք մը կ'իյնայ: Թէեւ դէպքը անցած է երազի նման, սակայն դժուար է երէկը հաշտեցնել այսօրուան հետ, որովհետեւ ճակատագրի բերումով երէկը մնացած է կէս ճամբան: Երեւակայութիւնս գիտ կը հալածէ: Պէտք չէ կորսնցնել կապը կը շեփոքեմ:

Ինծի համար խօսի՛լ, գրե՛լ եւ կամ արտայայտուի՛լ Հ.Մ.Լ.Մ.ի մասին կը նշանակէ խօսի՛լ սփիւռքեան մեր հայոց պատմութեան մասին, ուր մեր նոր սերունդի ժառանգորդներուն մօտ տեսանելի էր հայրենասիրութեան եւ հայապահպանման ոգին՝ մեր հայրենիքի ու անոր ազատութեան սէրով շաղախուած եւ հայու օրինակելի մարտնչող կամքով գօտեպնդուած:

Հ.Մ.Լ.Մ. սփիւռքեան հայոց պատմութեան եւ հայութեան ազգային գոյամարտի անբաժան մէկ մասնիկ: Գուրգուրոտ խնամքով, հայ մարդ պատրաստելու շարքաշուրթեամբ եւ մանաւանդ ազգային արժէքներ սնուցանելու առողջ եւ կայտառ մարմին պահելու նախաձեռնութեամբ՝ հարուստ հայոց պատմութիւն մը:

Վկայ՝ տասնամեակներ առաջ Հայէպի մեր Փուլթպոլի խումբի «կոլար» եղբ. Անդրանիկ Սիւլիքճեանը եւ օրինակելի ու գոհաբերող միութեանական, կարգապահ խմբապետ՝ եղբ. Աբրահամ Աւրանի օրինակները, որոնց նմաններուն Հ.Մ.Լ.Մ.ի ընձեռած ազգային ընտանիքին եւ մեր հաւաքական կեանքին բոլոր մաքուր եւ վեհ գիծերուն շնորհիւ է, որ կ'ամրապնդուին մեր ապագայի յոյսերը՝ իբրեւ կիրթ ու կարգապահ հայ եւ տիպար քաղաքացի:





# ՔՈՅՐ ՄԱՐԱԼ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յովսէփ Աւագեան ՈՒՄՇԻՆԿԱԾԸՆ

**Ճ**ամանակը կը դարձանէ վերքերը, կ'ըսէ ժողովրդային առածը: Մակայն կորուստի մը ցաւն ու կսկիծը դժուար թէ կարենայ ամբողջութեամբ սպիացնել ան: Նման կորուստ մըն է քոյր Մարալ Մելքոնեանի անակնկալ ու անդառնալի մեկնումը ութ տարիներ առաջ, 13 Ապրիլ 2013-ին: Կորուստ մը, որուն հետ տակաւին հաշտուած չէ Ուաշինկթընի հայ համայնքը:

Եղբայր Արայի եւ քոյր Հայկոյի կորուստը չէ միայն Մարալին վաղաժամ մահը, այլեւ՝ կորուստն է Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթընի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու մեծ ընտանիքին, որուն սկառուտական եւ մարզական շարքերուն Մարալը ծառայեց իր բովանդակ պատանեկութեան եւ երիտասարդութեան օրերուն:

12 Յունուար 1983-ին ծնած Մարալը դարձաւ սկառուտ պատասխանատու իրեն յաջորդող սերունդներու, միշտ հաւատարիմ մնալով «Քարճրացի՛ր-բարճրացուր» նշանաբանին:

Ուաշինկթընի համայնքի ազգային-միութեանական կեանքին մէջ քոյր Մարալը ներկայ էր միշտ իր հեզուլթեամբ, անսակարկ նուիրումով, հաւատքով ու մանաւանդ ապագայ սերունդներուն հասնելու նպատակով: Առաքինի ու անբասիր նկարագիրով օժտուած քոյր Մարալը չբաւարարուեցաւ Ուաշինկթընով: Իր ծառայութեան դաշտը ան տեղափոխեց Հա-



յաստան, ուր դարձաւ Հ.Ե.Դ.ի ճամբարի պատասխանատու:

Քոյր Մարալ 1998-ին եւ 2002-ին մասնակցեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական վեցերորդ եւ եօթներորդ բանակումներուն, Աղանաձոր եւ Բիւրական:

Ուաշինկթընի հայ համայնքի եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ական իր քոյր-եղբայրներուն յիշողութեան մէջ անմար պիտի մնայ Մարալին յիշատակը: Անոնք յաւէտ պիտի յիշեն զինք, այն Մարալը, որ Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ էր միշտ, երբ ազգին կանչը կը հնչէր: Մարալը այսուհետեւ եւս ներկայ պիտի ըլլայ հո'ն, բոլորին հետ, անոնց հետ, որոնք պիտի շարունակեն ծառայել հայ լեզուին, հայ դպրոցին, Հ.Մ.Ը.Մ-ին ու Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան: Մարալին անսակարկ նուիրումի ճառագայթող փարոսը պիտի խթանէ իր գործը շարունակելու կոչուած իր քոյրերը, եղբայրներն ու ընկերները:

Գործը շարունակելի՛ սիրելի՛ Մարալ: Յայտնենք, որ 7 Յունիս 2019-ին, Հ.Յ.Դաշնակցութեան Արեւելեան Մ. Նահանգներու «Արցախի Ֆոնոս» բարեսիրական հիմնադրամի անդամներ Արա եւ Հայկուհի Մելքոնեաններու բարերարութեամբ, Արցախի Հատուկ շրջանի Առաջամուղ գիւղին մէջ բացումը կատարուեցաւ իրենց դստեր՝ Մարալ Մելքոնեանի անունը կրող մարզադաշտին եւ մանկական խաղավայրին, որ 44 օրեայ պատերազմին դժբախտաբար ինկաւ Ազրպէյճանի լուծին տակ:

Թող քոյր Մարալի նուիրումի եւ ծառայութեան ոգին սաւառնի Հայաստանի ու Արցախի այն տարածքներուն վրայ, ուր անձնուիրաբար ծառայած է ան:



## «ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Տեր եւ Տիկին Արա եւ Հայկուհի Մելքոնեան «Մարզիկ»ի 40-ամեակին առիթով՝ ի յիշատակ իրենց վաղամեռիկ դստեր՝ Մարալ Մելքոնեանի 1000 \$
- Եղբ. Գրիգորիս Պողարեան 1.000.000 Լ. ո.





- Օրինակը, որ մեզի չգեց
- Հ.Մ.Բ.Մ.ի Արմանությունները
- Եղբ. Արմանյո Թորգոմեանի մահուան առիթով ցաւակցագիրներ
- Կենսագրական զիծեր եղբ. Արմանյո Թորգոմեանի

**ԱՆԺԱՍԱՆԱԿ ԿՈՐՈՒՍՏ**

- Տիպար կերպարդ եւ ծառայութեան օրինակելի կեցուածքներդ միշտ պիտի մնան մեզի հետ
- Պարպականութեան զիրակից նուիրեալ միւրքենականը
- Տիպար մարդն ու տիպար Հ.Մ.Բ.Մ.ականը
- Անկեղծութեան եւ նուիրումի խորհրդանիշ եղբայր Արմանյոս
- Մեծահոգի, ազնիւ ու ազնուական Հ.Մ.Բ.Մ.ական եղբայր Արմանյոս



- Անմոռանալի Արմանյոյին. «Ոչ որ անփոխարինելի է, բայց բոլորս կարեւոր ենք»
- Հայութիւնն ու Հ.Մ.Բ.Մ.ը յաղթական ապագայ ունենալու համար
- Եղբ. Արմանյո Թորգոմեանի մահուան քառասունըրը շրջանէ շրջան





# ՏԻՊԱՐ ԿԵՐՊԱՐԴ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԴ ՄԻՇՏ ՊԻՏԻ ՄՆԱՆ ՄԵՉԻ ՀԵՏ

(ՅԱՆՈՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝ ԵՂԲ. ԱԲՐԱՀԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

**Դ**առն իրականութեան դէմ յանդիման, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը այս պահուս իր խոր վիշտը կը յայտնէ յանկարծակի ու վաղաժամ մահուան համար եղբ. Արմանտօ Թորգոմեանին, որ Սեպտեմբեր 2015-էն մինչեւ օրս մաս կը կազմէր միութեան գերագոյն մարմինին:

Եղբայր Արմանտօ, անվերադարձ ճանապարհով մը մեկնեցար դէպի յաւիտենականութիւն, ինչ որ ծանրօրէն ազդեց մեր զգացումներուն եւ մտածումներուն վրայ:

Այսօր, այս դժուարին պահուն, անկարելի է յարմար բառերը գտնել արտայայտելու համար մեր ցաւակցութիւնները՝ հարազատներուդ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի անդամներուն, մեզմէ անվերադարձ բաժանումիդ համար:

Եղբայր Արմանտօ, կիրքով ու նուիրումով մաս կազմեցիր Հ.Մ.Ը.Մ.Ի «կամաւոր բանակ»ին, փոքր տարիքէդ անդամակցելով Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի սկաւտական շարժումին եւ մարզական շարքերուն:

Արդարեւ, անցնող երեք տասնամեակներուն, եղբայր Արմանտօն մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.Ի ղեկավարութեան, մարզական եւ երիտասարդական վարչութիւններու ընդմէջէն, ինչ-



պէս նաեւ՝ Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան անդամակցութեան բերումով: 1992-1996 եւ 2011-2015 ան եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամ, ատենապետութեան պաշտօնը ստանձնելով 2013-2015 երկամեակին:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի շրջանի պատգամաւոր, եղբայր Արմանտօ մասնակցեցաւ 1995-2019 գումարուած՝ միութեան վեց Պատգամաւորական Ընդհանուր

Ժողովներուն, 2019-ին՝ իբրեւ Կեդրոնական Վարչութեան անդամ:

2015-ին, եղբ. Արմանտօ չորս տարուան համար ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ 2019-ին վերընտրուեցաւ, սակայն, ափսո՛ս, որ քառամեայ այս երկրորդ շրջանը ընդմիջուեցաւ դէպի յաւիտենականութիւն վաղաժամ երթով:

Եղբայր Արմանտօ, այսօր սկսար ճամբայ մը, որ շատերուն համար վերջ կը գտնէ մահով, իսկ քիչերուն համար, ինչպէս է պարագայդ, կը վերջանայ յաւիտենականութեամբ, անմոռանալի յիշատակներ ձգելով հարազատներուդ եւ այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն մօտ, որոնք քեզի ճանչնալու եւ







քեզի հետ միասին Հ.Մ.Ը.Մ-ի զարգացման ու ամրապնդման ի խնդիր համերաշխօրէն գործելու առիթը ունեցան:

Եղբայր Արմանտօ, ֆիզիքական բացակայութիւնդ պիտի զգանք կազմակերպական մեր բոլոր ձեռնարկներուն, անդամական ու պատգամաւորական ժողովներուն, սակայն միութեանականի տիպար կերպարդ եւ Հ.Մ.Ը.Մ-ին, հայութեան եւ հայրենիքին ծառայութեան օրինակելի կեցուածքներդ միշտ պիտի մնան մեզի հետ:

Հ.Մ.Ը.Մ-ական նորահաս սերունդները պիտի սնանին գորութեամբդ եւ պայքարի ոգիովդ, Շաւարշ Քրիսեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինդլեանի գաղափարականութեան եւ սկզբունքներուն անվերապահ յարգանքովդ:

Եղբայր Արմանտօ, այսօր ինձի կը վիճակուի յարգանքի եւ հրաժեշտի այս խօսքերը արտասանելու պարտականութիւնը: Խօսքերը սակայն անբաւարար պիտի ըլլան մխիթարելու ընտանիքդ, ընկերներդ եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականները:

Այսօր, յանկարծակի, առանց նախատեսութեան մահուանդ դիմաց, խոր կակիծ մը կը գրաւէ մեր բոլորին սրտերը: Անթառամ յիշատակդ մեր ցաւած սրտերուն համար բալասան մը պիտի ըլլայ, եւ մեր միութեան «Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր» նշանաբանին հանդէպ հաւատարմութիւնդ պիտի գօրացնէ մեր տեւական պայքարը՝ ի սպաս Հ.Մ.Ը.Մ-ին ու հայ ազգին:

Այս տխուր առիթով, յանուն Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական ընտանիքի հարիւր տասնմէկ մասնաճիւղերուն եւ 26 հազար անդամներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը խորապէս կը սգայ եղբայր Արմանտօ Միհրան Թորգոմեանին կորուստը եւ կը խոնարհի անոր յիշատակին առջև:

Երթդ բարի՛, սիրելի եղբայր Արմանտօ:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը երբեք պիտի չմոռնայ քեզ ու քու աւանդդ, եւ առ ի երախտագիտութիւն նուիրումիդ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը յետ մահու քեզի կը շնորհէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանը, որմով շատ պիտի փափաքէինք կուրծքդ զարգարել ողջութեանդ:

Հոգը թեթեւ գայ վրայդ:

## ԱՆՂՐԱԴԱՐՁ

24 Օգոստոսի 2021-ի գիշերը, «Արմենիա» Մշակութային Ընկերակցութեան շէնքին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան, վերջին հրաժեշտը տրուեցաւ Զ.Յ.Դ.ի եւ Զ.Մ.Ը.Մ-ի ղեկավար Արմանտօ Թորգոմեանին, որ մահկանացուն կնքեց 54 տարեկանին:



Հայր Արէն Վարդապետ Շահինեան կատարեց արարողութիւնը, հարազատներու, միութեանական վարչականներու, սկաուտներու եւ ընկերներու ներկայութեամբ, որոնց մէջ Արմանտօն անցուց իր կեանքին երկար տարիները, գործելով Պուլենոս Այրէսի եւ Հարաւային Ամերիկայի տարբեր միութիւններու մէջ:

Օրասիօ Թերզեանը փոխանցեց Զ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ Վիսենթէ Յովասափեանի խօսքը, Արմանտոյին յիշելով իբրեւ «Մարդամօտ, բարի ընկեր, լաւ հայր, լաւ զաւակ, լաւ ամուսին, լաւ եղբայր, ու մեծ սրտով լաւ կնքահայր: Հայ Դատի պաշտպան, բարի եղբայր, կատարեալ ղեկավար եւ տիպար հայ: Այս բոլոր յատկութիւնները եւ շատ աւելին կը նկարագրեն եղբայր Արմանտօն», նշեց ան ու ապա անցուց. «1984-ին զինք հրաւիրեցին մաս կազմելու Զ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական յանձնախումբին, ուր ան աշխատեցաւ մինչեւ իր վերջին օրը: Իր պարտաճանաչութիւնը սահման չունէր»:

«Կեանքի ընթացքին կարելի է հանդիպիլ բազմաթիւ մարդոց, որոնք ունին բազմաթիւ յատկութիւններ: Բայց դժուարութեամբ կը գըտնուի անձ մը, որ ունենայ այս բոլոր յատկանիշները միասին եւ կարողութիւնը ունենայ զանոնք գործադրելու», յայտնեց Օրասիօ Թերզեանը, որ Արմանտօն բնութագրեց իբրեւ «Շատ հաւատարիմ անձ եւ հաւատարիմ բարեկամ»: «Իբրեւ ղեկավար ան մեզի կը ձգէ մեծ ժառանգ: Ան՝ ուրիշներու հետ, հնարաւորութիւնը ստեղծեց, որպէսզի Հարաւային Ամերիկան ամբողջ աշխարհի մէջ եղբայրներ եւ քոյրեր ունենայ», ըսաւ Օրասիօ Թերզեան:

«ԱՐՄԵՆԻԱ» ՕՐԱԹԵՐՈՒ  
25.8.2021



# ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԻՑ ՆՈՒԻՐԵԱԼ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆԸ (ԵՂԲ.ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)



Մանուկ Քեօշկերեան  
ՀԱԼԷՊ

**Հ**աւաքականութիւն մը կ'անմահացնեն այնպիսի մարդիկ, որոնք իրենց զոհողութեամբ, ծառայութիւններով, ազնիւ ոգիով ու բարի գործերով անկարելին կարելի կը դարձնեն տուեալ հաւաքականութեան վերելքին ու զարգացման համար:

Իբրեւ մարզական, սկստուական եւ մարդակերտման համազգային հաւաքականութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը վստահաբար պիտի անմահացնէ 40 տարուան անձնուրաց ծառայող եղբ. Արմանտօ Թորգոմեանի յիշատակը:

Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Արմանտօն, որ կանխահաս կերպով հրաժեշտ տուաւ այս աշխարհին, իր շատ սիրած ու պաշտած միութեան եւ կազմակերպութեան, աւելի քան 40 տարիներ ապրած ու գործած է Հ.Մ.Ը.Մ.ին համար, աշխատած է անոր յառաջդիմութեան եւ հզօրացման համար:

Եղբ. Արմանտօ փոքր տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն ան-

դամակցած է իբրեւ գայլիկ, սկստու եւ մարզիկ: Ան հասած է մինչեւ վարչութիւն, ատենապետ Շրջանային Վարչութեան: 2015-ին ընտրուած է միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ, իսկ 2019-ին վերընտրուած է՝ անդամ մնալով մինչեւ իր մահը: Միաժամանակ, ան եղած է հաւատաւոր դաշնակցական, «անկեղծ զինուոր» եւ վարած է պատասխանատու բազմաթիւ պաշտօններ:

Եղբ. Արմանտօն պարտականութեան գիտակից նուիրեալ միութեանական էր, հաւատաւոր, չընկրկող եւ պատնէջի վրայ մնացող ղեկավար: Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկստական անխափան երթը ապահովող մտահոգ վարչական էր ու պատասխանատու:

Եղբ. Արմանտօ Թորգոմեանի անունը անջնջելի պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներու յիշողութեան մէջ, իր զուարթ բնաւորութեամբ, ընկերային հոգատար վերաբերմունքով եւ վարչականի անմնացորդ նուիրուածութեամբ: Եղբայրը նուիրումով ծառայեց եւ աշխատեցաւ իբրեւ ժրջան վարչական: Ան իր բոլոր հնարաւորութիւններով նպաստեց ու օգտակար եղաւ միութեան վերջին քառորդ դարու բոլոր ձեռնարկներուն եւ նախաձեռնութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով եղբոր երկար տարիներու վաստակն ու աշխատանքը միութեան մէջ, նաեւ նկատի ունենալով նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ անոր ունեցած մեծ ներդրումը, յետ մահու զայն պարգեւատրեց միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Իր տարած աշխատանքը թող ճանապարհը հարթէ նորահաս սերունդներու դաստիարակութեան, հայրենասիրութեան եւ ազգասիրութեան գործին:

Յիշատակը անմառ, սիրելի՛ եղբայր Արմանտօ: Փունջ մը ծաղիկ քու յիշատակիդ:





# ՏԻՊԱՐ ՄԱՐԳՆ ՈՒ ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## Իշխան Եղիայեան ԱՆԹԻԼԻԱՍ

**Հ**.Մ.Ը.Մ.ականի կեանքին ընթացքին, միութենական հանդիպումներու, ժողովներու ժամանակ կամ պարզապէս ձեռնարկներու աւարտին, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի գաղափարը յաճախ կը յիշուի եւ կ'արծարծուի:

Տիպար բառը ինքնին զանազան նշանակութիւններ ունի՝ մեր կեանքին մէջ ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ մասնաւորապէս: Այսպէս, տիպար կը նշանակէ օրինակելի, կոկիկ, քաղաքավար:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ տիպարը շատ աւելին կ'ենթադրէ: Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը անկեղծ, անշահահարնդիր, նուիրուած, ուղղամիտ, անկողմնակալ եւ ընկերասէր պէտք է ըլլայ: Իր գործունէութիւնը օրինակելի եւ լաւագոյնը ըլլայ: Թէ՛ լաւ ժողովական ըլլայ եւ թէ՛ գործի մարդ ըլլայ:

Եղբ. Արմանտօն՝ մեր Արմանտօն այս բոլորն էր, թէ՛ տիպար մարդ էր եւ թէ՛ մանաւանդ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական էր:

Ձինք անձնապէս ճանչցայ 2015-ի Սեպտեմբերին գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի ԺԱ. Պատգամաւորական ժողովին, Հայաստան: Հոն երկուքս ընտրուեցանք Կեդրոնական Վարչութեան անդամ, եւ այնուհետեւ սկսաւ մտերմութիւն մը, յատկապէս ժողովներու ընթացքին կամ անկէ առաջ ու ետք տեղի ունեցած զրոյցներով: Ունէինք փոխադարձ հասկացողութիւն, վստահութիւն եւ յաճախ՝ նոյնաման գաղափարներ: Իր կարծիքները հանդարտ կու տար, նոյնիսկ եթէ նիւթերը բարդ ըլլային: Կատակները հաւասարակշռուած էին եւ միշտ՝ տեղին: Ազգային ամուր դաստիարակութիւն ստացած ըլլալը շատ յստակ էր, որովհետեւ հեռաւոր Հարաւային Ամերիկայի իր ծննդավայր Արժանթինի մէջ հայակերտման բացառիկ աշ-



խատանք կը տանէր:

Եղբ. Արմանտօն երիտասարդներու հանդէպ յատուկ գուրգուրանք ունէր: Անոնց հետ երիտասարդի նման էր, հոգին երիտասարդ էր: Ամէն առիթ կ'ուզէր օգտագործել Հ.Մ.Ը.Մ.ը եւ երիտասարդութիւնը իրարու մօտեցնելու համար: Կը հաւատար Հ.Մ.Ը.Մ.ի դերին եւ Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ միջոց օգտագործելու, երիտասարդութիւնը հայրենիքին կապելու կամ գաղութներու մէջ հայապահպանման աշխատանք տանելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իրեն հանդիպած ոեւէ անձ հետագային անպայման կը յիշէր զինք: Ըլլայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն կամ բանակումներուն եւ կամ Պատգամաւորական ժողովներուն, որոնց կարեւոր մէկ մասին մասնակցած էր ան, յաջողած էր ստեղծել մտերմութիւն եւ բարեկամներու հսկայ փաղանգ մը, որ արդիւնքն էր իր տիպար ըլլալուն:

Բառերը կը պակսին, միտքերը արտայայտելը դժուար է, բայց հաստատ կրնանք ըսել՝ սիրելի՛ Արմանտօ, բացակայութիւնդ զգալի է եւ տակաւին մենք չենք համոզուած անոր:







# ՄԵԾԱՀՈԳԻ, ԱԶՆԻՒ ՈՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲԱՅՐ ԱՐՄԱՆՏՈՆ

## Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ամբողջ Արժանթիւնը սուգի մէջ է:  
Եւ ինչո՞ւ... չե՛մ ուզեր հարցնել:

Ձեմ ուզեր իսկ գիտնալ, թէ ի՞նչ պատճառով գնաց մեր Արմանտուն:

Այդ ի՞նչն էր, որ այդքան կանուխ առաւ-տարաւ Կեղրոնական Վարչութեան անդամ մեր Արմանտուն:

Ձեմ ուզեր, որովհետեւ գիտեմ, թէ այդ մէկը ինձի բան պիտի չըսէ:

Ձեմ ուզեր, որովհետեւ գիտեմ, թէ այդ մէկը ցաւս ոչինչով պիտի մեղմացնէ:

Ձեմ ուզեր, որովհետեւ ի՞նչ ալ ըսէք Արմանտոյի մը կորուստին մասին, ինձի ոչինչ կրնաք ըսել:

Դեռ ե՞րբ էր: Արդեօք Գառնիկի մեկնումի՞ն էր, թէ Պատրիկի՞, թէ Մասթրրի՞:

Ըսի ու բարձրաձայն ըսի, բացազանչեցի. վերը մէկը հաշիւները կորսնցուցած է:

Վերը մէկը տոմարները ամբողջ խառնած է:

Անաստուած մը «ամենաբարին» կոչուած Աստուծոյ հրահանգներուն հետ խիստ անտարբեր վերաբերած է:

Այլապէս, ի՞նչպէս բացատրեմ եղբորս Արմանտոյին մեկնումը:

Ի՞նչպէս բացատրեմ այդ միշտ ժրպտերէս, միշտ մեծահոգի, միշտ ազնիւ, ազնուական ՏԻՊԱՐ ՄԱՐԴ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.ական Արմանտոյին այսքան կանուխ մեկնումը:

Ի՞նչպէս բացատրեմ մեկնումը մարդու մը, որուն եթէ անգամ մը հանդի-

պիս, կեանք մը ամբողջ չես կրնար չլիչել:

Բայց արդեօք Արմանտուն կը մեռնի՞ եղեր...

Իր ԼԱՅՆ ԺՊԻՏՈՎ, անմիջական շրջապատին կեանք, կորով ու պայքարի ոգի՛ ներշնչող Արմանտուն կեանքէն կը հրաժարի՞ եղեր...

Շատերու համար, որոնք մօտէն չեն ճանչցած Արմանտուն, հաւանաբար պարզապէս պահ մը սգան մարդուն կորուստը եւ անցնին:

Շատերու համար, որոնք գիտակցութեան մէջ Արմանտուն պարզապէս հաւատաւոր միութեանական եղբայր մըն էր, հաւանաբար իր անմահ հոգիին խաչակնքեն, ծնրադրեն ու անցնին:

Այնուհետեւ անոնց համար, որոնք Արմանտոյին հետ ժողովի սեղան նստած են:

Անոնց համար, որոնք Արմանտոյին հետ սիրուքահայ երկրտասարդութեան թէ արժանթիւնահայ իրականութեան ցաւոտ հարցերը քննարկած են:

Անոնց համար, որոնք Արմանտոյին հետ կտոր մը հաց կըտրած են:

Այս բաժանումին հետ դիւրութեամբ չեն կրնար հաշտուելի:

Երբե՛ք ալ չեն կրնար հաշտուիլ: Արմանտո, հողը թեթեւ դայ վրադ: Մենք քեզի ու քու նմաններդ պիտի չմոռնանք:

Աստուած քու աննման հոգիդ լուսաւորէ:

Պայքարի եղբայրս, Արմանտո՛, սիրելիս,

54-ին մեռնիլը մեզի արտօնուած չէ հոգիս:





# ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԵՂԲԱՅՐ ԱՐՄԱՆՏՕՆ



## Վերա Բարսեղեան-Տէր Պողոսեան ՊԵՏՐՈՒԹ

**Հ**.Մ.Ը.Մ.ը ճանչցուած է իբրեւ միութիւն մը, որուն անդամները, աշխարհի որեւէ անկիւնը գտնուելով, միշտ յատուկ կապուածութիւն կ'ունենան աշխարհի միւս անկիւնը գտնուող միութենական իրենց քոյրերուն կամ եղբայրներուն:

Այդ իսկ պատճառով, Հ.Մ.Ը.Մ.ին վերաբերող որեւէ ուրախ կամ տխուր առիթ աշխարհասփիւռ միութենականները կը մէկտեղէ՝ միասին ուրախանալու կամ սգալու:

Տարօրինակ չէ, որ եղբ. Արմանտո Թորգոմեանին մահը սգացին եւ տակաւին կը սգան իրեն ծանօթանալու բախտաւորութիւնը ունեցող միութենական քոյրերն ու եղբայրները:

Անկեղծութեան եւ նուիրումի խորհրդանիշ եղբ. Արմանտոյին ծանօթանալը մարդկային կեանքի մէջ օրհնութիւն մըն է, որուն արժանացայ 15 տարի առաջ: Ժողովներուն՝ ուշադիր հետեւող, լուռ, բայց արթուն եղբ. Արմանտոն ընդհանրապէս վերջին արտայայտուողներէն մէկը կ'ըլլար՝ արժանութիւնեան իր իւրայատուկ ոճով, միտքը փոխանցելու յատուկ դարձուածքներով եւ մանաւանդ՝ առանց վիրաւորելու իր քննադատութիւնը տեղ հասցնելու նպատակով: Երիտասարդութիւնը սերտօրէն միութեան կապելու իր փափաքը միշտ առաջնահերթ տեղ ունէր իր առաջարկներուն մէջ: Եղբայր Արմանտոն ունէր իւրայատուկ եւ գրաւիչ ոճ մը, որ իրեն կը կապէր իր շրջապատը եւ ժողովականները: Արժանութիւնի հեռաւոր փիերուն մեծցած ըլլալով հանդերձ, իր հայկականութեան զգացումը եւ պատկանելիութեան զօրութիւնը անակրկալ կը մատնէր դիմացինը, որ օրուան աւարտին արդէն իսկ կ'ըլլար եղբ. Արմանտոյին գաղափարական խոր մօտեցումով, որուն խստութիւնը առաջին հերթին կը գործադրէր ինքն իր անձին վրայ:

Ով որ բախտաւորութիւնը ունեցած է ճանչնալու եղբ. Արմանտոն, միայն ու միայն դրական տպաւորութիւններ եւ յիշատակներ կրնայ արձանագրել առաքինի մեր եղբօր մասին, որ կանխահաս կերպով, անակնկալօրէն հեռացաւ այս աշխարհէն՝ իր վերջին ճամբորդութիւնը կատարելով դէպի յաւիտեանականութիւն:

Հայաստանը եւ Արցախը իր արեան մէջ կը հոսէին: Այնքան մտահոգ էր, այնքան տխուր՝ 2020-ի իրադարձութիւններով, որ իր ձայնը փոխուած էր, ոգեւորութիւնը տեղի տուած էր, բայց կրկին Հայաստան եւ Արցախ այցելելու տենչը զինք կը մղէր ծրագրիներ մշակելու եւ օժանդակութիւններ փոխանցելու: Շատ կ'ափսոսամ, որ չկարողացաւ իրականացնել իր փափաքը:

Եղբ. Արմանտոն ունէր յատուկ «տկար» կէտ մը՝ Արամիկը, 10 տարեկան իր մէկ հատիկ մանչուկը, որուն կը դաստիարակէր իր ճամբով՝ միութենական եւ գաղափարական: Արամիկը, որուն մասին երբ արտայայտուէր, աչքերը կը բոցավառէին, եւ հպարտութիւնը կը զգացուէր իր ձայնին մէջ:

«Քոյր Վերա՛, առողջ մնանք, որպէսզի օր մը Արամիկն ու Տեսիլը տեսնենք Հայաստանի մէջ տողանցող այս քոյրերուն եւ եղբայրներուն շարքին», կրկնած էր յաճախ՝ ինքնապատահ, որ տարբեր դաստիարակութեան պիտի չարժանանան մեր սիրասունները: Բայց կեանքը եւ պայմանները տարբեր ընթացք ունեցան, դժբախտաբար: Եղբ. Արմանտոն պիտի չկարենայ իր փափաքին իրականացման ներկայ գտնուիլ: Բայց վստահ եմ, որ իր կողակիցը, Արամիկին կնքահայրը եւ եղբ. Արմանտոյին միութենական քոյրերն ու եղբայրները պիտի շարունակեն Արամիկը առաջնորդել իր հօրը ուղիով՝ Հայաստանի, Արցախի եւ հայրենական նուիրական ճանապարհով:

Եղբ. Արմանտո՛, «կամաւոր բանակ»ին նուիրեալ մեր եղբայրը: Քու ազնուութիւնդ, քու վսեմ գաղափարներդ, քու մարդկային մօտեցումդ, բոլորին հանդէպ քու ունեցած հոգատարութիւնդ, քու անհատականութեանդ յատուկ առաքինի յատկանիշներդ վառ պիտի մնան մեր սրտերուն եւ յիշողութեան մէջ:

Բացակայութիւնդ զգալի է Պուէնոս Այրէսէն մինչեւ Պէյրութ:

Եթէ օր մը կարողացայ արժանի ըլլալ քու փափաքիդ իրականացման պահը վայելելու, վստահ եմ, որ դուն ալ անհունին ընդմէջէն պիտի ժպտիս՝ քեզի յատուկ համեստ ժպիտով:

Սաւառունէ՛ յաւիտեանականութեան մէջ, առաքինի՛ եղբ. Արմանտո:



# ՕՐԻՆԱԿԸ, ՈՐ ՄԵՉԻ ՉԳԵՑ

(Հ.Յ.Դ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈՒԲ ԹԱՊԱԳԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ)

**Բ**ոլոր վիշտերը անհատական են, բայց կան նաեւ հաւաքական վիշտեր: Անձնական կեանքի մէջ բազմաթիւ յիշատակներ կան, բայց ոմանք պէտք է հրապարակւին: Հաւաքական յիշողութիւնները, մասնաւորաբար անձնական խոր ցաւի ժամանակ, կը մղեն այդ յիշողութիւնները արտայայտելու՝ բացայայտելով անոնց պատգամը, որպէսզի օրինակ դառնան մեզի յաջորդողներուն:



Հայաստանի եւ Արցախի մէջ, երիտասարդները եւ իրենց դաստիարակութիւնը, հայոց լեզուի արժէքը, օրինակելի առաջ-

նորողութիւնը, Դաշնակցութեան եւ Հ.Ս.Ը.Ս.ի միութիւնը, անհատականն դէպի հաւաքականի կարելորութիւնը, Հարաւային Ամերիկայէն մինչեւ հայ աշխարհը եւ հայ աշխարհէն դէպի Հարաւային Ամերիկա գործակցութիւնը: Ան մեր շրջանը մօտեցուց իր համայն հայութեան:

Առաջնորդութեան բարձրագոյն տիպարը, որ ուղղեց մեզ: Այն օրինակը, որ մեզի ձգեց, որպէսզի շարունակենք եւ նաեւ փոխանցենք յաջորդող սերունդներուն:

Գրեթէ քառասուն օրեր անցան, որ իմ եղբայրս, իմ ընկերս լուր չտուաւ որ պիտի մեկնի:

Համերաշխ, հաւատարիմ եւ խիզախ մինչեւ վերջ:

Իր հետ ըմբռնեցի խիզախութեան արժէքը եւ պատկանելիութեան զգացումը:

Կ'ապրիմ մտքիս եւ հոգիիս մէջ այս տխրութեամբ, խօսքեր կը փնտռեմ վիշտս արտայայտելու համար, որպէսզի չխեղդուիմ լռութեան մէջ, ուր պիտի գտնեմ իր յիշատակը, եւ այնտեղ չմնալու համար՝ նորէն պիտի հաւաքուիմք, նորէն միասին պիտի ըլլանք, եւ նորէն պիտի զգանք Արմանտօն մեզի հետ:

«ԱՐՄԵՆԻԱ» ՕՐԱԹԵՐԹ  
3.10.2021

## Խ. ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Արմանտօն չկայ այլեւս:  
Բժիշկներուն առաջին եզրակացու-  
թիւնը այն էր, որ ուղեղին հասած վնաս-  
ը անդարմանելի է:

Յետոյ եկան հրաշքի մը, «երկու  
հրաշքի» սպասելու քանի մը օրերը:

Հրաշք չեղաւ:  
Յիշեցի Jacques Brel-ը.  
«Moi si j'étais l'Bon Dieu / Je crois  
qu'j'aurais des remords...»

«Ես եթէ բարի Աստուածն ըլլայի /  
կարծեմ խղճի խայթ կ'ունենայի»  
\*\*\*

«Et puis si j'étais l'Bon Dieu / Je  
crois que je ne serais pas fier / Je sais on  
fait ce qu'on peut / Mais il y a la  
manière»

«Եւ յետոյ եթէ ես բարի Աստուածն  
ըլլայի / կարծեմ (ըրածովս) հպարտ չէի  
ըլլար / գիտեմ, մեր ձեռքէն եկածը կ'ը-  
նենք / բայց ընելու ձեւն ալ կարելոր է»  
\*\*\*

«Et maintenant bon Dieu / Tu as bien  
rigolé / Et maintenant bon Dieu / Et  
maintenant j'veis pleurer»

«Եւ հիմա բարի Աստուած / լաւ ծի-  
ծաղեցար / եւ հիմա բարի Աստուած /  
եւ հիմա ես պիտի լամ»

Անիմաստ հարցում՝ ինչպէ՞ս պա-  
տահեցաւ: Պատճառահետեւանքային  
բացատրութիւններու փորձ մը վար-





# ԱՆՄՈՌ-ԱՆԱԼԻ ԱՐՄԱՆՏՈՅԻՆ. «ՈՉ ՈՔ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ Է, ԲԱՅՑ ԲՈԼՈՐՍ ԿԱՐԵՒՈՐ ԵՆՔ»

կածի կարգով, որ միայն գիտությունն սահմանափակումը կը վերահաստատէ: «Բժշկագիտությունը ըրաւ ամէն ինչ, գոր կարելի էր ընել», ըսած էր բժիշկը: Արկածը գրօսանքի ժամանակ, փատը, մարգարաղ մը, հաճելի ժամանց քանի մը ընկերներու հետ, ընթացիկ էր, ըսին, ամիսը անգամ մը կը հանդիպին քանի մը սէք խաղալու, ապա միասին ընթրելու, գրուցելու համար: Գոյի անհեթեթը աւելի բացայայտ չի՛ կրնար ըլլալ:

Այդ գոյը, կեանքը, անհատական թէ հաւաքական, հիմա պիտի շարունակուի առանց Արմանտոյին:

Առաջինը, անհատական կեանքի շարունակումը, ընդհանրապէս այլընտրանք չունի: Երբեմն-երբեմն կը յիշես ձոնին, Նորիկը, Արմանտոն... Ինչպէս ուրիշներ, թերեւս, կը յիշեն այսպէս, յանկարծակի, անհեթեթ բացակայութիւնները ուրիշներու: Յետոյ կ'ընես/ն'նք ամէն ինչ որ պատճառահետեւանքային բացատրութիւն ունի, սկսած շնչելու ամենապարզ, ամենաշուտ մոռցրուող արարքէն: Քանի որ կաս/ն'նք գոյին մէջ: Երբ, երբեմն-երբեմն յիշես ձոնին, Նորիկը, Արմանտոն կամ ուրիշները՝



ըր՝ այն միւսները, որոնց անուն մականունը կամ անձնօթութիւնը իրենք միայն գիտեն, մի՛ մոռնար լուռ ժպտելու: Միգիֆին նման, որ բարձունքէն կ'իջնէ հսկայ ժայռը կրկին բարձրացնելու համար, գիտնալով որ ան կրկին պիտի գլտորուի: Միայն այդ ժպտը ունիս՝ Աստուածներու պատիօթին, «Աստուծոյ ծաղը»ին, մարդկային ճակատագիրին:

Միւսը, հաւաքականը, գոյութիւն ունենալու ազատ որոշում է, որուն հասարակագիտական բացատրութիւնը տակաւին կը փորձենք բանականացնել Սփիւռքի մէջ, առանց որ որեւէ տեսութիւն ինքզինք փաստէ իբրեւ ամբողջականորէն համոզիչ: Չունինք ոչ իսկ ուսումնասիրական հարցումը, մեթոտը՝ փոփոխակները ճշդելու, սկզբունքային վարկածը... բայց նաեւ գիտենք, որ ոչ մէկ ուսումնասիրական հարցում, ոչ մէկ մեթոտ՝ փոփոխակները ճշդելու, ոչ մէկ սկզբունքային վարկած պիտի ըլլան այնքան համոզիչ՝ որքան անանձնական նուիրումի կենդանի օրինակները, ինչպիսին էր Արմանտոն:

Եւ եթէ բոլոր անոնք որոնք զինք

ճանչցան ժողովներու, բանակումներու, դասախօսութիւններու, դաստիարակչական հանդիպումներու թէ պարզ ընկերական գրոյցի մը ընթացքին, եւ իրմէ անպայման պահեցին իր ջերմութեան յիշատակը, ժպիտին հարազատութիւնը, անգուգական համեստութիւնը, իրմէ քանի մը բառ, քանի մը հնչիւն, պատգամ մը որ արձանագրուած է տեղ մը, իր անսակարկ համոզումը, որ մեր հաւաքական գոյութիւնը կամք է, բայց մանաւանդ ամէնօրեայ աշխատանք, հասնիլ ամէն տեղ, ամէնուն, անխտիր... եթէ զինք ճանչցողէն իւրաքանչիւրը կարենայ իր մէջ յայտնաբերել բեկոր մը, զոր Արմանտոն անպայման ձգած կ'ըլլար, այն ատեն թերեւս թէկուզ եւ չհասկնանք, թէ ինչպէ՞ս, բայց արդէն հաւաքականօրէն ըլլալու ազատ որոշումը առած կ'ըլլանք:

«Մեզմէ իւրաքանչիւրը մեր կազմակերպութիւններուն անհատապէս տալիք ունի: Բայց մեր ուժը մեր հաւաքականութեան մէջն է»:







Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության վաղամեռիկ անդամ եղբ. Արմանյո Թորգոմեան իր մասնակցությունը բերած է միության վերջին եօթը Պարզամատրական Ընդհանուր Ժողովներուն, 1995-2019: Պարզամատրական ութերորդ Ընդհանուր Ժողովին, 2003-ին, Հայաստան, ան ուշադրությունը գրաւած է ժողովի մասնակիցներէն, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ի անդամ եղբ. Պեդրոս Շենմեսեանին (1938-2006), որ ժողովէն վերադարձին, «Մարզիկ»ի էջերէն («Մարզիկ», թիւ 251-252, էջ 40-41) հեղինակ գրութիւնը նուիրած է իրեն եւ ժողովական այլ եղբոր մը, երկուքն ալ ամերիկածին Հ.Մ.Ը.Մ.ի անդամներ:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՄԱՆՏՈՒՆԵՐԸ

Սկիզբէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ժողովներուն տիրական ներկայութիւն եղած են Միջին Արեւելքի երկիրներէն արտագաղթած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրները: Անոնք Արեւմուտքի իրենց երկիրներուն մէջ տարիներ շարունակ յաջողած են փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ աւանդը, ու հին ոգեւորութեամբ մինչեւ օրս կը գործեն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ:

Արդարօրէն, վերոյիշեալ եղբայրները «Մարզիկ»ի վերջին թիւերէն մէկուն մէջ անուանած էի «Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելքի առաքեալները» («Մարզիկ», թիւ 247, էջ 5-6): Այս եղբայրներուն ներկայութիւնը միութեան Պատգամաւորական Ժողովներուն կող տար այն տպաւորութիւնը, թէ երկար տարիներ իրարմէ բաժնուած հին բարեկամներու հաւաք մը եղած ըլլար ան, կամ՝ վարժարանի մը հին սաներուն վերամիացումը:

Աւելի քան քսան տարիէ ի վեր վերոյիշեալ պատկերին դիմաց գտած եմ ինքզինքս: Ամէն անգամ ալ ունեցած եմ ուրախութեան եւ տիրութեան խառն զգացում մը: Ուրախութեան, որովհետեւ այդ ժողովներուն կը հանդիպէի երկար տարիներէ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու, որոնց հետ կը կիսէի պատանեկան եւ երիտասարդական անդառնալի յիշատակներ ու քաղցր ապրումներ: Տիրութիւն, որովհետեւ չէի տեսներ «Արեւելքի առաքեալներ»ուն սերնդակերտ աշխատանքին արժանիքը: Սերունդ, որ արեւմտեան աշխարհին մէջ ծնած ըլլալով՝ Հ.Մ.Ը.Մ.ի շունչով եւ գաղափարականով սոսկորուած ըլլար: Ու հետզհետէ «Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելքի առաքեալներ»ուն մէջ կը տեսնէի միութեան վերջին մոհիկանները:

Ութերորդ Պատգամաւորական Ժողովին գտա՛յ փընտուածս: Գտայ արեւմտեան ափերուն ծնած ու մեծցած, Հ.Մ.Ը.Մ.ի շունչով թրծուած Հ.Մ.Ը.Մ.ական Արմանտներ ու Արմանտներ: Արմանտը ծնած ու մեծցած էր Սան Ֆրանսիսքօ, իսկ Արմանտսն՝ Պուէնոս Այրէս, Արժանիքին: Երկուքն ալ հայերէն լեզուն կը խօսէին սահուն, բառեր չէին կոտրտեր կամ փնտուեր, թէեւ գերծ չէին օտար լեզուին շեշտադրումէն: Մանաւանդ երբ Արմանտս կը խօսէր, սպանական այնքա՛ն անոյշ երաժշտութիւն է որ կը լսուէր հայերէն բառերուն ար-

ձագանգէն, իսկ երբ ձայնը կը բարձրացնէր՝ կարծես մաթատորն էր, որ յաղթահասակ կը կանգնէր դիմաց: Անոնք ժողովներուն մասնակցեցան ժողովականի ամբողջական դիտակցութեամբ: Օրակարգի հարցերուն մօտեցան առարկայական եւ քննական ակնոցով: Առարկեցին, վիճեցան, իրենց տեսակէտը լաւագոյնս պաշտպանեցին: Անոնք ժողովական իրենց արտայայտութեանց մէջ չսխալեցան: Լուսաբանական հարցումներու օրակարգը չչփոթեցին ըստ էութեան քննութեան օրակարգին հետ: «Ըստ կարգի» իրենց միջամտութիւնները իսկապէս ըստ կարգի եղան: Քաջածանօթ էին միութեան կանոնադրի տառին եւ ոգիին: Մանաւանդ ոգիին: Իրենց համար անըմբռնելի էր, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ մը նիւթական վարձատրութիւն կը ստանար Սուրբոյ եւ Լիբանանի մէջ: Իրենց համար ի գուր էին Լիբանանի եւ Սուրբոյ պատգամաւորներուն ինքնարդարացման ճիգերը, թէ այդ երկու երկիրներուն մէջ մարզական մրցակցութիւնը տարբեր իմաստ ունի: Հ.Մ.Ը.Մ. կը մրցի այդ երկիրներու արտյեանութեան համար: Թէ վերոյիշեալ մրցակցութիւնը ունի ազգային, համայնքային, քաղաքական ու տնտեսական գունաւորում: Թէ Սուրբոյ եւ Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ. եղած է մար-







զական ռահվիրայ կազմակերպութիւն: Թէ զոյգ երկիրներու հայու թիւնը, ինչպէս ողջ հայու թիւնը, Թէ քէեանի խօսքերով հացի ու ջուրի պէս յաղթանակի հպարտանքի կարօտը ունեցած է եւ ունի՛:

Այս բոլորը գրեթէ բան չեն ըսեր Արմանտին եւ Արմանտոյին, որոնք կառչած կը մնան Հ.Մ.Ը.Մ-ի զոհաբերութեան եւ ոգեղէն աւանդին:

Մասնակից ժողովականները վկայեցին, թէ Հ.Մ.Ը.Մ-էն ներս ստուար թիւ կը կազմեն Հ.Մ.Ը.Մ-ական Արմանտներն ու Արմանտօները: Լոս Անճելըսէն եղբայր մը հայրական հպարտութեամբ խօսեցաւ համալսարանաւարտ տղուն Հ.Մ.Ը.Մ-ի նուիրումին մասին: Շրջանէն այլ պատգամաւոր մը, փաստաբանական գրասենեակի տէր եղբայր մը, Հ.Մ.Ը.Մ-ականի յարգանք պարտադրեց իր չորս դին: Մոնթրէալ ծնած սկառուտ խմբապետ մը յոյս ներշնչեց, թէ ինք եւս վճռած է քալել Հ.Մ.Ը.Մ-ական իր հօրը ճամբայէն:

Հ.Մ.Ը.Մ-ի «Արեւելքի առաքեալներ»ուն սերմանած հունտերը իսկապէս ինկած են Աւետարանի խօսքով «պարարտ հողի վրայ»: Ու արեւմտեան աշխարհի Հ.Մ.Ը.Մ-ական Արմանտօները կը մնան կենդանի երաշխիք, թէ Հ.Մ.Ը.Մ- իր ժողովուրդին պէս յաւերժ է ու իր պատմական գետին՝ Արաքսին պէս մշտահոս է, դարերէն եկող ու դարերուն գացող:



## ԱՆԴՐԱԴԱՐՁ

Կան լուրեր, որոնք դժուար է հրատարակել: Այս շաբաթ մեր գաղութը ունեցաւ երկու մեծ կորուստ: Յանկարծակի մահով կեանքէն հեռացաւ երիտասարդ Ֆրանքօ Փամպուքժեան, որ Յ.Ս.Ը.Մ-ի ներկայացուցիչն էր Արժանթինի համայնքի միջ-երիտասարդական վարչութեան մէջ, եւ մեր սիրելի ընկեր ու ղեկավար Արմանտօ Թորգոմեանը:

Արմանտօ Թորգոմեան անխոնջ աշխատող անձ մըն էր, միշտ ներկայ՝ ուր որ պէտք էր: Հաւատարիմ իր սկզբունքներուն, ան լաւ բարեկամ էր: Արմանտօն յարգուած էր բոլորին կողմէ: Ան բարձր պաշտօններու արժանացաւ Յ.Ս.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ.ի շարքերուն մէջ եւ վերջին տարիներուն ժրաջան կերպով աշխատեցաւ խրիմեան վարժարանին մէջ:

Հո՞ծ բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ Արմանտոյին վերջին յարգանքին, «Արմենիա» Մշակութային Ընկերակցութեան շէնքին մէջ, ուր Գլաուտիան՝ իր կինը շնորհակալութիւն յայտնեց բոլորին ներկայութեան, խոստանալով իր փոքրիկ գաւակին փոխանցել իր հօր՝ Անմանտոյին ձգած պատգամը:

Արմանտոյին վերջին հրաժեշտը տրուեցաւ երգելով այն տխուր երգը, որ կը նուիրուի մեզմէ յաւետ բաժնուած ընկերներուն: Երգ մը, որ կը ներկայացնէ Ֆետայի մը, որ մահուան վերջին վայրկեանին ընկերներուն կը փոխանցէ իր պայքարը շարունակելու պատգամը, ինչպէս որ Արմանտօն յայտնեց առիթով մը:

«ԱՐՄԵՆԻԱ» ՕՐԱԹԵՐԹ  
26.8.2021





Եղբայր Արմանյո Թորգոմեանէն արժէքաւոր մասունք մըն է սպորտէն փրուած գրութիւնը, որ իբրեւ պատգամ արտասանուած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական

մարզական առցանց Ա համագումարի երկրորդ օրուան բացման նիստին, 15 Մայիս 2021-ին (Տե՛ս «Մարզիկ» թիւ 422, էջ 38-39):

Եղբայր Արմանյո սովորութիւն չունէր իր խօսքերը գրելու, սակայն նախախնամութիւնը այնպէս մը փնտրիմեց, որ այդ օր ան արտայայտուեցաւ գրաւոր եւ այդ խօսքը իրմէ մնաց իբրեւ կրակ, թելադրիչ պատգամ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական բանակի ներկայ ու սպազայ ներկայացուցիչներուն:

Յետ մահու, եղբոր ընդհանրական պարագաները գրութիւնը գրան իր անչնական համակարգիչին մէջէն եւ զայն փրամադրեցին խմբագրութեան առ ի հրատարակութիւն:

**Յ**աճախ կը մտածենք, թէ ինչո՞ւ այդքան դժուար է մեր մարզիկները դաստիարակել կամ ինչո՞ւ այդքան դժուար է մեր մարզիկներուն հասկցնել, թէ ի՞նչ կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ ըլլալ:

Համոզուած եմ, որ բազմաթիւ պատճառներ կան, սակայն քանի մը հատը բաւական զգալի են, եւ կարելոր է որ մատնանշենք ու անոնց մասին անդրադառնանք:

Առաջին պատճառը՝ յստակ նպատակ չունենալն է: Նպատակ չունենալ կը նշանակէ մարզական կեանքը ո՛չ թէ միջոցի, այլ՝ նպատակի վերածել, մինչդեռ մենք ունինք աւելի բարձր նպատակներ, որոնք կապուած են մեր հայ ինքնուրթեան եւ մեր հիմնական արժէքներուն հետ, եւ շատ կարելոր է որ մենք՝ վարչականներս, մարզիչները եւ մարզիկները այս տարբերութիւնը շատ յստակ գիտնանք: Ընդհանրապէս կը պատահի, որ միջոցները ինքնին նպատակ կը դառնան եւ այդ ժամանակ մենք կը ձախողինք:

Փոքր օրինակ մը. խումբի մը ամենալաւ խաղացողները կ'ընտրենք առանց մտածելու, եթէ ամենալաւ Հ.Մ.Ը.Մ.ականներն են անոնք, մասնաւանդ երբ Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկի մը մասնակցութեան մասին կը խօսինք:

Մեր մարզիկները պէտք է գիտնան, որ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնելը միայն վահանով չապիկ մը հագուելի եւ դաշտ իջնել չէ: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկը օրական 24 ժամ կը



ներկայացնէ մեր միութեան արժէքները եւ ոգին: Երբ մարդոց հետ կը յարաբերի, իր կեցածքներով ան ցոյց կու տայ, թէ ի՞նչ տեսակ անձ մըն է:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկը պէտք է որ գիտնայ, որ դիմացի խումբին խաղացողները թշնամի չեն, մասնաւանդ Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկի մը ժամանակ: Անհրաժեշտ է որ գիտնայ, թէ այն շապիկը զոր կը կրէ, կը ներկայացնէ իր հայ ինքնութիւնը, եւ ինքը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ, կը քարոզէ եւ կը փոխանցէ մեր արդար պահանջները:

Մեր մարզիկները պէտք է շատ յստակ գիտնան, թէ որո՞նք են համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու նպատակները, ի՞նչ կը

Շատ կարելոր է, որ երիտասարդներուն հետ շատ աշխատինք, մանաւանդ պատկանելիութեան զգացում տալու համար իրենց: Երիտասարդները պէտք է զգան, որ այս միութեան մէջ շատ կարելոր տեղ եւ դեր ունին, եւ այդ դերը պէտք է յանձնառութեամբ կրեն իրենց ուսերուն վրայ, ինչպէս որ իրենց նախորդող սերունդները կրեցին:

Մեր մարզիկները պէտք է գիտնան, որ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնելը միայն վահանով չապիկ մը հագուելի եւ դաշտ իջնել չէ: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկը օրական 24 ժամ կը ներկայացնէ մեր միութեան արժէքները եւ ոգին: Երբ մարդոց հետ կը յարաբերի, իր կեցուածքներով ան ցոյց կու տայ, թէ ի՞նչ տեսակ անձ մըն է:



# ՀԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ը ՅԱՂԹԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

մասնակցութեան առաւելութիւնը, շեշտը դնելով, որ միայն այսպիսի գաղափարախօսական կազմակերպութիւն մը, ինչպէս որ է Հ.Մ.Ը.Մ.Ը, կ'իրականացնէ մեր երազը:

Այս բոլոր նպատակները, որոնք գիտենք, կը բաժնեկցինք եւ կը կարծենք որ վարչականները եւ մարզիկները գիտեն, կըրնան մատահեցնել, թէ փորձառութիւնը, փաստը ցոյց տուաւ մեզի, որ այդպէս է:

Բայց այս մէկուն յանցանքը մարզիկներուն է, այլ՝ վարչականներուն կամ մարզիչներուն է, որոնք թոյլ կու տան որ նման դէպքեր պատահին, եւ ճամբորդելէ առաջ մարզիկներուն չեն բացատրեր եւ դաստիարակեր, թէ ինչ՞ու համա-Հ.Մ.Ը.Մ.Ը-ական խաղերու կը մասնակցին:

Երկրորդ պատճառը՝ օրինակը: Շատ կարեւոր է ճիշդ օրինակներ ունենալ, մանաւանդ մեր կրտսեր մարզիկներուն համար: Մեր վարչականները, մեր մարզիչները եւ մեր երիտասարդ մարզիկները պէտք է օրինակ դառնան մեր կրտսեր մարզիկներուն: Եթէ փորձի կամ խաղի ժամանակ վարչականը կամ մարզիչը պոռայ, կռուի, հայտնի կամ որեւէ սխալ կեց-լածք ունենայ, չենք կրնար սպասել, որ մեր մարզիկները նոյնը չկրկնեն: Հոս կ'ուզեմ մատնանշել մեր երիտասարդ մարզիկներուն դերը, որուն պիտի անդրադառնամ երրորդ կէտով:

Երրորդ՝ դաստիարակութիւն: Դաստիարակչական բաժինը շատ կարեւոր է: Դաստիարակութիւնը պէտք է ծրագրուած ըլլայ, ունենայ տարբեր հանգրուաններ, իւրաքանչիւր տարիքի համար օգտագործելով տարբեր միջոցներ: Անշուշտ, որ Կեդրոնական Վարչութիւնը կրնայ ուղղութիւն տալ, բայց անհրաժեշտ է, որ գիտնանք, թէ այս աշխատանքը ամէն մէկ մասնաճիւղի, ամէն մէկ շրջանի ամէնօրեայ աշխատանքն է: Պէտք է ըլլայ առաջնահերթութիւն, պէտք է ըլլայ իւրաքանչիւր ժողովի օրակարգի վրայ: Եթէ օրակարգին մաս չկազմէ, չի գործադրուիր: Եթէ չգործադրենք, անպայման կը ձախողինք:

Մենք չենք կրնար սպասել, որ մեր մարզիկները դաստիարակուին, եթէ մենք յանձնառու կերպով չենք մօտենար այս հարցին: Անհրաժեշտ է որ ամէն մէկ վարչական, մարզական պատասխանատու եւ մարզիչ նախ ինք դաստիարակուի, պատրաստուի, թէ ի՞նչ ձեւով պէտք է մօտենալ այս հարցին, տարբեր տարիքի մարզիկներու հետ աշխատելու ժամանակ: Ի՞նչպէս ընել, որ մանաւանդ մեր երիտասարդ մարզիկները դաստիարա-

Մենք չենք կրնար սպասել, որ մեր մարզիկները դաստիարակուին, եթէ մենք յանձնառու կերպով չենք մօտենար այս հարցին: Անհրաժեշտ է որ ամէն մէկ վարչական, մարզական պատասխանատու եւ մարզիչ նախ ինք դաստիարակուի, պատրաստուի, թէ ի՞նչ ձեւով պէտք է մօտենալ այս հարցին, տարբեր տարիքի մարզիկներու հետ աշխատելու ժամանակ:



կիչ օրինակ դառնան մեր կրտսեր մարզիկներուն:

Մեր կրտսեր մարզիկներուն համար հայրն ու մայրը իրենց տեղը ունին, վարչականը՝ իր տեղը: Բայց մարզիչը եւ իրմէ երէց մարզիչը, որուն կ'ուզէ տեսնել եւ նմանիլ ան, շատ կարեւոր դեր ունի իբրեւ օրինակ: Այն անձը, որ կրնայ խորհուրդ տալ իրեն, օգնել, բացատրել Հ.Մ.Ը.Մ.Ը-ական ըլլալու հպարտութիւնը: Վերջի վերջոյ այդ կ'ըսէ մեր նշանաբանը՝ բարձրանալ եւ իր հետ ուրիշները բարձրացնել:

Անոր համար շատ կարեւոր է, որ երիտասարդներուն հետ շատ աշխատինք, մանաւանդ պատկանելիութեան զգացում տալու համար իրենց: Երիտասարդները պէտք է զգան, որ այս միութեան մէջ շատ կարեւոր տեղ եւ դեր ունին, եւ այդ դերը պէտք է յանձնառութեամբ կրեն իրենց ուսերուն վրայ, ինչպէս որ իրենց նախորդող սերունդները կրեցին:

Շատ կարեւոր է, որ գործի լծուինք եւ մեր մասնաճիւղերը իրենց մարզական բաժիններուն համար ունենան դաստիարակչական մնայուն ծրագիրներ, տարբեր հանգրուաններով, ինչպէս որ ունին մեր սկաուտները:

Կեդրոնական Վարչութիւնը վստահ է, որ եթէ կարողանանք դաստիարակչական այս մարտահրաւէրը յաղթահարել, 100-ամեակի մեր նշանաբանը կ'իրականանայ եւ հայրութիւնն ու Հ.Մ.Ը.Մ.Ը-ը անպայման յաղթական ապագայ կ'ունենան:

Մեր վարչականները, մեր մարզիչները եւ մեր երիտասարդ մարզիկները պէտք է օրինակ դառնան մեր կրտսեր մարզիկներուն: Եթէ փորձի կամ խաղի ժամանակ վարչականը կամ մարզիչը պոռայ, կռուի, հայտնի կամ որեւէ սխալ կեցուածք ունենայ, չենք կրնար սպասել, որ մեր մարզիկները նոյնը չկրկնեն:

# ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Խորազգաց ցաւակցութիւններս կը յայտնեմ ընկեր եւ եղբայր Արմանտոյի անժամանակ մահուան առիթով: Շատ կանուխ էր եւ մեծ կորուստ է:

Կը խնդրեմ, որ ցաւակցութիւններս փոխանցէք նաեւ իր ընտանիքին ու հարազատներուն:

Աստուած հոգին լուսաւորէ եւ երկնային անդորր պարգեւէ:

Վստահ եմ, որ իր յիշատակը պիտի մնայ անթաշտ եւ իր օրինակը սերունդներու ներշնչման աղբիւր պիտի հանդիսանայ:

Վշտակցաբար՝

**ՅԱԿՈՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**  
*Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ*

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով իմացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, վաստակաշատ եղբ. Արմանտօ Թորգոմեանի վաղաժամ մահուան գոյշը:

Եղբայր Արմանտօ Թորգոմեանը իր ազգաշէն գործունէութեամբ մեծ դերակատարութիւն ունեցած է Պուէնոս Այրէսի, Հարաւային Ամերիկայի եւ աշխարհասփիւռ հայ գաղութներէն ներս. կորուստը պիտի զգացուի բոլորիս կողմէ: Լիայոյս ենք, որ իր շունչին տակ մեծցած երիտասարդները պիտի ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի եւ ազգային արժէքներու ապագայ դրօշակակիրները:



ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անունով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, ինչպէս նաեւ հանգուցեալին հարազատներուն, պարագաներուն եւ բոլոր բարեկամներուն:

Ընկերական ջերմ բարեւներով՝

**ԴՈԿՏ. ՆԱՅԻՐԻ ՏԵՐՏԵՐԵԱՆ**  
*Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի*

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Սրտի խոր կսկիծով իմացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի կանխահաս մահը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, անփոխարինելի կորուստին համար:

Կը գիտակցինք, թէ որքա՞ն դժուար է Հ.Մ.Ը.Մ.ականի մահը, ի մասնաւորի հանգուցեալ եղբ. Թորգոմեանի պէս անդամի մը կորուստը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար:

Ընդունեցէք մեր անսահման մխիթարութիւններն ու համբերութեան կամքը: Թող ամենակարող Աստուած հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ երկինքի արքայութեան արժանի ընէ:

Հ.Մ.Ը.Մ.ական բարեւներով՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ՀԻՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր եւ Արեւելեան շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի համայն ընտանիքին անունով կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու ձեզի, մեր սիրելի եղբօր՝ Արմանտօ Թորգոմեանի կանխահաս մահուան տխուր առիթով:

Եղբայր Արմանտոյին լուսաւոր յիշատակը փարօսը պիտի ըլլայ մեր ապագայ սերունդներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական բարձր ոգիով պիտի շարունակեն իր





սկսած գործը աւելի հաստատ ու վճռական:

Տերը Իր Սուրբ Հոգիով մխիթարէ ձեզ, հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ արժանացնէ յաւիտենական կեանքի:

Եղբայրական ջերմ բարեւներով՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.Ի  
Կեդրոնական Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը իր մասնաճիւղերով եւ անդամներով խորին ցաւակցութիւններ կը փոխանցէ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմին եւ աշխարհասփիռ շրջաններուն, Թորգոմեան ընտանիքին եւ հարազատներուն, տարիներ ծառայած Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին եւ մասնաւորապէս Հարաւային Ամերիկայի Արժանքինի հայ գաղութին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեանի մահուան սուգին առիթով:

Եղբ. Արմանտոյին յիշատակը դրոշմուած պիտի մնայ մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ:

Խունկ ու աղօթք իր հոգւոյն խաղաղութեան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՒՏՏՐԱԼԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.Ի  
Կեդրոնական Վարչութիւն,

Սրտի խոր ցաւով իմացանք համեստ, կուսակցական եւ միութենական տիպար, Հարաւային Ամերիկայի Հ.Յ.Դ. «Ահարոնեան» Կեդրոնական Կոմիտէի նախկին անդամ, Հ.Մ.Ը.Մ.Ի տարիներու եւ ներկայի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ եղբ. Արմանտո Թորգոմեանի վաղախա մահուան լուրը:

Դժուար է գտնել մխիթարական խօսքեր մանաւանդ սիրելի եւ յարգելի եղբոր մը կորուստին պարագային:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի շրջանին անունով մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք եղբոր ընտանիքին, պարագաներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիռ կառոյցին, մաղթելով որ հանգուցեալ եղբոր յիշատակը վառ կը մնայ բոլորին հոգիներուն մէջ եւ կ'արժանանայ երկինքի արքայութեան:

Կ'աղօթենք իր հոգւոյն խաղաղութեան համար:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան,  
Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան  
եւ Թորգոմեան ընտանիքին,

Սգակիր քոյրեր եւ եղբայրներ,

Խոր վիշտով եւ անհուն կսկիծով ստացանք մահուան գոյժը Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեանի: Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը եղբոր անակնկալ մահուամբ կը կորսնցնէ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.Ի անդամ մարզիկ մը, նուիրեալ միութենական մը եւ վարչական բազմավաստակ ծառայութիւն ունեցող եղբայր մը:

Եղբ. Արմանտոն մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրեսի մասնաճիւղի պատմութեան մէջ: Իբրեւ մարզիկ, սկաւուտ, հաւատաւոր միութենական եւ Շրջանային Վարչութեան ատենապետ ան իր անսակարկ ծառայութեամբ տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.Ի ազգային եւ բարոյական սկզբունքներուն պաշտպանը հանդիսացած է:

Համեստ նկարագրի, յարգալի մօտեցումի եւ սիրալի վերաբերումի տէր անձնաւորութիւն մը, որ ազգին շահերը իր անձնական կեանքէն վեր գերադասելով եւ միութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը իր կեանքին ուղեցոյցը դարձնելով՝ նուիրաբար ծառայեց, բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց աշխատունակ ոգի ունեցող Հ.Մ.Ը.Մ.Ի անդամները: Իր կենսունակ աշխատանքով ան քաջալերեց երիտասարդները եւ նոր սերունդին օրինակ հանդիսանալով ազգային գաղափարախօսութիւն սերմանեց անոնց մէջ: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան աշխարհատարած աշխատանքներուն նուիրուելով, իբրեւ Կեդրոնական Վարչութեան անդամ, ան տազնապէցաւ միութեան դիմագրաւած դժուարութիւններով եւ իր լաւագոյնը տուաւ միութեան վերելքին ի խնդիր:

Իր անդառնալի կորուստին համար Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը կը ցաւակցի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ հանգուցեալ եղբոր ընտանեկան պարագաներուն:

Խունկ եւ աղօթք կը բարձրացնենք մեր բոլորին յարգելի անձնաւորութեան՝ հանգուցեալ եղբ. Արմանտո Թորգոմեանի հոգիին խաղաղութեան համար:

Թող Ամենակալը լոյսե-  
րու մէջ պահէ, երկինքի  
արքայութեան արժա-  
նացնէ իր հոգին եւ իր հա-  
րազատներուն սուրբ  
հոգւոյն մխիթարութիւն  
պարգեւէ:

Յիշատակն արդարոյն  
օրհնութեամբ եղիցի:

**Յ.Ս.Ը.Ս.Ի ՍՈՒՐԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



**Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական  
Վարչութեան,**

Յարգելի վարչական եղբայրներ,  
Գահիրէի Յ.Ս.Ը.Ս.-«Արարատ»ի վարչութիւնը իր  
եւ շրջանի անդամներուն կողմէ խորին վշտակցու-  
թիւն կը յայտնէ Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութեան  
երկար տարիներու անդամ ու բազմավաստակ  
Յ.Ս.Ը.Ս.ական եղբայր Արմանտօ Թորգոմեանի ընտա-  
նիքին՝ իր մահուան տխուր առիթով:

Մեր ցաւակցութիւնները նաեւ Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնա-  
կան Վարչութեան եւ Յ.Ս.Ը.Ս.Ի Հարաւային Ամերիկա-  
յի շրջանին եւ միութեան համասփիւռ մեծ ընտանի-  
քին:

Խունկ եւ աղօթք հանգուցեալ եղբօր հոգւոյն:

**ԳԱՀԻՐԷԻ Յ.Ս.Ը.Ս.-«ԱՐԱՐԱՏ»Ի  
ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Պատուարժան Յ.Ս.Ը.Ս.Ի  
Կեդրոնական Վարչութիւն,**

Յ.Ս.Ը.Ս.-Ֆրանսի Մեկուսի շրջանի վարչութիւնը  
սրտի խոր կսկիծով կը գուժէ Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական  
Վարչութեան անդամ եւ Յ.Ս.Ը.Ս.Ի Հարաւային Ամերի-  
կայի Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ  
եղբայր Արմանտօ Թորգոմեանի մահը, որ պատահե-  
ցաւ երեքշաբթի, 24 Օգոստոս 2021-ին, Պուէնոս Այրե-  
սի մէջ, Արժանքին:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Յ.Ս.Ը.Ս.Ի  
Կեդրոնական Վարչութեան, հանգուցեալ եղբօր ըն-  
տանիքին եւ հարազատներուն:

**Յ.Ս.Ը.Ս.-ՖՐԱՆՍԻ  
ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Պատուարժան Յ.Ս.Ը.Ս.Ի  
Կեդրոնական Վարչութիւն,  
Յարգելի քոյրեր եւ եղբայրներ,  
Յ.Ս.Ը.Ս.Ի Վիեննայի Մեկուսի շրջանի վարչութեան**

եւ բոլոր քոյրերուն ու եղ-  
բայրներուն անունով կը  
փոխանցենք մեր խորին  
ցաւակցութիւնները Յ.Ս.-  
Ը.Ս.Ի մեծ ընտանիքին, ի  
մասնաւորի Կեդրոնական  
Վարչութեան, վաստա-  
կաշատ Յ.Ս.Ը.Ս.ական,  
Կեդրոնական Վարչու-  
թեան անդամ եղբ. Ար-  
մանտօ Թորգոմեանի մա-  
հուան առիթով:

Իսկապէս որ բառերը  
բաւարար չեն արտայայ-  
տելու մեր խոր կսկիծը, եւ

դժուար է գտնել մխիթարական խօսքեր՝ ամոքելու  
մեծ կորուստին պատճառած ցաւը:

Կ'աղօթենք անոր հոգւոյն խաղաղութեան համար:  
Լոյսերու մէջ ննջէ եղբ. Արմանտօ Թորգոմեան:  
Յիշատակը անթառամ պիտի մնայ բոլոր  
Յ.Ս.Ը.Ս.ականներու հոգիներուն մէջ:  
Վշտակցութիւններով՝

**Յ.Ս.Ը.Ս.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՄԻ  
ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Սգակիր եղբայրներ,**

Հակառակ այն իրողութեան, որ եղբայր Արմանտո-  
յին մահուան բօթը սպասելի էր եւ բացի հրաշքէ մը՝  
անխուսափելի, այսուհանդերձ, եղբօր անժամանակ  
բաժանումը վստահ որ ծանր պիտի կշռէ նախ ընտա-  
նիքին եւ հարազատներուն վրայ, եւ ապա մեծ ընտա-  
նիքին, աշխարհասփիւռ Յ.Ս.Ը.Ս.Ի ընտանիքին իւրա-  
քանչիւր բաղադրիչ մասնիկին, մասնաւոր Կեդրոնա-  
կան Վարչութեան վրայ:

Այս տխուր առիթով կը փափաքիմ իմ խորագգաց  
ցաւակցութիւնները յայտնել Կեդրոնական Վարչու-  
թեան եւ ձեր միջոցով հանգուցեալին ընտանիքին եւ  
ի մասնաւորի Հարաւային Ամերիկայի Յ.Ս.Ը.Ս.Ի կա-  
ռոյցին:

Թող որ Տէրը իր մխիթարանքը շնորհէ հարազատ-  
ներուն եւ միութենական քոյրերուն եւ եղբայրներուն,  
իսկ հանգուցեալ եղբայրը արժանացնէ երկնային  
արքայութեան:

Թող որ եղբօր կորուստը առիթ մը ըլլայ վերանո-  
րոգ կորովով շարունակելու ազգօգուտ եւ ազգաշէն  
գործունէութիւնը, որուն նուիրուած էք իբրեւ Կեդրո-  
նական Վարչութեան անդամներ, եւ ձեր օրինակով  
խրախուսելու եւ առաջնորդելու Յ.Ս.Ը.Ս.ը:

**ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈՂԱՐԵԱՆ  
Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական  
Վարչութեան նախկին ատենապետ**



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,

Սիրելի վարչական եղբայրներ,

Խոր ցաւով տեղեկացայ եղբ. Արմանտօ Թորգոմեանի վաղաժամ մահուան գոյժը: Եղբ. Արմանտոյի անսպասելի մահով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը կորսնցնէ հաւատաւոր իր երիտասարդ անդամներէն մէկը, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանը՝ ծանայասէր ու բազմավաստակ միութենական մը:



լան առիթով կ'ուզեմ իմ ցաւակցութիւններս յայտնել բոլորիդ: Պարկեշտ եւ ազնիւ եղբօր մը կորուստը շատ ցաւալի լուր է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար: Աստուած հոգին լուսաւորէ:

Եղբայրական բարեւերով՝

**ԳՕԳՕ ՊԱԼԵԱՆ**  
**Հ.Մ.Ը.Մ.ի**  
**Կեդրոնական**  
**Վարչութեան**  
**Ճախկին անդամ**

Յարգա՜նք իր քաղցր յիշատակին:

Այս տխուր առիթով ընդունեցէք իմ խորագգաց ցաւակցութիւններս Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ եղբայր Արմանտոյի ընտանեկան պարագաներուն:

**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈԲԵԱՆ**  
**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական**  
**Վարչութեան Ճախկին անդամ**

Սգակիր եղբայրներ,

Հ.Մ.Ը.Մ.ական կրտսեր եղբօրս՝ Արմանտօ Թորգոմեանի վաղաժամ հեռացումը այս երկրաւոր կեանքէն հիասթափութեան եւ ընդվզումի դառն զգացումներով սուգի մատնեց Հ.Մ.Ը.Մ.ի բովանդակ ընտանիքը: Իր հաղորդական անհատականութիւնը պատնէշներ չունէր մտերմանալու բոլորին, զրուցակից եւ գործակից դառնալու իրմէ աւագ թէ կրտսեր քոյր-եղբայրներու հետ: Իր սրտաբուխ եւ խոհեմ արտայայտութիւնները ուշադրութիւնը կը գրաւէին իր խօսակիցներուն եւ ժողովականներուն:

Եղբ. Արմանտօն իր բոլորանուէր կեանքով կը մարմնաւորէր այն որակը, որ կոչուած էր հաւաքականութիւններ առաջնորդել: Ափսո՜ս, որ հիմա դառն իրականութեան հետ անհաշտ պիտի ապրին իր տիկինը, փոքրիկ Արամը եւ իր բոլոր Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները:

Յիշատակդ միշտ անթառամ մնայ, սիրելի՛ եղբ. Արմանտօ:

**ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական**  
**Վարչութեան Ճախկին անդամ**

Սիրելի եղբայրներ,

Խոր կսկիծով լսեցի եղբ. Արմանտօ Թորգոմեանի մահուան գոյժը:

Ցաւակցութիւններս կը փոխանցեմ հանգուցեալին ընտանեկան բոլոր պարագաներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Աստուած հոգիդ լուսաւորէ եղբ. Արմանտօ: Խունկ եւ աղօթք խնկելի յիշատակիդ:

**ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ**  
**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական**  
**Վարչութեան Ճախկին անդամ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Սրտի խոր կսկիծով իմացայ Վարչութեանդ անդամ՝ եղբ. Արմանտօ Թորգոմեանի կանխահաս եւ անդարման մեծ կորուստը:

Որպէս մահկանացուներ կը փորձենք մխիթարական բառերով սփոփել հանգուցեալի ընտանիքին անդամները եւ հարազատները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանիքի հաւատաւոր ընտանիքը, սակայն մեր լեզուն կը պապանձի եւ մեր գրիչը կը չորնայ:

Քրիստոնէական հաւատքով զօրացած միայն կըրնանք ունենալ երկնային մխիթարութիւն:

Եղբ. Արմանտօ Թորգոմեանի ցանած ընտրեալ սերմերը պիտի ծաղկին իր հաւատաւոր հետեւորդներուն մէջ:

Յիշատակդ անթառամ, սիրելի՛ Արմանտօ:

**ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆ**  
**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական**  
**Վարչութեան Ճախկին անդամ**

Յարգելի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Ձեր կազմէն եւ իմ սիրելի եղբօրս Արմանտոյին մահ-

Ահաւոր կայծակով մը շանթահարուելու համազօր արարք մըն էր եղբայր Արմանտոյին Ֆիզիքապէս այս կեանքէն անժամանակ եւ յանկարծակի բաժնուելու գոյժը ստանալը:

Այո, եղբ. Արմանտոն մեզմէ միայն Ֆիզիքապէս բաժնուեցաւ, քանի որ ան իր կենցաղով, վարուելակերպով, հայրենասիրութեամբ, փոխ յարաբերութիւններով, ազնիւ հոգիով ու մանաւանդ միութենական հսկայ ներդրումով օրինակելի եւ Հ.Ս.Ը.Ս.ավայել ընթացք ունեցած է, ու բոլոր զինք ճանչցողներուն եւ գործելաոճին ծանօթ եղողներուն մօտ իւրայատուկ եւ գլխազիր ՄԱՐԴՈՒ տպաւորիչ դրոշմը ձգած է:

Ո՛չ, եղբայր Արմանտոն չմեռաւ:

Եղբայր Արմանտոն պիտի չմեռնի:

Եղբայր Արմանտոյին յիշատակը միշտ թարմ պիտի մնայ իր գծած օրինակելի, ծառայասէր եւ մաքուր նկարագիրի տէր Հ.Ս.Ը.Ս.ական տիպարի ընդմէջէն:

Խորին ցաւակցութիւններս Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքին եւ մանաւանդ Կեդրոնական Վարչութեան՝ իր անզնահատելի կորուստին համար:

Ցաւակցութիւններս եղբ. Արմանտոյին միշտ նեցուկ կանգնած կնոջ, իրեն մնայուն կերպով հպարտութիւն պատճառած զակին, հարազատներուն եւ բոլոր անոնց, որոնք վայելած են եղբ. Արմանտոյին հետ Հ.Ս.Ը.Ս.ի մէջ միասնաբար աշխատելու եւ իր անշահախնդիր ու աննկուն գործունէութեան մօտէն ականատես ըլլալու առանձնաշնորհունը:

Հողը թեթեւ գայ եղբայր Արմանտո Թորգոմեանի վրան:

**ՐԱՖԻ ԿԵՕՎՕՂԱՆԵԱՆ**  
*Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական  
Վարչութեան նախկին անդամ*

Սիրելի եղբայրներ,

2021 թուականը սեւ տարի մը եղաւ կազմակերպական մեր ընտանիքին համար: Յունուարին կորսընցուցինք եղբայր Գառնիկը եւ այժմ կ'իմանանք եղբայր Արմանտոյին մահիւն տխուր լուրը: Եղբայր Արմանտոյին մահը մեծ կորուստ մըն է իր ընտանիքին, հարազատներուն, Հ.Ս.Ը.Ս.ին եւ Հ.Յ.Դ.ին:

Անձնապէս բարեբախտութիւնը ունեցայ եղբայր Արմանտոն ճանչնալու շուրջ 20 տարի: Անցեալ Կեդրոնական Վարչութեան շրջանին մօտէն գործեցինք զանազան յանձնախումբերու մէջ:

Սիրելի եղբայրներ, կ'ուզէի խորին ցաւակցութիւն-



ներս փոխանցել Կեդրոնական Վարչութեան եւ համայն Հ.Ս.Ը.Ս.ի ընտանիքին: Աստուած հոգին լուսաւորէ: Խունկ ու աղօթք իր յիշատակին:

**ՎԻԳԷՆ ՔՈՐԹԵԱՆ**  
*Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական  
Վարչութեան  
Նախկին անդամ*

Խոր կսկիծով է, որ կը գրեմ այս տողերը՝ եղբայր Արմանտոյի կանխահաս մահուան գոյժը լսելով:

Սիրելի՛ եղբայր Արմանտո, յիշատակդ վառ պիտի մնայ ո՛չ միայն իմ սրտիս մէջ, այլեւ՝ Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքին մէջ, իբրեւ նուիրեալ եւ անձնագրի Հ.Ս.Ը.Ս.ական:

Իմ խորին ցաւակցութիւններս Թորգոմեան ընտանիքին, հարազատներուն, ինչպէս նաեւ Հ.Ս.Ը.Ս.ին:

Յիշատակդ անթառամ, սիրելի՛ եղբայր Արմանտո:

**ՀՐԱՉ ՄԵՍՐՈՊԵԱՆ**  
*Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական  
Վարչութեան նախկին անդամ*

Յարգելի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւն, Խորապէս ցաւում եմ եղբ. Արմանտո Թորգոմեանի վաղաժամ մահուան տխուր լուրի առիթով:

Խորին ցաւակցութիւնս եմ յայտնում իր ընտանիքին եւ Կեդրոնական Վարչութեան:

Աստուած հոգին լուսաւորէ: Հողը թեթեւ գայ եղբայր Արմանտո:

**ԱԼԷՔ ԽԱՉԱՏՐԵԱՆ**  
*Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական  
Վարչութեան նախկին անդամ*

Խոր ցաւով իմացայ վաղաժամ եւ անհաւատալի մահը արժանթինահայ մեր սիրելի եղբայր Արմանտո Թորգոմեանին: Իւրայատուկ անձնաւորութիւն մը, որ իր սիրալիր, ընկերային, օգնող եւ միութենական անկեղծ նկարագիրով գրաւած էր բոլորիս սրտերը: Եղբ. Արմանտոյի մահով Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքը եւ յատկապէս Հարաւային Ամերիկայի շրջանը կորսնցուց իրաւ ղեկավար մը, սիրալիր եղբայր մը եւ մանաւանդ հաւատարիմ ընկեր մը, որուն բացը շատ դժուար պիտի ըլլայ փակել:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի եղբայր: Յիշատակդ անթառամ:

**ՍԱՐՕ ՔԵՇԻՇԵԱՆ**



# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

Հ.Մ.Բ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանյո Թորգոմեան ծնած է Թորգոմ եւ Ալիս Թորգոմեաններու ընկերակցական հայաշունչ յարկին փակ, 8 Մարտ 1967-ին, Արժանքին: Ան աւարած է Պուէնոս Այրէսի Միքսարեան վարժարանը:

Փոքր փարիքէն աւ Հ.Մ.Բ.Ի անդամակցած է իբրեւ զայլիկ եւ մարզիկ: Հ.Մ.Բ.Ի հէկրպոլի խումբին հետ աւ հասած է մինչեւ ֆեդերատիոնի առաջին մակարդակի ախոյեանութիւն:

Լռակեաց, համեստ ու աշխատասէր եղբ. Արմանյո եղած է Պուէնոս Այրէսի երկրասարդական վարչութեան արեւնապետ: Ապա, մասնաճիւղի վարչական եւ այնուհետեւ Հ.Մ.Բ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան արեւնապետ, միշտ եւ ամենուր դրօշակակիրը հանդիսանալով Հ.Մ.Բ.Ի ազգային արժէքներուն եւ բարոյական սկզբունքներուն:

Հ.Մ.Բ.Ի անդամակցութեան կողքին, եղբ. Արմանյո Թորգոմեան եղած է հաւատարմոր դաշնակցական: Խոնարհ ու «անկեղծ զինուոր» հայութեան եւ Հայաստանի ազգագրութեան դասին: Ան եղած է Հ.Յ.Գ. Պուէնոս Այրէսի կոմիտէի ու ապա՝ Հ.Յ.Գ. Հարաւային Ամերիկայի «Ահարոնեան» Կեդրոնական Կոմիտէի անդամ: Ան մաս կազմած է նաեւ Պուէնոս Այրէսի Ազգ. Խորհմեան վարժարանի խնամակալութեան:

Իբրեւ մարզիկ եւ պարասպանապետ, եղբ. Արմանյո մասնակցած է համա-Հ.Մ.Բ.Ի ական բազմաթիւ մարզախաղերու, խորհրդածողովներու եւ հանդիպումներու՝ իր ողջմիտ կեցումներով եւ շրջահայեաց մօտե-



ցումներով արժանանալով բոլորին գնահատանքին ու յարգանքին: Ան իր մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Բ.Ի փաստերկու Պարգամաւորական Ընդհանուր Ժողովներէն եօթնին: 11-րդ Պարգամաւորական Ընդհանուր Ժողովին, 2015-ին, աւ ընկրուած է Հ.Մ.Բ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ չորս փարի ելք՝ 2019-ին վերընկրուած է քառամեայ նոր շրջանի մը համար, մաս կազմելով Կեդրոնական Վարչութեան մարզական եւ երկրասարդական յանձնախումբերուն:

Եղբ. Արմանյո ամուսնացած է եւ բախարաւորուած մանչ զաւակով մը՝ Արամ:

Հ.Մ.Բ.Ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով եղբ. Արմանյո Թորգոմեանի երկար փարիներու վաստակն ու աշխատանքը միութեան մէջ, նաեւ նկատի ունենալով նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ իր ունեցած մեծ ներդրումը, յեղ-մահու զայն պարգեւատրեց Հ.Մ.Բ.Ի բարչրագոյն «Արժանեաց» շքանշանով:

Նոյն առիթով, Հ.Մ.Բ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յայտարարեց եօթնօրեայ սուգ՝ իր համահայկական կառոյցի բոլոր շրջաններուն մէջ, պահանջելով որ այս միջոցին դադրին ընկերային բոլոր հաւարոյթները եւ դրօշակները կիսով բարչրացուին՝ առ յարգանք եղբոր յիշատակին:





## ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԸ ՇՐՋԱՆԷ ՇՐՋԱՆ

**3** Հոկտեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիռ մասնաճիւղերը հոգեհանգստեան արարողութիւններով նշեցին Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի կանխահաս մահուան քառասունըրդ Այս առիթով հոգեհանգստեան արարողութիւններ կատարեցան Պէյրութի Ս. Վարդանանց, Հալէպի Ս. Աստուածածին, Լոնտոնի Ս. Եղիշէ, Սիւնիի Ս. Յարութիւն, Աթէնքի Ս. Յակոբ, Կլէնտէյի Ս. Աստուածածին, Պուէնոս Այրէսի Ս. Գրի-

գոր Լուսաւորիչ, Գորտոպայի Ս. Գէորգ, Մոնթէվիտէոյի Ս. Ներսէս Շնորհալի, ինչպէս նաեւ՝ Արեւելեան Մ. Նահանգներու եւ Գանատայի շարք մը եկեղեցիներուն մէջ:



Հոգեհանգստեան արարողութիւններուն ներկայ գրանուեցան Հ.Մ.Ը.Մ-ի շրջաններու պատասխանատու կազմեր, անդամներ, սկաուտներ եւ եղբ. Արմանտոյին յիշատակը յարգող ազգայիններ:

Պէյրութի եւ Հալէպի մէջ, եկեղեցական արարողութիւններէն ետք, եղբոր յիշատակին ոգեկոչական խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան եւ Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան: Աթէնքի մէջ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Գոհար Արեանքեան:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան, Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի «Ահարոնեան» Կեղրոնական Կոմիտէին եւ բոլոր անոնց, որոնք իրենց ներկայութեամբ, հեռաձայնով, Ե-նամակով եւ ցաւակցագիրով մասնակից դարձան Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եւ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ մահուան սուգին :

Եղբ. Արմանտօ Թորգոմեանի ընտանիքին փափաքով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը կատարուին Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ Հայ Դատի Յանձնախումբին.-

[https://www.paypal.com/donate/?hosted\\_button\\_id=R5B82MWWK7ZCU](https://www.paypal.com/donate/?hosted_button_id=R5B82MWWK7ZCU)

Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ





# ԲԱԶՄԱԹԻՒՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ՝ ԵՂԲ. ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱՃԵԱՆՆ

(ԵՂԲ. ԺԱՆ ՊԷՊԷՃԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Հ**աւաքուած ենք մեր խոնարհումն ու յարգանքի տուրքը մատուցելու յիշատակին այն մարդուն, որ այսօր յաւէտ բաժնուած է մեզմէ, բայց իր ապրած կեանքով մեզի ձգած է հարուստ ժառանգութիւն:

Կեանքի մէջ կարեւոր մարդոց յաջողութիւնները ընդհանրապէս կ'ունենան դաստիարակիչ եւ ներշնչող ազդեցութիւն յաջողող սերունդներու համար: Ես այսօր եղբ. Մանուէլի բազմաթիւ նուաճումներէն պիտի առանձնացնեմ հետեւեալ երեքը:-

Եղբայր Մանուէլ հմուտ հաշուապահի իր մասնագիտութեամբ աւելի քան 50 տարիներ շարունակ իր ասպարէզին մէջ դրսեւորած է ժրջանութիւն, օրինապահութիւն եւ հաւատարմութիւն, լաւագոյնս ներկայացնելով հայ մարդու օրինակելի կերպարը:

Իր յաջող լաւագոյն ձեռքբերումը հանդիսացած է իր կազմած հայկական ջերմ օճախը, որ արժանացած է իր ամբողջական հոգածութեան եւ գուրգուրանքին: Ան իր առաքիւնի ու սրբակենցաղ յատկանիշներով իր զաւակներուն պարտադրած է կեանքի իւրաքայտուկ ապրելաճ: Այդ օճախը յագեցած է բարոյական ու մարդկային ազնուագոյն արժէքներով, համեմուտ է ազգային յորդառատ ապրումներով եւ լուսաւորուած է քրիստոնէական հաւատքի խորհուրդներով:

Եղբ. Հալլաճեան կեանքի յաջողութիւններու բարձրագոյն գագաթը նուաճած է ազգային ծառայութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքէն ներս: 103 տարեկան, աւելի քան 111 մասնաճիւղ ունեցող հայկական ամենամեծ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ամբողջ պատմութեան մէջ քիչ կարելի է հանդիպել Հ.Մ.Ը.Մ.Ի-ական եղբայրներու, որոնք 14 տարիներ ծառայած ըլլան տեղական վարչութեան մէջ, 4 տարի՝ Շրջանային Վարչութեան եւ 8 տարի՝ Կեդրոնական Վարչութեան կազմին մէջ, եւ միաժամանակ արժանացած ըլլան միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Եղբ. Մանուէլ Հ.Մ.Ը.Մ.Ի ճամբով իր ազգին մատուցած ծառայութիւններով մեծ պատիւ ապահոված է իր ընտանիքին, իր սիրած միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին եւ իր ազգին:



Եղբայր Մանուէլ Հալլաճեան ծնած է Հայկալ, 1929-ին: Ան իր նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է Հայկալի Ճրոհէր Մարիստ (Շանփանիս) Քոլէճին մէջ: Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան իր իմացութիւնը ձեռք ձգած է գիշերային դասընթացներով եւ ինքնաշխատութեամբ՝ հայերէն գիրքերու ընթերցանութեամբ:

Եղբայր Մանուէլ հայերէն եւ Ֆրանսերէն լեզուներու կողքին տիրապետած է նաեւ արաբերէնի եւ անգլերէնի: Իր կեանքի ասպարէզ ընտրելով հաշուապահութիւնը, 1952-ին ան ընդունուած է Հայկալի երկտարական ընկերութեան մէջ, իբրեւ գլխաւոր հաշուապահ:

Անկախ իր գործէն, եղբ. Հալլաճեան հաշուապահի իր մասնագիտութեամբ երկար տարիներ ծառայած է ազգային կառույցներու խնամակալութիւններու: 1985-2000 ան եղած է Հայկալի Հայ Ծերանոցի խնամակալ, ինչպէս նաեւ՝ երկար տարիներ ձինիչեան յիշատակի բարեսիրական հիմնարկութեան գլխաւոր եւ վստահելի հաշուապահ:

Եղբ. Մանուէլ Հալլաճեան 1955-ին կազմած է հայկական աւանդական իր օճախը՝ կեանքի ընկեր ընտրելով Շաքէ Մոմճեանը: Այնուհետեւ ան բախտաւորուած է 2 մանչ զաւակներով, 3 թոռներով եւ մէկ ծոռ՝ նորածին երեխայով:

**ԳՈՅԺ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումծ միութեան «Արժանեաց» շքանշանակիր, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական՝

**ԵՂԲ. ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱՃԵԱՆԻ**

մաւր, որ պատահեցաւ 30 Սեպտեմբեր 2021-ին, Թորոնթօ, Գանատա:

Սուրբիոյ մէջ եղբայր Մանուէլին ազգային ծառայութեան կարեւորագոյն յաջողութիւնները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերու մէջ:-

Ա. Եղբայր Մանուէլ պետական կապի իր հանգամանքով մեծ դեր ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ական միջ-մասնաճիւղային մըրցաշարքներու, տողանցքներու եւ մարզահանդէսներու կազմակերպման մէջ:

Բ. Եղբայր Մանուէլի ճիգերով կարելի եղած է շրջանցել լուրջ վտանգ, երբ մարզական միութիւններու պետականացման անուան տակ բազմաթիւ միութիւններ իրարու մէջ ձուլուած են: Հ.Մ.Ը.Մ.ը զերծ մնալով այդ փոփոխութենէն մնաց իւրայատուկ եւ միատարր, իբրեւ հայկական միութիւն:

Գ. Եղբայր Մանուէլ զգալի դերակատարութիւն ունեցած է Հայէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան հողաշերտին գնման եւ Քեսապի բանակավայրի կալուածին վերջնական ապահովման մէջ:

Անկախ այս բոլորէն, եղբայր Մանուէլ Հայլաճեանի Հ.Մ.Ը.Մ.ական վաստակին լաւագոյն արգասիքը հանդիսացած է այն հանգամանքը, որ ան եղած է բազմաթիւ սերունդներու դաստիարակը:

Իր շունչին տակ դաստիարակուող երանելի սերունդներու բախտաւորներէն եղած եմ ես, 1970-1972 տարիներուն, երբ եղբայր Մանուէլը եղած է իմ պատասխանատուս եւ դաստիարակս: Ծիչդ այդ պատճառով, այսօր ես փափաք յայտնած եմ այդ սերունդի բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն անունով սրտի անկեղծ խօսքս փոխանցել եւ մեծ ակնածանքով հրաժեշտ տալ Հ.Մ.Ը.Մ.ի վաղեմի դաստիարակիս՝ եղբ. Մանուէլ Հայլաճեանին:

Խօսքիս մէջ պիտի ուզէի անդրադառնալ կարեւոր դրուագի մը, որ կ'առնչուի անձնական կեանքիս: Համեստութեամբ ըսեմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի ֆուլթայլի ներկայացուցչական կազմին մէջ, 1970-1980, եղած եմ կարեւոր աստղ: Այդ օրերուն մեր բոլոր պատասխանատուները կը սիրէին գովաբանել մարզական տաղանդս եւ իւրայատուկ յատկանիշներս, բա-



ցի... եղբայր Մանուէլէն, որ միշտ հպարտութեամբ կը խօսէր ուսումնական մարզին մէջ արձանագրած գերազանց նիշերուս մասին: Անշուշտ, ես ձեռով մը շոյուած կը զգայի, սակայն այն ատեն փոքր էի, 17- 18 տարեկան, չէի գիտեր թէ եղբայր Մանուէլ ի՞նչ ի մտի ունէր: Յետոյ, երբ մեծցայ եւ իմ կարգիս դաստիարակ դարձայ, նոր իմացայ, որ եղբայր Մանուէլ օրինակովս սերունդներ կը դաստիարակէր: Ան կը յորդորէր եւ կը խրախուսէր բոլորին, որ Հ.Մ.Ը.Մ.ականները պէտք է միշտ ամէն ինչի մէջ լաւագոյնին ձգտին եւ արժանանան:

Սգակիր ներկաներ, հրաժեշտի այս տխուր պահուն, կ'ուզեմ կատարել հետեւեալ հաստատումները:-

- Սիրելի՛ դաստիարակս, գիտեմ որ հանգիստ մտքով կը մեկնիս այս կեանքէն, որովհետեւ քու կառուցած ընտանեկան օճախդ յանձնած ես վստահելի անձերու, տիկնոջդ՝ Շաքէին եւ այդ բերդի երկու հաւատարիմ պահակներուն՝ Ժանին ու Արային: Քեզի կը հաւաստիացնեմ, որ այդ օճախին մէջ հաստատած արժէքներդ պիտի մնան հաստատ, կայուն եւ անփոփոխ:

- Ես եւ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերդ ու եղբայրներդ կը խոստանանք անշեղ ու անխափան դաստիարակել Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդները, բարոյական, ազգային ու համամարդկային այն արժէքներով, որոնց հաւատացած էիր դուն, որովհետեւ այսօր դժբախտաբար կը նկատենք, թէ օտարամուտ, խորթ, տարօրինակ ու արտառոց ինչպիսի՛ բարքեր, «արժէքներ» ու գաղափարներ թափանցած են հայրենի մեր երիտասարդութեան մտքերէն ներս: Այսօր, սիրելի դաստիարակ, աւելի քան երբեք, անհրաժեշտ է Հ.Մ.Ը.Մ.ական արժէքներով լիցքաւորել հայ երիտասարդութեան մըտքերն ու հոգիները:

Խունկով եւ մոմով կ'աղօթենք, որպէսզի պայծառ ու անբասիր հոգիդ երկնային յաւերժ լոյսերու մէջ ննջէ:

Խոնարհումով եւ յարգանքով հրաժեշտ կ'առնեմ քեզմէ սիրելի՛ դաստիարակս՝ եղբայր Մանուէլ Հայլաճեան: Քու բարի եւ լուսաւոր յիշատակդ յաւերժ պիտի մնայ վառ ու անթառամ:





# ԵՂԲԱՅՐ ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱՃԵԱՆ ՀԱՅՐՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

Ժան Հալլաճեան  
ՌՈՐՈՆԹՕ

**Մ**արդ անյիշատակ պէտք չէ մեկնի այս աշխարհէն, նոյնիսկ եթէ աննշան ըլլայ իր մասնակցութեան բաժինը՝ աշխարհիկ այս կեանքին: Այս մէկը համոզում դարձուցած եմ, եւ յաճախ փորձած եմ առ այդ արտայայտուիլ, երբ պատեհութիւնը ընծայուած է խօսելու կամ գրելու մեզմէ յաւէտ բաժնուածներու մասին:

Հօրս՝ եղբայր Մանուէլ Հալլաճեանի պարագային, պիտի դժուարանամ առ այդ արտայայտուելու, լուսարձակի տակ առնելով իր նկարագրային բարեմասնութիւնները, թէ՛ իբրեւ մարդ, թէ՛ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական, յարգելով պատշաճութիւնները եւ կենցաղային նրբութիւնները:

Պիտի բաւարարուիմ նշելով անհատական կարգ մը դրուագներ եւ արժեւորումներ, զորս պիտի արձանագրեմ՝ ի հեծուկս հօրս պաշտպանած ու կեանքի նուիրական գիծ դարձուցած համեստութեան դասերին: Զգացական երանգով զեղուն յաջորդող տողերը պիտի բխին իբրեւ զաւակ մէջս ամբողջութեամբ յիշատակներու շտեմարանէն:

Պահն է, որ հանրային խոստովանանք կատարեմ՝ յայտարարելով, որ հայրս մեծ ժառանգ մը կտակեց մեզի: Մենք՝ ժառանգորդներս կը հաստատենք, որ այդ մէկը ընտանիք զօրող եւ զայն ամրակուռ դարձնող կտակ է: Մենք՝ ընտանիքի ան-



դամներս դժուարութիւն չունեցանք արդարօրէն կիսուելու այդ մէկը մեր մէջ, այն միակ պայմանով, որ այդ մէկը պիտի չմտնէ յումպէտս, արժեւորելով անոր տառացի գործարրութիւնը:

Թերթատելով անոր պարունակութիւնը տեսանք, որ մատնանշուած հիմնական բաղադրիչները ՈԳԵՂԷՆ արժէքներով իմաստաւորուած պահանջներ են: ՈԳԵՂԷՆ արժէքներու հանդէպ պաշտամունքի աստիճան ունեցած իր հաւատարմութիւնը, եւ բժախնդիր երկրպագուն ըլլալով աննիւթական իմաստասիրութեան դպրոցին, զանոնք իբրեւ պարտամուրհակ ան փոխանցեց մեզի, պահանջելով որ այդ արժէքները դարձնենք մեր կեանքի նշանաձողը եւ մեր Յայրմաւուրքին «Ալֆա»ն եւ «Օմեկա»ն:

Այդ ժառանգին գլխաւոր հարստութիւնը ծառայութիւնն է՝ ազգին, ընտանիքին ու Արարիչին: Վրան գումարած մարդկային բարոյական վսեմ արժէքները, որոնք իբրեւ վահան, բժախնդրութիւնն ալ թագադրելով իբրեւ սաղաւարտ՝ չարին, անբարոյին եւ անարդարին դէմ կանգնելու դիտաւորութեամբ: Այս բոլոր հասարակաց յայտարարները կիրարկել պահուութեամբ ու հեզութեամբ, կարելի եղած չափով թաքուն պահելով անհատական դրոշմի երեւելի բաժինը:

Շատ բան կը պարտիմ հանգուցեալ հօրս ազնիւ ճիգին՝ մայրենին ինծի ձեռնտու դարձնելու, աւելի եւս սիրցնելու զայն, տրուած ըլլալով որ հայկական վարժարան եկուոր էի օտար դպրոցէ, ուր ԱՅԲ-ը ինծի համար սանտրի ձեւաւորումով պատկեր մըն էր միայն: Իր յամառ ու հետեւողական ճիգերով, իբրեւ երրորդ կարգի աշակերտ, շատ կարճ ժամանակի մէջ, զիս պատրաստեց իբրեւ մրցակից մայրենիի պատրաստութեամբ սնանած Հայկազեանի աշակերտներուն:

Հայերէնի ընկալումս թարմ պահելու ինդրին օգնեց հօրս «Օրօր բալա ջան» երգելու փոխարէն, մանկական սնարս



ուզմահայրենասիրական երգով պարուրելը: Իր սիրած երգերէն մէկը կ'երեւի «Պանք Օթոման»ն էր եւ իբրեւ օրօրոցային երգ, զիս կ'արեւոյնէր այդ երգով: Հեշտագին երազներու եւ պատկերացումներու մէջ կ'ուրուագծուէին չճանչցած հերոսներու պատկերներուն ուրուագիծերը, որոնք կը զգլխէին մանկական երեւակայութեան պատառը: Այդ երգերուն ուսուցումը իմ կարգիս կը փոխանցէի կաթողիկէ մայրապետներու մանկապարտէզի ընկերներու, որոնց ծնողները զարմացած այս «անակնկալէն», քաջ գիտնալով որ մայրապետներու ուսուցման ծրագիրին մէջ չկայ ուզմահայրենասիրական երգեր դասաւանդելը, դպրոց կ'այցելեն... ստուգելու այս «երեւոյթին» պատճառը:

Եւ այսպէս, համարձակութիւնը ունիմ ըսելու, որ հայրս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը դարձուց իր առաջին հասցէ'ն, իր դպրոցը, որուն շարքերուն մէջ եւ ստեղծուած պայմաններուն հետ քայլ պահելու հարկադրանքին տակ, ինքնուս, կատարելագործեց մայրենին, լատիներէնի, արաբերէնի, Ֆրանսերէնի, անգլերէնի հեզասահութեամբ ընկալելով եւ իւրացընելով զայն: Ան անդու կերպով կենսագործեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ծառայելու ոգին եւ մոլեռանդօրէն իր հոգիին մէջ ապրեցուց Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնը եւ նշանաբանը:

Իր հանդարտաբարոյ նկարագիրով ան ուժ ներշնչեց չըջապատին, երբ 1960-ականներու սկիզբը, Սուրիոյ մէջ կեանքի յորձանուտը կ'ալեկոծէր ազգային կեանքին խաղաղ նաւը:



Երբ հայորդիներ կը կալանաւորուէին եւ Հ.Մ.Ը.Մ.ի միութեան կեանքը անարդարօրէն կը խափանուէր: Ան խանդ համակեց, երբ յոյսի ճրագը խամրելու վրայ էր, սատարելով Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթոնի ներկայացուցչական խումբին՝ մեծ յաղթանակներ տանելու եւ Սուրիոյ ախոյեանական բաժակին տիրանալու համար:

Ան Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն ընկերակցեցաւ աշխատանքի բոլոր հանգրուաններուն, ապահովելու համար պատուաբեր յաղթանակներ: Հպարտութեամբ կը յիշէր, որ իրենց մէկ ուղեւորութեան ընթացքին, երբ Հայկազի Ֆուլթոնի պատուիրակութիւնը կը նախագահէր, Ս. Միութիւն այցելութեան ճանապարհի մէկ կանգառին, թէ ինչպէ՛ս էր գրումի-Կարնոյ մէջ, պատուիրակութեան հայ մարզիկներու ընկերակցութեամբ, ջորեպանի մը կառքով կը շրջին էր գրումի հայկական հին թաղամասերը եւ բարձրաձայն՝ աղջամուղջի կարմրագոյն բաց երկինքին տակ, զոր կը յիշեցնէր Կարնոյ վաղեմի յեղափոխական քուրան, միահամուռ կ'երգէն՝ «Ձայն մը հնչեց էր գրումի հայոց լեռներէն...»:

Հայրս արաբական շրջանակներու հետ յարաբերութեան ընթացքին միշտ աշխատած է հայ մարդու դիմագիծը պայծառ պահել, պաշտպանելով հայկական բոլոր կազմակերպութիւններու շահերը (Հ.Մ.Մ., Վասպուրական, Հ.Ե.Ը.), Հ.Մ.Ը.Մ.ականի անշահախնդիր ու վեհանձն նկարագիրը եւ նշանաբանը իր այցեքարտը դարձնելով:

Մենք այդ ժառանգին ուղղակի իրաւատէրերը՝ զաւակները, թոռները եւ ծոռը, ու հո՞ծ փաղանգ մը այդ կտակի բարոյական իրաւատէրերուն, կը խոստանանք շարունակել հայ ազգի եւ Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան ճանապարհը իր բացած ահօսներուն հետքերով, յանուն ազնուական մարդու տեսակի գոյատեւման, յանուն արի հայ մարդու արարման շարունակականութեան, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի պանծացման:

Սիրելի՛ հայր, եղբայր Մանուէլ, քու շունչովդ սնանած բազում Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու անունով, որոնք կ'ուզեն անթառամ պահել յիշատակդ, պիտի չըսենք ննջէ խաղաղութեամբ, այլ՝ անդէականէն ներշնչէ մեզ քու անբասիրութեամբդ, ու լիցքաւորէ մեզ արի Հ.Մ.Ը.Մ.ականի ազնուագոյն նկարագիրովդ:



## Յ Ա Ի Ա Կ Յ Ա Պ Ի Ր

Սգակիր Հալլաճեան ընկերակիք,

Խոր վիշտով տեղեկացանք բազմալսարանի Հ.Մ.Ը.Մ.ական, միութեան «Արժանեաց» շրանշանակիր եւ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Մանուէլ Հալլաճեանի մահուան լուրը:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի երկար տարիներու հաւաքատար անդամ եղբ. Մանուէլ իր գիտակից կենսին ամբողջ տեսողութեան ապրեցաւ ու գործեց միութեան նշանաբանին «Բարչրացի՛ր-բարչրացուր»-ի հաւաքարմուքեամբ, անսակարկ ծառայատիրութեամբ եւ գաղափարական նուիրումով:

Խոնարհ, բարեսիրտ եւ աւանդապահ մեր երէց եղբայրը պատիւը ունեցաւ մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Պարզամատուրական յարգողական Ընդհանուր Ժողովներու եւ երկու շրջան ընկրուելու Կեդրոնական Վարչութեան անդամ: Սերունդները պիտի յիշեն Հ.Մ.Ը.Մ.ական մարդու իր խնայարուն խորհուրդներն ու կեցուածքները:

Այս տխուր առիթով մեր խորազգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք իր ընկրանեկան պարագաներուն եւ հարազատներուն, խնդրելով որ Աստուծոյ բոլորը միախառնէ եւ սիրով իր քաղցր յիշատակներով:

Հողը քերէւ գայ վրան:

Հ.Մ.Ը.Մ.Ի

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՂԲ. ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի պատմական տարիները կերտած զէմփերէն եղբ. Մանուէլ Հալլաճեան կը պատկանի սերունդին այն սողոց, որոնք գաղափարի կիրքով ու նուիրումով, անսահման ծառայութեամբ եւ անշահախնդրութեամբ իրենց անուրանալի ներդրումը ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով իրենց գաղութներու ազգային առողջ ու հպարտ դիմագիծին կերտման: Իր սերնդակիցներուն նման, եղբ. Մանուէլ յոգնութիւն չէ ճանչցած եւ Հալլաճի մասնաճիւղի վարչութեան անդամակցութեան մինչեւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութիւն, ան մնացած է տէրն ու պահապանը միութեանական անշեղելի սկզբունքներու եւ ազգային-բարոյական աւանդական արժէքներու:



Եղբ. Մանուէլ Հալլաճեան ծնած է 1929-ին, Հալլաճ: Իբրեւ սկաուտ, ան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1944-ին: Երկար տարիներ ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալլաճի մասնաճիւղի վարչական: 1958-ին ընտրուած է Սուրիոյ Ֆուլթայլի ֆետերասիոնի անդամ եւ 14 տարի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչութիւնը կատարած է ֆետերասիոնին մօտ: Ան կարեւոր դեր ունեցած է «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան հողաշերտին գնման եւ ֆեսապի Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրի կալուածագիրի ապահովման մէջ:

1990-1995 եղբ. Մանուէլ Հալլաճեան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, 1992-էն ետք՝ ատենապետի պաշտօնով: 1995-2003, երկու շրջան ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, գործա-

կիցներ ունենալով տոքթ. Միսաք Արզումանեանը, Միհրան Շիմշիրեանը, Կարօ Թիւթիւնճեանը, Պատրիկ Կիւլպէնկեանը եւ ուրիշներ:

Միութեանական իր երկարատեւ ծառայութիւններուն համար, եղբ. Մանուէլ Հալլաճեան 1988-ին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ գնահատուած է «Ծառայութեան» շքանշանով: 2000-էն ետք ան հաստատուած է Թորոնթօ:

19 Սեպտեմբեր 2007-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Թ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի պաշտօնական բացման հանդիսութեան, Հայաստան, եղբ. Մանուէլ Հալլաճեան Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութեան որոշումով արժանացած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

92 տարեկան հասակին, եղբ. Մանուէլ Հալլաճեան իր մահկանացուն կնքեց 30 Սեպտեմբեր 2021-ին, Թորոնթօ, Գանատա:

# ԱԶՆՈՒՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՆԻՇԸ՝ ԵՂԲ. ԿԱՐՕ ՅՈՎԱԿԻՄԵԱՆՆ

(ԵՂԲ. ԿԱՐՕ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՔՈՅՐ ԳՈՀԱՐ ԱԼԵԱՆԱՔԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

**Ի**նչքան արժեքալոր եւ նուիրեալ եղբայրներ կորսնցուցինք վերջին տարիներուն: Մէկ առ մէկ մեր գաղութէն հեռացան Օննիկ Շանկայեանը, Պերճ Գրիգորեանը, Յարութիւն Թազուրեանը, Թորոս Մաւուշեանը, Յարութիւն Ժամկոչեանը եւ դեռ քանի՛ անուններ...:

Տակաւին մեր ցաւը մեղմացած չըլլալով, ահա այս անգամ նոր, աւելի ուժգին հարուած մը կու գայ ճգմելու արդէն մեր ցաւոտ սիրտերը:

Ինչպէ՞ս հաշտուել եղբ. Կարօ Յովակիմեանի մահով: Բոլորս գիտէինք, թէ ան իր կեանքին մեծ պայքարը կը տանէր վերջին տարիներուն, սակայն չէինք կրնար հաւատալ, որ այսօր մենք իր անշարժ մարմինին առջեւ պիտի կանգնինք ու սգանք անոր կորուստը:

Բառին իսկական բացատրութեամբ՝ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մը եղաւ եղբ. Կարօ Յովակիմեան:

Ո՞վ չի յիշեր պարթեւահասակ մեր եղբայրը, որ իր երիտասարդ տարիքէն մտաւ մեր միութեան շարքերը, սիրեց Հ.Մ.Ը.Մ.ը իր սեփական ընտանիքին նման, եղաւ Գոքինիոյ մասնաճիւղի անդամ եւ ատենապետ, ապա երկար տարիներ իրեն վստահուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետութիւնը, զոր վարեց ձեռնհասօրէն եւ արդար կեցուածքով:

Ո՞վ չի յիշեր եղբ. Կարոյին ժպիտը, այն բարի ժպիտը, որով մուտք կը գործէր ակումբներէ ներս, բոլորին բարեւ մը տալու ազնուութեամբ, որ ցոյց կու տար իր հոգիին մաքրութիւնը, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի կազմաւորումը, այն՝ որ միութեանս իւրաքանչիւր անդամ պարտի կրել, հաւատարիմ ըլլալով մեր հիմնադիրներու ոգիին:

Ո՞վ չի յիշեր եղբ. Կարոյին պատրաստակամութիւնը՝ լուծումներ գտնելու ամէն խնդրի: Գիտէր տարբեր միտքեր, երբեմն հակադիր մտածումներ կամ կեցուածքներ քով-քովի բերել, իրարու միացնել, որպէսզի անոնց մէջէն վեր հանէ Հ.Մ.Ը.Մ.ի ոգին, այն՝ որ աւելի քան 100 տարիէ ի վեր ոտքի կը պահէ մեր սերունդները եւ անոնց առջեւ կը բանայ գաղութին մէջ ծառայութիւն մատուցելու ճամբան:

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ եղբ. Կարոյին պաշտած միութիւնը: Անոր մէջ ան կազմաւորուեցաւ իբրեւ մարդ եւ իբրեւ ազգային անձնաւորութիւն: Ազգայինը շատ ուժեղ մնաց իր մէջ: Այդ



էր, որ կը յատկանշէր իր ամբողջ կեանքը, մանաւանդ միութեանական ծառայութիւնը:

Մեծ խօսքեր կամ տպաւորիչ արտայայտութիւններ չունէր ան, բայց արդէն իր աչքերուն կամ սակաւաթիւ խօսքերուն մէջէն կը հասկնայիր, թէ ան խորապէս ըմբռնած է ազգին ծառայելու եւ մատուցելու իմաստը:

Նոյն իմաստն էր, որ շարժուն դպրոցի մը նման ան փոխանցեց նորահաս սերունդներուն, բոլորին համար լուռ՝ բայց ուժգին կերպով աղաղակող օրինակ դառնալով:

Ժողովներուն մէջ եղբ. Կարօ ուշադրութեամբ կը լսէր իւրաքանչիւր խօսողի: Բոլորին աչքերուն մէջ նայելով կը փորձէր ըմբռնել անոնց միտքը, եւ ահա՛ նոյնիսկ անելի մատնուած պահերուն իսկ կու գար իր գուարթամիտ մէկ արտայայտութիւնը, նուրբ կատակ մը, որ անմիջապէս կը քակէր պրկուած ջիղերը, եւ լուծումի ճամբան կը բանար բոլոր խնդիրներուն առջեւ:

Եղբայր Կարօ ինչքան գուրգուրաց մեր միութեան սկառուտական շարժումին: Ինչքան իր սիրտը կ'ուրախանար, երբ կը տեսնէր սկառուտական մեր շարքերուն աճը, մեր երիտասարդներուն կառուցածութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ սկզբունքներուն: Ինչքան կը վազէր, որպէսզի ամէն տեսակ շարժումի՝ պարզ արշաւէն մինչեւ համագաղութային բանակումները, մեր տղոց ու աղջիկներուն մասնակցութիւնը ըլլայ արժանապայել եւ համագործ միութեան կանոններուն:

Այո՛, եղբ. Կարօ Յովակիմեան կարգ ու կանոնի մարդ եղաւ, համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարին: Այդ կարգն ու կանոնը կու գար նախ իր անձէն, իր ժողովակ կեցուածքէն, իր

**ԳՈՅԺ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումարակապ «Արժանեաց» շքանշանակիր, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական՝

**ԵՂԲ. ԿԱՐՕ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ**

մասը, որ պատահեցաւ 28 Հոկտեմբեր 2021-ին, Աթէնքի մէջ, Յունաստան:



ընտանեկան սրբութիւններէն, իր գործի ասպարէզէն, երիտասարդութեան հանդէպ ունեցած գուրգուրանքէն: Մեր բոլորին ան սորվեցուց փարիլ կարգ ու կանոնին, ո՛չ իբրեւ մորի ականդապաշտ, այլ՝ կազմակերպողի հմուտ ըմբռնումով, յառաջդիմութեան տեսլականով եւ համաձայն հայկական ոգիին:

Բոլոր դիրքերէ անցաւ եղբ. Կարօն: Հպարտութեամբ ան տեսաւ «Ձաւարեան» կեդրոնին իրականացումը, որուն համար անթիւ օրեր եւ գիշերներ զբաղեցաւ շինարարական յանձնախումբին մէջ:

Տակաւին, յունահայոց Ազգային Վարչութեան անդամակցելով, ան նուիրեց իր ամբողջ փորձառութիւնը: Սակայն, ինչ որ տուաւ, ո՛ւր որ ալ տուաւ, միշտ առաջնորդուեցաւ իր պաշտած Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր բարձրացուր» նշանաբանով:

Եղբայր Կարօ, ամբողջ կեանքդ նուիրեցիր Հ.Մ.Ը.Մ.ին, մեր միութիւնն ալ իր կարգին կուրծքդ զարդարեց շքանշաններով եւ «Արժանեաց» բարձրագոյն պատիւով, ինչպէս նաեւ՝

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուակալ նախագահի կոչումով: Սակայն, բնաւ չտարուեցար այս պատիւներու շքեղանքէն: Համեստօրէն ընդունեցիր զանոնք իբրեւ գնահատանք. միշտ մնացիր համեստ, ժպտուն, բարեսիրտ եւ ծառայող: Իսկական եղբայր մը՝ բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ բոլոր մասնաճիւղերուն կողմէ, անդամներուն, վարչականներուն եւ մարզիկներուն անունով, մեր սկստական շարքերուն կողմէ, խորին ցաւակցութիւններ եղբօր ընտանիքին՝ տիկնոջ, զաւակներուն, թոռներուն եւ հարազատներուն:

Երթաս բարով, եղբայր Կարօ: Կ'երթաս միանալու սկիզբը ըստած անուններուն, անոնցմէ առաջ ալ անդարձ մեկնած Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնց հետ կեանք մը ամբողջ տքնեցար ու ծառայեցիր:

Արժանի ես, եղբայր Կարօ: Բարի՛ ճանապարհ:

## ՆՈՒԻՐԱԲԱՐ ԾԱՌԱՅԵՑ, ԲԱՐՁՐԱՑԱԲ ԵՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՅ

(Հ.Մ.Ը.Մ.ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ  
ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍԲ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ  
ՍԻԼԻՒԻՔՃԵԱՆԻ ԹԱՂԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ)

### Յովիկ Սիլահեան ՉԱԼԵՊ

**Մ**տի խոր կսկիծով բոլորս հրաժեշտ կու տանք վեհանձն անձնաւորութեան մը՝ եղբ. Անդրանիկ Սիլիւքճեանին, որ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի, ախոյեան մարզիկի եւ նուիրեալ վարչականի իր օրինակով անմոռանալի անուն եւ անջնջելի յիշատակներ ձգեց իր ետին:

Եղբ. Անդրանիկ Սիլիւքճեան բոլորիս ծանօթ էր իր նուիրուածութեամբ եւ օրինակելի վարքով: Ան ծնած է 1937-ին: Փոքր տարիքէն անդամակցած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, ըլլալով գայլիկ, սկաուտ, ապա փոխ խումբապետ: Երկար տարիներ եղած է Ա. խումբի խմբապետ: Ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի խումբի մարզիկ: Իր տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի խումբը հանդիսացած է Սուրբոյ ախոյեան եւ արժանացած է շարք մը բաժանակներու: Ան երկար տարիներ ծառայած է Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի յանձնախումբին: Եղբ. Անդրանիկ եղած է Հալէպի մասնաճիւղի վարչութեան անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակին, 2003-ին, եղբ. Անդրանիկ պարգեւատրուած է միութեան «Ծառայութեան» շքանշանով, Իբրեւ գնահատանք երկար տարիներ իր ունեցած վաստակին եւ արդիւնաւէտ գործունէութեան:

Հ.Մ.Ը.Մ.ը եղբ. Անդրանիկին կեանքին մէջ ունէր իւրայատուկ տեղ: Ան կ'ապրէր ու կը շնչէր Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակներով, կը տառապէր Հ.Մ.Ը.Մ.ի դժուարութիւններով եւ անձ-

նուիրաբար ծառայելով՝ իր ներդրումը կը բերէր միութեան վերելքին:

Իբրեւ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, եղբայր Անդրանիկ փոքր տարիքէն իր բովանդակ կեանքը նուիրաբերած է միութենական կեանքին: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան շարքերէն ներս մուտք գործած օրէն, միութենական սկզբունքները իր անձնական կեանքէն վեր գերադասելով՝ ան նուիրաբար ծառայեց, բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ: Նոյնիսկ յառաջացեալ տարիքին ան մօտէն կը հետաքրքրուէր միութեան նուաճումներով եւ քաջալեր կը հանդիսանար նոր սերունդի զաւակներուն:

Սիրելի՛ եղբայր Անդրանիկ, ճիշդ է որ անգուլթ մահը խիցքեզ քու հարազատներէդ, ընտանիքէդ եւ միութենէդ, որոնցմէ յաւէտ բաժնուեցար, սակայն քու տիպար եւ օրինակելի վարքդ հայկահայութեան յիշողութեան մէջ պիտի մնայ յաւերժ:

Այսօր մենք միայն մարմինիդ հրաժեշտ կու տանք, սակայն քու հայատրոփ հոգիդ եւ ազգային գաղափարներդ մեզի հետ պիտի մնան առ յաւէտ, իբրեւ ներշնչման աղբիւր:

Հողը թեթեւ գայ վրադ: Յիշատակդ անթառամ մնայ մեր յիշողութեան մէջ:

Խունկ ու աղօթք հոգիիդ խաղաղութեան համար:  
Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:



# ԾԵՐԱՆԱԿ ՄԵՐԺՈՂ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ

Ս. Սահակրեճեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

**Մ**տաւորապէս երկու տարի առաջ էր, 2020-ի սկիզբներուն: Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը որոշած էր յատուկ հանդիսութիւն մը կազմակերպել ի պատիւ Սամուէլ Մկրտիչեանին՝ անգամ մը եւս յարգանք մատուցելու վաստակաշատ նուիրեալին, գործնապէս ցոյց տալու, որ Սամուէլները չեն կրնար լուսանցքի վրայ ձգուիլ, քանի որ օր մը հրապարակային յարգանքի արժանացած են արդէն: Առաջարկ ստացայ սրտի խօսքով մը բաժին բերելու յայտագիրին, բնականաբար ընդունեցի հաճոյքով, ո՛չ միայն անոր համար, որ վերջերան վաստակաւոր մը արժանին պիտի վայելէր, այլ նաեւ՝ որովհետեւ մեծարեալին հետ ունեցած եմ ծանօթութիւն, գործակցութիւն, կատակներ փոխանակած ենք եւ մեր (երկուքիս) յիշողութեան մէջ միասնաբար արձանագրած ենք չմոռցուելիք դրուագներ:

Անմիջապէս դիմեցի յիշողութեանս տոպրակին եւ... ինքզինքս գտայ անկարելի առաքելութեան մը առջեւ: Արդարեւ, ինչպէ՞ս կարելի էր քանի մը վայրկեանի մէջ սրտի խօսք ըսել մարդու մը մասին, որուն կապուած յիշատակներս կրնան բազմաթիւ էջեր լեցնել: Ստիպուած էի «տոպրակիս» մէջ եղածներէն ընտրանի մը, փոքր փունջ մը կազմել՝ հաւատարմով, որ այլ արտայայտուողներ մասնակից պիտի ըլլային դիմաստուերին ամբողջացման:

Սամուէլ Մկրտիչեան քանի մը առիթներով եւ կեանքին



տարբեր հազրուաններուն պատիւի արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ, հետեւաբար միութենականի անոր կեանքն ու վաստակը ընդհանրապէս լուսարձակի տակ բերելու առիթներ եղած են: Նախընտրելի էր, որ խօսքիս «մարմին»ը կազմուէր անձնական փորձառութիւններէս՝ իրեն հետ ունեցած ծանօթութեանս եւ որոշ ժամանակի մը մէջ գործակցութեանս էջերէն: Այդպէս ալ ըրի՝ թուղթին յանձնելով շարք մը դրուագներ: Յետոյ... վրայ հասաւ քորոնայի համաճարակը, նախատեսուած ձեռնարկը անորոշ ժամանակով յետաձգուեցաւ՝ ուսերուս պահելով խղճի պարտք մը: Եւ ահա, իր վերջին հրաժեշտը տխուր առիթ մը կ'ընծայէ մասամբ հատուցելու այդ պարտքէն բաժին մը (մեծ մասամբ դուրս ձգելով գուարձալիքներու բաժինը, որ հազուադէպ չէր յամենայնդէպս): Այլ խօսքով, քանի մը անձնական յուշի ընդմէջէն պիտի փորձեմ ներկայացնել քանի մը հիմնական դիժ:

Սամուէլ Մկրտիչեանի հետ ծանօթացումիս կամուրջը եղած է հայրս. իրարու ծանօթ եղած են Հայկէպէն, ապա զիրար վերագտած՝ Պէյրութի մէջ, Սամուէլին ոսկերչատունը, որ կը գտնուէր Պուրճ Համուտի «Մատոնա» փողոցին աւելի հարաւ ինկող հատուածին, նախկին երկաթուղադաշտէն ոչ շատ հեռու: Խանութը 1970-ականներու երկրորդ կէսերուն եւ աւելի ուշ մեր ժամադրավայրն էր. հայրս հոն զիս կը սպասէր, որպէսզի Պուրճ Համուտէն միասին տուն կը դառնայինք Շաբաթ կէսօրները: Շուտով զիս ալ վարակեցին իրենց փոխանակած կատակներով. հրաժեշտի պահուն սասուկեցի Սամուէլը իբր թէ ջղայնացած պիտի ձեւանար այնթապցի հօրս մէկ ակնարկութենէն ծնած կատակին պատճառով եւ յայտա-

## ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ միութեան «Արժանեաց» շքանշանակիր, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական

**ԵՂԲ. ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ**

մաիը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 25 Նոյեմբեր 2021-ին, Լոս Անճելլոս:



րարէր: «Մի՛ ձգե՛ր, որ քրֆրեմ...», սակայն այդ «քրֆրը» երբեք բառի վերածուած չեմ լսած իրմէ, նաեւ այն օրերուն, երբ հանդիպէինք Լոս Անճելըսի մէջ եւ իմ կարգիս ձեռով մը շարունակէի կատակներու փոխանակումը:

1970-ականներուն ստեղծուած նախնական մեր ծանօթութիւնը բարեկամութեան եւ գործակցութեան վերածուեցաւ 1980-ականներու սկիզբներուն: Հ.Մ.Ը.Մ.ական Սամուէլ Մկրտիչեանը չէր կրնար առանց Հ.Մ.Ը.Մ.ական գործի ապրիլ, շնչել: Իրեն համար գործը մեծ ու պզտիկ ածականներով չէր յատկանշուեր, այլ ան պատրաստ էր թեւերը վեր սոթտելու հոն, ուր գործ կար ընելիք: Մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի տեղեկատուական-խմբադրական մէկ յանձնախումբին, որուն պարտականութիւնն էր մասնաւորաբար տեղեկագրել ԼԵՎԱՄ-ի եւ նման մրցումներ ու թղթակցութիւն հասցնել թերթին (մաս կը կազմէի «Ագրակ»ի խմբագրութեան եւ գործիս բերումով այդ յանձնախումբին հետ պէտք էր կապը պահէի): Նշուած յանձնախումբին դերը կարեւոր էր մասնաւորաբար այն առումով, որ այլ մարզախաղեր՝ Ֆութպոլ, պասքեթպոլ, հեծելաըշաւ, մինչեւ իսկ փինկ-փոնկ՝ շատ աւելի լայն ճանաչում ունէին եւ արձագանգ կը գտնէին մամուլի էջերուն, մինչդեռ նոր մարզիկներու դարբնոցը՝ միջ-դարացական մրցումները կը մնային այդ «մեծերուն» լուսանցքին:

Այդ յանձնախումբին Սամուէլին աշխատակցութիւնը կրկնակիօրէն զարմանալի էր. նախ, միւս անդամներուն մեծ մասը հազիւ իր կէս տարիքը ունէր, իսկ վաստա՞ կը... Եւ ան դարձաւ յանձնախումբին ամենէն գործունեայ անդամը: Պէշրութի արեւելեան բարձունքներն էին ԼԵՎԱՄ-ի շարք մը մրցումներուն բացօթեայ հիւրասրահը, յաճախ նաեւ՝ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտը: Սամուէլ Մկրտիչեան հազուադէպօրէն կը բացակայէր այդ մրցումներէն, ու եթէ



արդիւնքներուն տեղեկագրումը որոշ ատեն ետք վստահեցաւ աւելի՛ երիտասարդ անդամներուն, ինք բաց չթողուց գործին օձիքը: Հազիւ պատանութեան սեմը թեւակոխած մարզիկներուն միջեւ ազնիւ մրցակցութիւնը, անոնց գունագեղ տարագները եւ, մէկ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ մթնոլորտը (ինչպէս իր կեանքի բոլոր օրերուն) եղան ու մնացին իր ներշնչման աղբիւրները, զինք պատանիի պէս ոգեւորողը (իր հոգիին մէջ պատանին ու երիտասարդը ամբօրէն տեղաւորուած մնացին մինչեւ վերջ): Նոյնքան ոգեւորող էին մարզահանդէսները, միջ-մասնաճիւղային եւ «Նաւասարդեան» խաղերը, սկառուներու եւ մարզիկներու տողանցքները: Անոնց հանդիսատես Սամուէլը իր տարերքին մէջ կ'ըլլար, եւ ահա այդ մթնոլորտին գեղումները հիւսուեցան իբրեւ ոգեկոչական յօդուածներ, որոնք եկան նոր էջեր աւելցնելու նոյն հուսկէնէն բխած իր նախընթաց գրութիւններուն վրայ, որոնք ծնունդ առած էին այդ օրերէն մօտաւորապէս 40 տարի առաջ, Հայկալի մէջ, որուն «Արեւելք» օրաթերթը հիւրընկալած էր իր ոգեղէն ու վարակիչ սիւնակները:

Որքան կը յիշեմ, այդ յանձնախումբին կեանքը տեւեց մօտաւորապէս երկու տարի (պատերազմ էր, մարզական մրցումներն ալ մնացած էին պատերազմիկներու «խղճին» մէկ խաղալիքը): Լաւ կը յիշեմ, որ անդամները քանիցս փոխուեցան, սակայն եղբայր Սամուէլը մնաց պատնէչի վրայ: Այդ օրերուն էր, որ ծանօթացայ իր մարզարտաշար ձեռագիրին, բիւրեղանման հայերէնին եւ զգացի, թէ մարդիկ ինչ ըսել ուզած են «վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական» ըսելով, Հ.Մ.Ը.Մ.ական, որ յոգնիլ չի գիտեր, կ'արհամարհէ տարիներուն բնական հարկադրանքները եւ ինքզինք ցկեանս կը պահէ երիտասարդ: Անշուշտ վաստակը կերտուեցաւ նաեւ այդ տարիներէն ետք ալ, երբ հաստատուեցաւ Լոս Անճելըս, իսկ իր բարձրացու-





ցած դրօշը յանձն առին ուրիշներ): Փաստօրէն Հ.Մ.Ը.Մ-ը իրեն համար կեանք էր, ապրում, անցեալին հետ հաղորդ մնալու, վաստակաւորներու հետ իր ծանօթութիւններն ու անոնց աւանդը նորերուն փոխանցելու անծայրածիր դաշտ: Իբրեւ մարզիկ, ապա վարչական եւ յանձնախմբային աշխատանքներու մասնակից՝ ան Հ.Մ.Ը.Մ-ը հագած էր իր մորթին վրայ, ամրացուցած՝ հոգիին եւ հութեան մէջ: Այդպէս ալ մնաց ցկեանս, մինչդեռ աշխարհը փոխուեցաւ, որոշ ակումբի մը շապիկով հռչակ շահած նշանաւոր մարզիկներ, ներառեալ՝ հայ մարզիկներ, սկսան ճնճղուկներու պէս ոստոստել ճիւղէ ճիւղ, տարին, երկու տարին անգամ մը ակումբ փոխեցին, հայկական խումբեր «պատուաստուեցան» օտար մարզիկներով, այնքան մը, որ մարդս սկսաւ մտածել անոնց հայկականութեան մասին (նոր աշխարհի պարտադրանքները համակած են բոլոր ցամաքամասերու մարզական խումբերը...): Սամուէլ Մկրտիչեան մը եւ նմաններ իրենց միտքէն իսկ չէին կրնար անցընել նման «փորձութիւն»: Իրենց համար Հ.Մ.Ը.Մ-ը փոխնորդ շապիկ չէր, ո՛չ ալ՝ հայրութիւնն ու հայկականութիւնը:

Ընդհանրապէս լուսարձակներէ հեռու իր կատարած միութենականի աշխատանքներուն զուգահեռ, Ս. Մկրտիչեան առատօրէն գործածեց գրիչը՝ պարբերաբար սիւնակներ հասցնելով մեր օրաթերթերուն եւ պարբերականներուն: Մկրտիչ Արմէն ունի հատոր մը, որուն վերնագիրն է՝ «Պատուիրեցին յանձնել ձեզ»: Սիպերիա աքսորէն անոր վերադարձէն ետք ստեղծուած գործ մըն է, բոլորովին տարբեր՝ Սամուէլ Մկրտիչեանի արծարծած նիւթերէն, սակայն այդ խորագիրը լռելեայն կ'արտացոլայ Սամուէլ Մկրտիչեանի գրաւոր ժառանգութեան մէջ. ինք ալ, առանց այդ բաները գործածելու, նոր սերունդներուն կը փորձէ յանձնել այն, ինչ որ ստացած է իր սեփական ու Հ.Մ.Ը.Մ-ական ընտանիքներէն՝ յուսալով, որ նորերը պահպանեն այդ արժէքները, տէր կանգնին մեր հայկական ու

Հ.Մ.Ը.Մ-ական աւանդներուն, զանոնք ապրեցնեն ու վերապրեցնեն իրենց կեանքերուն մէջ, իբրեւ կամուրջ՝ կորուսեալ ու վերականգնած հայրենիքներուն հետ:

Սամուէլ Մկրտիչեան 1980-ականներու վերջերուն հեռացաւ Պէյրութէն եւ «ձայնը ելաւ» Լոս Անճելըսէն: Տարիներ ետք կեանքի այլիքները զիս ալ նետեցին Լոս Անճելըս: Հ.Մ.Ը.Մ-ի «Նաւասարդեան» խաղերու փակման մէկ հանդիսութեան էր, որ դէմ դիմաց եկայ Սամուէլ Մկրտիչեանին: Զիրար ողջունեցինք այն հարազատութեամբ, որ ստեղծուած էր Պուրճ Համուտի մէջ ու «Ազդակ»ի հովանիին տակ. մեր կամուրջը եղած էր Հ.Մ.Ը.Մ-ը, հիմա նոյն միութեան մէկ ձեռնարկն էր, որ մեզի առիթ կու տար

զիրար վերագտնելու: Իմացուց, որ նոր բնակավայրին մէջ ալ նոյն խանդով հաւատարիմ է «հին սէրեր»ուն, ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ին, այլ նաեւ՝ մամուլին ու ընդհանրապէս գիրին: Պէյրութի մէջ իր լոյս ընծայած առաջին հատորին յաջորդեցին ուրիշներ, քանի մը առիթով սեղանի վրայ դրաւ թղթապանակներով լեցուն անտիպ էջեր, սիւնակներ, նամակներ, որոնք եթէ լոյս տեսած ըլլային, պարզապէս յաւելեալ վկայութիւնները պիտի ըլլային իր վաստակին, վայելած յարգանքին եւ չմարող խանդավառութեան:

Ինչպէս Պէյրութեան օրերուն, նոյնպէս ալ Լոս Անճելըսի մէջ երբեմն կը չարանայի եւ (գոհունակութեան արտայայտութեամբ մը) իրեն կը յիշեցնէի իր տարիներուն թաւալքը: Երբեք չէր ընդուներ, որ թեւակոխած է ծերութեան սեմը, անցած է անկէ ալ անդին. ժպտախառն իր իբրեւ թէ զայրոյթ արտայայտող պատասխանը պիտի ըլլար. «Ես ծեր չեմ: Չեմ ընդունիր ծերութիւնը: Սասունցիի կերտուածքիս մէջ միշտ կը պահեմ երիտասարդս»: Իրաւունք ունէր: Արհամարհելով տարիքի «արգելակները», մանր քայլերով նուաճումներ կատարեց համակարգիչի աշխարհին մէջ՝ առանց մոռացութեան տալու գեղեցիկ ձեռագիրը: Երիտասարդի մը յատուկ կորովով յաղթահարեց առողջական այլազան դժուարութիւններ եւ վերականգնեցաւ նախկինին պէս, այնպէս՝ ինչպէս յաղթահարած էր Հայկական հեռացման (1960-ականներու սկիզբները) պայմաններէն եկած՝ ցաւցնող հարուածները: Գործնապէս մարմնաւորեց այն խօսքը, թէ մարդս ծեր է այնքան, որքան ծեր կը զգայ, հետեւաբար ծերութիւնը տարիքի հետ կապ չունի, կարելի է ծերեր գտնել... երիտասարդներու շարքին:

Իսկ հիմա, երբ արդէն ընդմիջտ հեռացած է բոլորէն, բոլորէս, զինք պիտի յիշենք իբրեւ ընդմիջտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ-ական, նուիրեալ հայ, տիպար, աւանդապահ ու պատկառելի ժառանգութիւն թողած Մարդ:





# ՈՉ ԵՒՍ Է Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԳՐՉԻ ՈՒ ՄՏՔԻ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՒՈՐ՝ ԵՂԲ. ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

«Հ.Մ.Ը.Մ.ական մարդու սպրուններով» ամբողջ դար մը բոլորել էրք, 25 Նոյեմբեր 2021-ին, իր պաշտելի միութեան եւ ժողովուրդին հրաժեշտ փուտաւ Հ.Մ.Ը.Մ.ի երիցագոյն սերունդի վերջին ներկայացուցիչներէն էրք. Սամուէլ Մկրտիչեան, որուն անունը սերտօրէն կապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական խօսքին ու գիրին, գրիչին ու միտքին: Ան, որ աւելի քան կէս դար Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոր նուիրեալները սպրեցուց իր յուշագրութիւններով եւ փայտաբայաշար գրութիւններով:



Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանակիր էրք. Սամուէլ Մկրտիչեան ծնած էր 1922-ին, սասունցի ծնողքէ, Մուֆարդիին՝ պայմանական Տիգրանակերպի մէջ: Վեց տարեկանին ծնողքին հետ ան անցած է Հալէպ, Սուրիա:

Նախնական կրթութիւնը ստացած է Ֆրանսիսքան միաբանութեան Թեր Սէնթ դպրոցը, որմէ ետք ինքնաշխատութեամբ յաջողած է կեանքի ասպարէզ մուտք գործել եւ ոսկերչութեան արհեստը կիրարկել:

Եղբ. Սամուէլ Մկրտիչեանի Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութիւնը կ'ընդգրկէ Սուրիան, Լիբանանը եւ Արեւմտեան Մ. Նահանգները: Հ.Մ.Ը.Մ. մուտքը կը կատարուի 1933-ին, սկստութեան ճամբով: 1937-ին ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի «Եռագոյն» ֆուրպոլի երկրորդական խումբին: Կարճ ժամանակ մը կը խաղայ նաեւ «Արծի» խումբէն, ապա մաս կը կազմէ «Նաւասարդ» խումբին, որուն հետ կը շահի Հալէպի երկրորդական խումբերու ախոյեանութիւնը:

1944-ին էրք. Սամուէլ կը հրաւիրուի Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ֆուրպոլի ներկայացուցչական խումբ եւ 1945-1946 տարիներուն քանի մը մրցում կը կատարէ խումբին հետ: Այնուհետեւ, ան երկար տարիներ կը կատարէ իրաւարարութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի երկրորդական խումբերու եւ միջ-մասնաճիւղային մրցումներու ընթացքին:

1960-ականներու սկիզբը, էրք. Սամուէլ կը հաստատուի Պուրճ Համուր, Լիբանան եւ 1967-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուրի ֆուրպոլի պատասխանատուի հանձնարումով, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուրպոլի Լիբանանի ներկայացուցչական խումբի առաջին քերէկը յանձնախումբին, ուր կը գործէ մինչեւ 1984: Շրջան մը

ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուրի մասնաճիւղի վարչական եւ փոխարեանապետ:

Ֆուրպոլիստի, իրաւարարի եւ վարչական պատասխանատուի իր կարողութիւններուն կողքին, էրք. Սամուէլ կանուխէն կը ցուցաբերէ գրական շնորհներ: Իբրեւ մարզական քրթակից ան կ'աշխատակցի «Արեւելք Մարզաշխարհ»-ին: Իր առաջին քրթակցութիւնները կը կրեն 1946 թուականը: Տարիներու ընթացքին ան Հ.Մ.Ը.Մ.ի մասին 200 յօդուած կը գրէ Հալէպի «Արեւելք», «Արեւելք Մարզաշխարհ», Պէյրութի «Ազդակ», Հ.Մ.Ը.Մ.ի

պաշտօնապետը «Մարզիկ», Լոս Անճելըսի «Ասպարէզ» եւ «Նոր կեանք» քերթերու էջերուն: 1982-1983 ան կը վարէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանային մամլոյ յանձնախումբին արեանապետութիւնը:

Եղբ. Սամուէլ Մկրտիչեան 1986-1996 կը նուիրուի գեղարուեստական գրականութեան՝ գրելով պայմանածքներ եւ յուշեր: 1988-ին ան լոյս կ'ընծայէ «Հողին կանչը» խորագրեալ պայմանածքներու իր Ա. հատորը, 1996-ին «Օտար ճամբաներու վրայ» պայմանածքներու Բ. հատորը, 2002-ին «Հ.Մ.Ը.Մ.ական մարդու սպրուններ» յուշագրական հատորը, իսկ 2013-ին «Երգեր ու վերքեր» յուշագրական Բ. հատորը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին բերումով, էրք. Սամուէլ Մկրտիչեան 1988-ին կը հաստատուի Մ. Նահանգներ եւ կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մայր մասնաճիւղին: Միաժամանակ, ան կը շարունակէ գրական իր գործունէութիւնը եւ կ'անդամակցի Հայաստանի Գրողներու Միութեան եւ կը վարէ Լոս Անճելըսի անոր նորաստեղծ մասնաճիւղին արեանապետութիւնը:

1994-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը գնահատելով էրք. Սամուէլի ներդրումը երկարամեայ գործունէութիւնը՝ զայն կը պարգևատրէ «Ծառայութեան» շքանշանով: Չորս տարի էրք, միութեան 80-ամեակին, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Սամուէլ Մկրտիչեան մինչեւ խոր ծերութիւն հաւատարիմ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի ազգային-գաղափարական արժէքներուն եւ գրեթէ մինչեւ վերջ կը մասնակցի միութեանական կեանքին:



# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԵՐԹԱԿԱՆ 19-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

## Սիլվա Ալլահվերդեան ԵՐԵՎԱՆ

**13** Նոյեմբեր 2021-ին կայացավ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 19-րդ հերթական համաժողովը:

Համաժողովը ընթացք առավ Հ.Մ.Ը.Մ.ի քայքայումը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան ներկայացուցչի խօսքով: Ժողովին առ ի գիտութիւն ներկայացուեց նախորդ երկուս ու կէս տարուան նիւթաբարոյական զեկոյցը: Շրջանաւարտ Վարչութիւնը պատասխանեց լուսաբանական հարցերի: Այնուհետեւ ժողովի մասնակիցները հինգ աշխատանքային խմբերի բաժանուելով քննարկեցին եւ իրենց տեսակէտները բանաձեւերի տեսքով ներկայացրեցին ժողովին, առ ի հաստատում, հետեւեալ հինգ ուղղութիւններով.-

- Ռազմավարական ծրագիր
  - Կազմակերպական հարցեր
  - Երիտասարդական ծրագիր
  - Ֆինանսատնտեսական եւ կալուածային հարցեր
  - PR եւ հաղորդակցութիւն
- Վերստուգելի յանձնախումբ հետեւեալ կազմով՝ եղբայրներ Վիգէն Նազար-



եան, Ժիրայր Պէօճէքեան եւ Էտովին Դաւթեան:

Ժողովը իր վերջին օրակարգով ընտրեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.-

Քոյր Սանտրա Վարդանեան- ատենապետ

Քոյր Անուշիկ Փանոսեան- ատենադրպիր

Եղբ. Հրաչ Զարիֆեան- գանձապահ

Քոյր Շուշան Մելիքեան

Քոյր Վանիա Մովսիսեան

Եղբ. Յարութ Գաբրիէլեան

Եղբ. Գեատի Ղազարեան

Եղբ. Արթուր Մկրտիչեան

Եղբ. Արշակ Գէորգեան

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նորընտիր վարչութիւնն իր առաջին արտագնայ՝ երկօրեայ նիստը գումարեց սոյն Նոյեմբերի 26-ից 28-ը՝ Հայաստանի մշակոյթի մայրաքաղաք Կիւմրիում: Նիստերի ընթացքում վարչութեան անդամները ծրագրեցին յառաջիկայ երկու տարիներին իրականացուելիք ծրագրերը, մշակեցին դրանք իրականացնելու հիմնական ուղղութիւններն ու այն առանցքային ռազմավարութիւնները, որոնցմով պիտի առաջնորդուի վարչութիւնը իր գործունէութեան ընթացքում:

Յատկանշական էր նաեւ հանդիպման վայրը, որը ոչ թէ պատահականութեան սկզբունքով, այլ միտումնաւոր էր ընտրուած. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նորընտիր վարչութեան գլխաւոր ծրագրերից է լինելու Կիւմրիի մասնաճիւղի վերաշխուժացումը, ինչից ելնելով էլ վարչութեան անդամները այցելեցին Կիւմրի՝ իրենց նիստերի օրակարգին անդրադառնալուն զուգահէտ՝ հանդիպելու եւ մօտիկից ծանոթանալու սոյն մասնաճիւղի ու նրանում առկայ խնդիրների հետ:





# ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ WOOD BADGE-Ի ԴԱՍԸՆԹԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սիլվա Ալլահվերդեան  
ԵՐԵՒԱՆ

**Հ**ՄԸՄ-ՀԱՍԿ-ը Հայաստանում առաջին անգամ անցկացրեց Wood Badge-ի միջազգային՝ նախնական վերապատրաստման ծրագիր:

Սեմինարը տեղի ունեցավ Արմավիրի «Վարդան Բախշեան» մասնաճիւղի նորակառույց «Էմիլ Մաղաքեան» կենտրոնում, 28-31 Հոկտեմբեր 2021-ին:

Սեմինարին մասնակցեցին թուով 14 սկաուտներ եւ պատասխանատուներ:

Կազմակերպիչներն էին երեք տախտակ ստանալու թեկ-



նածուներ՝ եղբայրներ Պերճ Թիւֆէնկճեանը, Նարեկ Հաննէ-եանը, Համբիկ Այվազեանը, Սեւակ Նազարեանը եւ քոյր Մեղրի Սրապիոնեանը: Ծրագրի վերջին երկու օրը կազմակերպիչներին միացավ Եւրասիա տարածաշրջանի սկաուտական երիտասարդական ծրագրի համակարգող Մէրի Նակենթը:

## ՀՕՄ ԵՒ ՀՄԸՄ-ՀԱՍԿ ՄԻԱՑԵԱԼ ՃԱՄԲԱՐ՝ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԶՈՀՈՒԱԾՆԵՐՈՒ ԵՒ ՎԻՐԱԻՈՐՈՒԱԾՆԵՐՈՒ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**17**-21 Օգոստոս 2021-ին, Բիւրականի բանակավայրին մէջ տեղի ունեցավ ՀՕՄ-ի Հայաստանի միաւորի գործունէութեան 30-ամեակին նուիրուած «Ժրպտա՛» մանկապատանեկան ճամբարը,

կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան եւ ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան: Ճամբարը նախատեսուած էր Արցախի 44-օրեայ պատերազմին զոհուածներու եւ վիրաւորուածներու զաւակներուն:

8-14 տարեկան 33 տղաք ու աղջիկներ, հայրենիքի նուիրեալներու որդիներ ու դուստրեր, հինգ օր ամառնային



իրենց արձակուրդը անցուցին Բիւրականի բնութեան հրաշագեղ ծոցին մէջ, ուրախութեամբ, հոգատար պատասխանատուներու խնամքով, հետաքրքրական եւ ուսուցողական մթնոլորտի մէջ:





# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ի ՀԱՄԱ-ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

## Սարո Քեչիշեան ԵՐԵՎԱՆ

**Ս**կառուտական կեանքի ամենահաճելի մասը բանակումներն են, ուր բնութեան հրաշալիքներու մէջ արի-արենոյճները ո՛չ միայն սկզբնապէս մէջ սորված իրենց տեսական գիտելիքները կը գործնականացնեն, այլև՝ աւելի կը մտերմանան, չարքաշ ապրելակերպի կը ծանօթանան եւ գէթ մէկ շաբաթ կեանքի հեւքէն հեռու, բնութեան գեղեցիկ կեանքը կը վայելեն:



Այս հեռանկարով ալ տոգորուած, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր 2021-ին եւս համա-հայաստանեան վեցօրեայ բանակում կազմակերպել Բիւրականի իր բանակավայրին մէջ: Հակառակ տեղական մասնաճիւղերու նախապէս կազմակերպած առանձին բանակումներուն, հայրենի զանազան մասնաճիւղերէն եւ մասնաճիւղ Արցախէն աւելի քան երեք հարիւր արի-արենոյճներ մեծ ոգեւորութեամբ մասնակցեցան համահայաստանեան իւրայատուկ այս բանակումին: Իսկապէս ողջունելի էր Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի նորակազմ շրջանէն 19-ը եւ Թիֆլիսի շրջանէն 30 արի-արենոյճներու մասնակցութիւնը: անոնք նորանոր գիտելիքներ ամբարելու առընթեր՝ գօտեպընդուեցան Հ.Մ.Ը.Մ-ի ոգիով ու յատկապէս գաղափարախօսութեամբ:

մէն, մարզանքէն, վրաններու մաքրութիւն-ստուգումէն, հանգիստի ժամերէն եւ նորաստեղծ երգ-կանչերէն անկախ բանակողները աւելի ունեցան աւելի մօտէն ծանօթանալու եւ մտերմանալու իրարու հետ: Այս բոլորէն անկախ բանակումը յատկանշական եղաւ դէպի Ամբերդ արշաւով, խմբային խաղ-մրցումներով եւ յատկապէս հայկական արժէքներու եւ Արցախի հիմնահարցին մասին դաստիարակչական դասախօսութիւններով: Այս իմաստով Կարէն Մնացականեան դասախօսեց «Հայկական արժեհամարկարգի պահպանման կարեւորութիւնը» նիւթին մասին, իսկ Արթիւր Մկրտչեան լայնօրէն անդրադարձաւ «Արցախի հիմնախնդիրը աշխարհին տեղեկացնելու առաքելութեան կարեւորութիւնը» նիւթին:

Բանակումը ղեկավարեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկառուտական Ընդհանուր Խմբապետ եղբ. Գէորգ Օհանեանն ու բանակումի փոխ խմբապետ եղբ. Սեւակ Նազարեանը:

Բանակողները խմբակներու պահերը ամէն քերական երեկոյ կազմակերպուած խորուկահանդէսներն էին, որոնց ընթացքին հաճելի ժամերու պարումներէն անկախ, անոնք նաեւ գեղեցիկ աւելի հանդիսացան բացառապէս բանակողներու թաքուն ձիւքերը, որոնք անկասկած խոստամալից ապագայ կը խոստանան արուեստի մարզէն ներս:

Բանակողները խմբակներու բաժնուելէ ետք ոգեւորութեամբ աշխատանքի լծուեցան. նախ իրենց տրամադրուած վայրերուն մէջ իրենց վրանները լարեցին եւ ապա բժախնդրութեամբ զարդարեցին գանոնք գեղեցիկ ձեռագլին աշխատանքերով: Քանի մը ժամուան մէջ բնութեան ամայի այդ անկիւնը կեանք առաւ եւ մարդկային շունչով վերակենդանացաւ:

Եւ վերջապէս, վեցօրեայ անզուգական այս բանակումին եզրափակիչ դրօշակի արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 14 Օգոստոս 2021-ի երեկոյան: Արարողութեան ներկայ գտնուելու համար բանակավայր փութացած էին բազմաթիւ ծնողներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ հիւրեր, որոնց կարգին էր Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչ Նաթան Արք. Յովհաննիսեան:

Ամէնօրեայ սովորական աշխատանքներ՝ առաւօտեան գարթնու-



Բանակումին տպաւորիչ դրօշակի արարողութեան ընթացքին իր սրտի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան: Ան շնորհաւոր-



րելով բանակումին յաջող աւարտը, շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն եւ մասնակիցներուն ու յոյս յայտնեց, որ անոնք այս բանակումին իրենց ձեռք բերած նորանոր փորձառութիւնները կը փոխանցեն իրենց հոգածութեան յանձնուած խումբերուն: Ապա, քոյր Վարդանեան հարթակը յանձնեց Նաթան Արք. Յովհաննիսեանին, որ առաջին հերթին հրաւիրեց ներկաները միասնաբար կատարելու Տէրունական աղօթքը եւ այնուհետեւ փոխանցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին օրհնութիւնները եւ յաջողութիւն ու կանաչ ճանապարհ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին:

Օգտաշատ այս պատգամներէն ետք խօսք առաւ Ընդհանուր Խմբապետ եղբ. Գէորդ Օհանեան, որ իր հերթին շնորհակալութիւն յայտնեց բանակողներուն՝ իրենց կարգապահ ընթացքին համար եւ գնահատելով կարգ մը քոյր-եղբայրներու փորձառական յաջող ընթացքը՝ անոնց յանձնեց սկաուտական աստիճաններ: Ապա տեղի ունեցաւ բանակումին եզրափակիչ դրօշակի արարողութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգին խմբերգումով դանդաղօրէն վար առնուեցան սկաուտական

կապերով գեղեցկօրէն պատրաստուած կայմին վրայ ծածանող Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի դրօշները: Այնուհետեւ բանակողները յիշատակի խմբանկար մը նկարուելէ ետք, երբ կը պատրաստուէին բանակումի աւարտական խարուկահանդէսին, կատարուեցաւ անսպասելին: Տեղատարափ անձրեւները հեղեղի վերածուելով անդամալուծեցին բանակավայրը: Այսուհանդերձ, բանակողները չյուսահատեցան եւ իրենց հրաժեշտի երեկոն մեծ խանդավառութեամբ կատարեցին բանակավայրի փակ սրահէն ներս, գեղեցիկ յուշեր արձանագրելով իրենց յիշողութեան մէջ:

Տխուր էր յաջորդ օրը՝ Կիրակի, 15 Օգոստոս 2021-ի յետմիջօրէն, որ կը նշէր հրաժեշտի պահը: Քանի մը ժամուան մէջ, հայկական մեղուափեթակի վերածուած բնութեան գեղեցիկ այդ անկիւնը մաքրուեցաւ եւ լուծեան մատնուեցաւ: Բանակողները հրաժեշտ տուին իրենց սիրելի բանակավայրին, խոստանալով «Յետեւութիւն մըն է եղբայրք, միայն ցտեսութիւն»:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄէՋ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

**2**019 թուականի ամառը Հ.Մ.Ը.Մ.ը ձեռնամուխ եղաւ Արցախի մէջ հիմնելու իր 111-րդ մասնաճիւղը: Վերջին 44 օրեայ պատերազմի պատճառով մասնաճիւղի աշխատանքները կանգ էին առել, սակայն 2021-ի ամրան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մի խումբ աստիճանաւորների օժանդակութեամբ, 22-28 Օգոստոս 2021-ին, Բիւրականի բանակավայրում տեղի ունեցաւ Արցախի մասնաճիւղի թուով արդէն երկրորդ բանակումը: Այս անգամ բանակմանը մաս-



նակցում էին շուրջ 85 պատանի-երիտասարդներ, որոնք պատրաստուած էին

լրացնել Արցախի մասնաճիւղի շարքերը: Բանակումը ունէր հիմնական մէկ նպատակ՝ մասնակիցներին ծանօթացրնել կազմակերպութեանը, ինչպէս նաեւ նրանց փոխանցել հիմնական սկաուտական գիտելիքներ, որոնք իրենց ուղեկցելու են սկաուտական կեանքի ամբողջ ընթացքում: Բանակումը ընթացաւ դրական եւ զուարթ մթնոլորտում: Բանակմանը մասնակից պատանի-երիտասարդները մեծ ոգեւորութեամբ մասնակցեցին սկաուտական գիտելիքներով հարուստ դասախօսութիւններին եւ իրականացուող զրոյցներին, ազգային երգերի եւ պարերի ուսուցումներին, անցկացնելով վեց անմոռանալի օրեր:







## ԱՐՄԱԽԻՐԻ «ՄԱՂԱՔԵԱՆ» ԿԵԴՐՈՆԻՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

**Կ**իրակի, 26 Սեպտեմբեր 2021-ին տեղի ունեցավ Արմախիրի «Վարդան Բախչեան» մասնաճյուղի «Մաղաքեան» կեդրոնի բացման հանդիսաւոր արարողութիւնը, ներկայութեամբ Արմախիրի փոխ մարզպետ Արգիշտի Մեխակեանի, Արմախիրի քաղաքապետ Դաւիթ Խուրաթեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան անդամներու, շրջանի դպրոցներու տնօրէններու, ծնողներու եւ մասնաճյուղի սիրելի գայիկներու եւ սկաուտներու:

Բացման հանդիսութեան ներկայ էր նաեւ կեդրոնի բարերարը, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի անդամ եղբ. Էմիլ Մաղաքեան՝ իր ընտանիքի անդամներուն հետ:

Հանդիսութիւնը ընթացք առաւ պաշտօնական շքերթով, որմէ ետք կեդրոնի հովանաւոր եղբ. Էմիլ Մաղաքեան



նահատակ եղբ. Վարդան Բախչեանի մօր՝ Այտա Բախչեանի ուղեկցութեամբ կտրեց խորհրդանշական կարմիր ժապաւէնը՝ ազդարարելով կեդրոնին բացումը, որուն հիմնօրհէքի արարողութիւնը կատարուած էր չորս ամիս առաջ, 16 Մայիս 2021-ին:

Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ հո-

գելոր հովիւ Տաճատ Քահանայ Ինջիղուլեանի կողմէ կատարուեցաւ տնօրհնէքի կարգ: Ապա, հիւրերը շրջեցան կեդրոնին մէջ՝ շնորհաւորութեան եւ բարեմաղթութեան իրենց խօսքերը ուղղելով ներկաներուն:

Յայտնենք, որ Մաղաքեան ընտանիքը յանձն առաւ ապագային եւս օժան-







Դեպի մասնաճիւղի գործունէութեան: «Մաղաքեան» կեդրոնին դռները բաց են երիտասարդական այլ նախաձեռնութիւններու համար եւս:

### ՎԵՐՅԻՇԵՆՔ...

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արմաւիրի «Վարդան Բախշեան» մասնաճիւղի «Էմիլ Մաղաքեան» սկաուտական կեդրոնի հիմնօրհնէքի արարողութիւնը տեղի ունեցաւ 16 Մայիս 2021-ին:



Արարողութեան ներկայ գրուուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամներ, Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոասիական տարածաշրջանի կոմիտէի նախագահ եղբ. Բագրատ Եսայեան, մասնաճիւղի վարչականներ եւ հրաւիրեալներ, որոնց կարգին՝ նահատակ Բախշեանի ընտանիքի անդամներ եւ մասնաճիւղի նախկին խըմբապետներ:

## 1936-Ի ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԶԱՀԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ՄԱՐԱԹՈՆԻ ՎԱՋՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

### Թղթակից ԱԹԵՆՔ

**31** Հոկտեմբեր 2021-ը իւրայատուկ օր մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանին համար: Այդ օր մեր միութիւնը Յունաստանի Մարաթոնի վազքի թանգարանին ժամանակաւորապէս յանձնեց 1936-ի ողիմպիական խաղերու առաջին վազքի ջահը, զոր հպարտօրէն բռնած են յունահայ Հ.Մ.Ը.Մ.ական երկու մարզիկներ: Զահը ցարդ կը գտնուէր Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղին մօտ:



Տուչութեան յուզիչ արարողութեան ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Աթէնքի մասնաճիւղի վարչութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց տարազներով եւ դրօշակներով, միութեան անդամներ, Մարաթոնայի քաղաքապետը, քաղաքապետական խորհուրդի անդամներ, շրջանի պաշտօնական անձեր եւ բազմութիւն մը:

Քաղաքապետ Սթերղիոս Յիրքաս եւ Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Տէր Յովակիմեան ստորագրեցին յանձնումի փաստաթուղթը, որ նշեց մեր միութեան եւ թանգարանին միջեւ նոր գործակցութեան մը սկիզբը:

Մարաթոնայի քաղաքապետը խօսք առնելով դրուատեց հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութիւնը եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին:

Հայկական պատուիրակութեան կողմէ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենա-

պետ եղբ. Գէորգ Պօղոսեան: Ան հանգամանօրէն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի արժէքները եւ զանոնք կապեց ողիմպիական մրցումներու ազնիւ գաղափարներուն:

Յայտնենք, որ 1936-ի ողիմպիական խաղերու մեկնարկէն առաջ, հնամեայ Օլիմպիա վայրէն դէպի Պերլին ողիմպիական ջահի փոխանցումի վազքին մասնակցած են յունահայ Հ.Մ.Ը.Մ.ական նշանաւոր մարզիկներ Դանիէլ Դանիէլեան եւ Արամ Առաքելեան: Տարիներ ետք, երկրորդ եղբոր ընտանիքը պատմական ջահը նուիրած է Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղին, որ այս առիթով երեք տարուան պայմանագիրով մը զայն փոխանցեց Մարաթոնի վազքի թանգարանին: Զահը արդէն գետեղուած է յատուկ բաժինի մը մէջ, որուն կից նշում կատարուած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի պատմութեան:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

## Վիզիտ Սինասեան ԱԹԵՆ

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

12 Սեպտեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Սկառուտական Խորհուրդին եւ խմբապետին կազմակերպութեամբ, Յիքսի «Արամ Մանուկեան» ակումբին մէջ կատարուեցաւ Աթէնքի եւ Գոքինիոյ Սկառուտական Խորհուրդներու ու աստիճանաւորական կազմերու առաջին հանդիպումը, որուն ընթացքին մասնակիցները պատրաստեցին 2021-2022 տարեշրջանի իրենց ծրագիրը: Հանդիպումին որոշուեցաւ երկու մասնաճիւղերու պաշտօնական բացման հանդիսութիւններէն առաջ կատարել միջ-մասնաճիւղային միօրեայ արշաւ:

### ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՄԻՕՐԵԱՅ ԱՐՇԱՎ

19 Սեպտեմբեր 2021-ին, Այիոս Անտորէայի յունական սկառուտական բանակավայրին մէջ տեղի ունեցաւ տարեկան առաջին միջ-մասնաճիւղային միօրեայ արշաւը, որուն մասնակցեցան 110 քոյրեր եւ եղբայրներ:

Արշաւին նպատակն էր երկու տարւան կանոնաւոր հաւաքոյթներու, արշաւներու եւ ամառնային բանակումներու բացակայութենէն ետք, քոյրերուն եւ եղբայրներուն մէջ վերակենդանացնել սկառուտական ոգին, ուրախ ժամանց ունենալ եւ սկառուտական գիտելիքներ վերլիչել:

Արշաւը սկսաւ դրօշակի արարողութեամբ: Շրջանային խմբապետ եղբ. Օննիկ Աւագեան բարի գալուստ մաղթելէ ետք, կոճղի մը վրայ կացին մը գամելով, 2021-2022 սկառուտական տարեշրջանին բացումը յայտարարեց: Ապա, խմբակները իրենց պատասխանատու աստիճա-



նաւորներուն հետ կատարեցին իրենց յայտագիրը:

Երկու մասնաճիւղերու խորհուրդներու անդամները, վոհմակի (գայլիկ-արծուիկ) բոլոր քոյրեր-եղբայրներուն յանձնեցին կաւէ ծաղկամաններ եւ իրենք, պատասխանատու աստիճանաւորներուն օգնութեամբ, գունաւորելով եւ հող լեցնելով, ցանեցին մէկական բոյս: Այս գործունէութեամբ փոքրիկները առիթը ունեցան սորվելու բոյսերու հոգատարութիւն:

Խումբի պատասխանատու աստիճանաւորական կազմը պատրաստած էր խաղեր, որոնց ընթացքին քոյրերն ու եղբայրները ստացան սկառուտական գանգան գիտելիքներ:

Փաղանգի անդամները, իրենց խմբապետներուն հսկողութեամբ, վրան լարեցին եւ փայտէ շինութիւններ պատրաստեցին:

Արշաւը աւարտեցաւ դրօշակի արարողութեամբ եւ մասնակիցները լաւ տպաւորութիւններով վերադարձան տուն:

**ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ Շաբաթ, 18 եւ 25 Սեպտեմբերին,**

Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի եւ Գոքինիոյ սկառուտական մասնաճիւղերը կատարեցին իրենց գործունէութեան պաշտօնական վերամուտը:

Արարողութիւններուն ներկայ էին Աթէնքի եւ Գոքինիոյ հոգեւոր հովիւները, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ տեղոյն վարչութիւններու անդամներ, Շրջանային եւ տեղոյն խորհուրդներու անդամներ եւ Շրջանային խմբապետը:

Դրօշակի արարողութենէն ետք, հոգեւոր հայրերը աղօթքի եւ ջրօրհնէքի արարողութեամբ օրհնեցին մասնաճիւղերը եւ անոնց անդամները: Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները բարի վերամուտ մաղթելէ ետք, սրտի խոր կրկնիծով, քոյրերուն եւ եղբայրներուն հաղորդեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի կանխահաս մահը եւ ընթերցեցին եղբօր կենսագրութիւնը:

Այնուհետեւ կատարուեցան փոխանցման, խոստման, երդման արարողութիւններ եւ վոհմակի միաստղի տուջութիւն:

Գոքինիոյ մասնաճիւղի աստիճանաւորական կազմի քոյրեր Մարլէն Տէր Ղազարեան, Աղանի Յարութիւնեան եւ Տիանա Պօղոսեան ստացան փաղանգի աստիճանի հաստատագիրը՝ ծառայու-



Թեան յատուկ փաստաթուղթը: Ապա, բոլոր քոյրերն եւ եղբայրները անցան իրենց շաբաթական հաւաքովի յայտագիրին:

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 3 Հոկտեմբեր 2021-ին, Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Հ.Մ.-Լ.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը կատարեց հոգեհանգստեան պաշտօն՝ Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի մահուան քառասունքին, ինչպէս նաեւ Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի յիշատակին: Հոգեհանգստեան արարողութեան ներկայ եղաւ Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերու տարագաւոր տասնանդամ պատուիրակութիւն մը:

**ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ**

2-3 Հոկտեմբեր 2021-ին, Աթէնքի մասնաճիւղի քոյրերն ու եղբայրները Նէա Զմիռնիի հրապարակին վրայ կատարեցին գործածուած գիրքերու սօնավաճառ: Աստիճանաւորական կազմը, փաղանգի անդամներուն հետ, պատրաստեց փայտէ շինութիւն մը, որուն վրայ գետեղուեցան վաճառելի գիրքեր: Տօնավաճառը ընթացաւ մեծ յաջողութեամբ:

Յունաստանի սկաուտական խնամակալութեան փափաքին ընդառաջե-



լով, Շաբաթ, 2 եւ 9 Հոկտեմբերին, Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղի ակումբին մէջ կատարուեցաւ դպրոցական դոյքերու հաւաք, որուն շնորհիւ հաւաքուած գոյքերը բաժնուեցան այն փոքրիկներուն, որոնք վնասուած էին անցեալ ամառ պատահած հրդեհներէն:

Կիրակի, 17 Հոկտեմբեր 2021-ին, Աթէնքի սկաուտական խումբին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ սկաուտական «Open day», Նէա Զմիռնիի պուրակին մէջ: Ելոյթին հրաւիրուած էին 11-15 տարեկան հայ պատանիներ, ծանօթանալու համար սկաուտական կեանքին: Օրուան յայտագիրը ստանձնած էին խումբի պատասխանատու խմբապետները, որոնք սկաուտական գանազան խաղերով գրադեցուցին պատանիները:

**ԱՐՑԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄ**

Շաբաթ, 23 Հոկտեմբեր 2021-ին, Յունաստանի Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբին կազմակերպութեամբ, Նէա Զմիռնիի Հայոց Յեղասպանութեան յուշարձանին առջեւ, Արցախեան 44-օրեայ պատերազմի առաջին տարելիցին առիթով, կատարուեցաւ զոհուած հերոսներու յիշատակին հոգեհանգստեան արարողութիւն, որուն ներկայ եղան տարագաւոր քոյրեր եւ եղբայրներ, Շրջանային խմբապետ եղբ. Օննիկ Աւագեանի գլխավորութեամբ:

**28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏՈՂԱՆՅՔ**

Հինգշաբթի, 28 Հոկտեմբեր 2021-ին, տողանցքներու երկու տարի ջնջումէն ետք, Հ.Մ.-Լ.Մ.ի երկու մասնաճիւղերը, Նէա Զմիռնիի եւ Նիքէայի քաղաքապետներու հրաւերներուն ընդառաջելով, կարողացան իրենց մասնակցութիւնը բերել Յունաստանի ազգային տօնին առիթով կազմակերպուած քաղաքապետական տողանցքներուն: Դրութեամբար, համաճարակին պատճառով, ըստ պետական ուղղութիւններուն, տողանցքները կատարուեցան սահմանափակ թիւերու մասնակցութեամբ: Աւարտին, ակումբներու մէջ տեղի ունեցան հաւաքներ, որոնց ներկայ գտնուեցան հոգեւոր հայրեր եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, որոնք այս առիթով ուղղեցին օրուան պատգամը փոխանցող խօսքեր:





# 13 ՄԵՏԱԼԱԿԻՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԹԼԵԹԻՉՄԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱԺԱԿԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

**Լ**իբանանի 2021 տարեշրջանի աթլետիկամի տարիքային բաժանակի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ-ի աթլետները մասնակցեցան բաւական նորեկ, սակայն խոստմնալից կազմով մը՝ ձեռք ձգելով 13 մետալներ- չորս առաջնութիւն, չորս երկրորդութիւն եւ հինգ երրորդութիւն: Կազմէն չորս մարզիկներ հանդիսացան չորրորդ, իսկ եօթը մարզիկներ՝ հինգերորդ:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի աթլետներուն արձանագրած գլխաւոր արդիւնքները- ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

60 մեթր վազք- Յակոբ Ապտալեան  
300 մեթր վազք, տղաք- Յակոբ Ապտալեան

300 մեթր վազք, աղջիկներ- Վանայ Աւետիսեան

100 մեթր վազք, 2004-2005-ի ծնունդներ- Ճոռիկ Թէնքերեան

### ԵՐԿՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Գունտ նետել, 2002-2003-ի ծնունդներ- Բայիկ Թէքէլեան

Գունտ նետել, 2004-2005-ի ծնունդներ- Գարլո Ահարոնեան

200 մեթր վազք, 2004-2005-ի ծնունդներ- Փաթիլ Ասատուրեան



Դրոշարչաւ- Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ

### ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

250 մեթր վազք- Գլարիթա Ղազար

300 մեթր վազք- Քաթրինա Աւետիսեան

1500 մեթր վազք, 2004-2005-ի ծնունդներ- Արմէն Եղիայեան

Գունտ նետել- Էնտի Տօներեան

Մուրճ նետել, 2004-2005-ի- Գարլո Ահարոնեան

Չորրորդ դիրքը գրաւեցին.- Սազօ Էմիրզեան (60 մեթր վազք), Ալիք Կիրակոսեան (250 մեթր վազք), Էնտի Տօներ-



եան (գունտ նետել, 2008-2009-ի ծնունդներ), Արմէն Եղիայեան (800 մեթր, 2004-2005-ի ծնունդներ):

Հինգերորդ դիրքը գրաւեցին.- Ալիք Կիրակոսեան (50 մեթր վազք), Գլարիթա Ղազար (50 մեթր վազք), Սերժիօ Թութիկեան (մէկ քայլ ոստում), Անթոնի Պոչալեան (300 մեթր վազք), Նարեկ Ասատուրեան (100 մեթր վազք, 2002-2003-ի ծնունդներ), Նարեկ Ասատուրեան (200 մեթր վազք, 2002-2003-ի ծնունդներ) եւ Փաթիլ Ասատուրեան (800 մեթր վազք, 2004-2005-ի ծնունդներ):

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԶԵՌՆԱՐԿ ԵԱՑԱՅԻ ՄէՋ

**20** Սեպտեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի, Հայֆայի եւ Երուսաղէմի մասնաճիւղերու վարչութիւններուն կազմակերպութեամբ, Եաֆայի Ս. Նիկողայոս վանքին մէջ տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային ձեռնարկ՝ նուիրուած Հայաստանի վերանկախացման 30-ամեակին:

Ձեռնարկը, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 100 մասնակիցներ, ունեցաւ դաստիարակչական-ընկերային բնոյթ եւ յաջողեցաւ բոլորին մօտ ստեղծել հայեցի ուրախ մթնոլորտ:





**ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**

**ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ**

Միջ-մասնաճիւղային ձեռնարկէն երկու շաբաթ առաջ, 3 Սեպտեմբեր 2021-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի մասնաճիւղի վարչութիւնը, ընկերակցութեամբ Երուսաղէմի Հ.Յ.Դ. կոմիտէութեան ներկայացուցիչներուն, այցելեց Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի մասնաճիւղի երկարամեայ բազմավաստակ անդամ, նախկին ատենապետ եղբ. Պօղոս Ղուկասեանին: Ապա, խորհրդակցական ժողով մը գումարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի վարչութեան հետ, վերջինին կեդրոնին մէջ, Եաֆա:



**ՎԱՀԱՆ ԱՐՔ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆ**

**Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի շրջան ՅՈՒՆՍՍՈ**

**Կ**իրակի, 25 Յուլիս 2021-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի նորակառոյց կեդրոն այցելեց Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Վահան Արք. Յովհաննէսեան, որ ծանօթացաւ կեդրոնի աշխատանքներուն եւ անհրաժեշտ կարիքներուն շինարարական ծրագիրը իր աւարտին հասցնելու համար:

Այս առիթով Ալմելոյի վարչութեան անդամները Առաջնորդ Սրբազանին ամփոփ կերպով ներկայացուցին վերջին տարիներուն տարուած աշխատանքը, որուն շնորհիւ կարելի եղաւ իրագործել այս կեդրոնը:

Այցելութեան աւարտին Սրբազան Հայրը իր տպաւորութիւնները յայտնեց ըսելով. «Ուրախ եւ հպարտ կը զգամ այս շէնքը այցելելու եւ մէջը գտնուելու համար: Ուրախութիւնս յուզմունք պատճառեց ինծի: Բարձր կը գնահատեմ Հոլանտայի Ալմելո քաղաքի հայ համայնքին թափած ջանքերը: Շատ

դժուար է Սփիւռքի մէջ նոր ընտանիք ու տուն կազմելը եւ պահպանելը, ո՛րը մնաց նոր հայ համայնք հիմնելը եւ պահպանելը: Ես վստաս հեմ, որ Հ.Մ.Ը.Մ-ի այս նոր կեդրոնը, նոր օճախ պիտի ըլլայ կերտելու մարմնով առողջ ու հոգիով հայասէր եւ ազգասէր պատանիներ ու երիտասարդներ: Պատանի ու երիտասարդ ժամանակ եղած եմ Հ.Մ.Ը.Մ-ական եւ հոն էր, որ մէջս արմատացան ազգասիրութիւնը եւ հայասիրութիւնը»:

Այս առիթով, Առաջնորդը իր հայրական կոչը ուղղեց մեր հայրենակիցներուն ըսելով. «Հայրական կոչս է Ֆրանսայի եւ Հոլանտայի բոլոր հայրենակիցներուն անպայման մասնակցել՝ այս հրաշալի ծրագիրը հասցնելու իր աւարտին, չինայելով որեւէ ջանք կամ նիւթական օժանդակութիւն»:

Յայտնենք, որ կեդրոնը իր աւարտին ու գործածական վիճակին հասցնելու համար տակաւին անհրաժեշտ են նիւթական միջոցներ:

Շնորհակալութեամբ կը սպասենք ձեր ներդրումները:



## ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ` Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԴԱՇՏԻՆ

**2** Սեպտեմբեր 2021-ի երեկոյան, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի հրաւերով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ ACN բարեսիրական կազմակերպութեան ներկայացուցիչներուն պաշտօնական ծանօթացումը` Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպօլի վերանորոգուած դաշտին:



գալուստի խօսք ուղղեց քոյր Նայիրի Զաքոյեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպօլի դաշտի վերաշինութեան նպաստող բոլոր կողմերուն, յատկապէս Ռեժինա Լինչին եւ Ռայնհարտ Պաքսին, աւելցնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայկական այն միջավայրն է, որ կը համախրմբէ հայ երիտասարդներն ու մարզիկները` զարգացման դաշտ ստեղծելով անոնց հա-

ձանդիպումին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը:

Հանդիպումին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, ACN բարեսիրական միութեան ներկայացուցիչներ` Ռեժինա Լինչ, Ռայնհարտ Պաքս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրբիոյ ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, պատկան մարմնի եւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Մասնաճիւղին վարչութեան անունով ներկաներուն բարի

մար:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպօլի կրտսեր խումբերը կատարեցին պաշտօնական առաջին մրցումը, արժանանալով ներկաներու ծափողջոյններուն եւ քաջալերանքին:

Մրցումին բացումը կատարեց Հալէպի երիցագոյն Հ.Մ.Ը.Մ.ական պասքեթպօլիստ եղբ. Տիգրան Տիգրանեան:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ACN բարեսիրական-եկեղեցական կազմակերպութեան, դիտել տալով որ հալէպահայ երիտասարդութիւնը կ'ապրի տնտեսական աննախադէպ ծանր պայմաններու մէջ եւ նման հաւաքավայրեր յոյսի սերմեր կը ցանեն անոր մէջ` մարզուելու, վերանորոգուելու եւ առողջ կենսակերպով առողջ միջավայրի մէջ ապրելու համար:

Սրբազան հայրը շեշտեց, որ ACN-ը ո'չ միայն դաշտի վերանորոգման, այլեւ` զանազան մարզերու մէջ օժանդակութիւններ կատարած է եւ կը շարունակէ կատարել սուրիահայրութեան, աւելցնելով որ այսպիսով մենք կը զգանք որ առանձին չենք այս տագնապի դիմագրւաման մէջ եւ նոր ուժ կը կուտակենք մեր ապագային լաւատեսութեամբ նայելու:

Աւարտին, հիւրերը ծանօթացան դաշտին բաժիններուն եւ շարունակուող նորոգութիւններուն:







Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԵՍԱՊԻ ԱՔԱՆԴԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ ՍՏԵՂԾԵՑ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ

**Բ**արձր հովանավորութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Կիրակի, 15 Օգոստոս 2021-ի կէսօրուան ժամը 12.00-ին, Քեսապի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկստական կազմերու եւ շեփորախումբերու աւանդական տողանցք, մասնակցութեամբ՝ Հայլէպի, Քեսապի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու

սկստականներուն եւ շեփորախումբերուն: Հ.Մ.Ը.Մ.Ի տարազաւոր սկստականները նախ իրենց մասնակցութիւնը բերին Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած խաղողօրհնէքի արարողութեան, որմէ ետք շեփորախումբերուն առաջնորդութեամբ՝ շքեղ քայլերթով տողանցք սկիզբ առաւ Ս. Աստուածածին եկեղեցիէն հասնելով Քեսապի համալիր, ուր տեղի ունեցաւ պաշտօնական հաւաք: Ներկայ էին Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան, Սուրբիոյ Հայ Աւետարանական Համայն-

քի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Համայնքի ներկայացուցիչ Նարեկ Վրդ-Լուիսեան, Քեսապի հոգեւոր տեսուչը, քահանայ հայրեր, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, պետական բարձրաստիճան հիւրեր, ազգային մարմիններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Կարօ Գալայճեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային ըՍկառու. Խորհուրդն ու Խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Հայլէպի, Քեսապի, Լաթաքիոյ մասնաճիւղերու վարչութիւններն ու Սկառու. Խորհուրդները եւ հոծ բազմութիւն:

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան կողմէ արարեբէն խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան ատենապետ







եղբ. Սաֆո Քէչէճեան, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով Աստուածամօր բարեխօսութիւնը հայցեց ներկայիս տիրող դժուարութիւններէն դուրս գալու համար: Ան երախտագիտական եւ շնորհաւորական խօսք ուղղեց Սուրբոյ նախագահ տօքթ. Պաշչար Ալ Ասատին՝ նախագահական երդման առիթով: Ան երախտագիտութիւն յայտնեց նաեւ սուրիական հայրենիքին, սուրիական բանակին, խաղաղութիւն մաղթեց նահատակներու հոգիներուն եւ բարի ապաքինում՝ բանակի վիրաւորներուն:

Այնուհետեւ օրուան պատգամը փո-

խանցեց Առաջնորդ Սրբազանը, յայտնելով, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով Սուրբոյ զանազան շրջաններէն ուխտաւորաբար եկած ենք միանալու քեսապահայութեան եւ զնահատելու անոր զաւակներուն կառչածութիւնն ու ամուր կեցւածքը հանդէպ սուրիական հայրենիքին եւ Քեսապի ազգային արժէքներուն: «Եկած ենք անգամ մը եւս հաստատելու, որ սուրիահայր սուրիական հայրենիքին եւ անոր հողերուն ամբողջականութեան նկատմամբ իր հաւաքական կեցուածքը կ'արտայայտէ», աւելցոցեց ան:

Սրբազան Հայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով զնահատեց եւ գորակցութիւն յայտնեց քեսապահայրուն, որոնք հակառակ բոլոր դժուարութիւններուն կառչած կը մնան Քեսապին, կը պահեն քեսապահայութեան աւանդութիւններն ու ազգային արժէքները: Այս առիթով, ան զնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, որ Հալէպի մէջ պատմական եւ անկիւնադարձային միջ-մասնաճիւղային տողանցք կազմակերպելէ ետք, այսօր եկած է Քեսապի աւանդութիւնը պահելու եւ միանալու քեսապահայութեան երթին:

Մասիս Եպս. նշեց, որ խաղաղութեան տարիներուն թէ Սուրբոյ պատերազմէն ետք, սուրիահայրը հաւատարմութեամբ կը շարունակեն ծառայել սուրիական հայրենիքին եւ կը պայքարին անոր ազատութեան համար, դըրսեւորելով մէկ միասնական կեցուածք՝ հանդէպ սուրիական հայրենիքին:

Ան կոչ ուղղեց երիտասարդներուն, որպէսզի իրենց երթը շարունակելով սուրիահայրութեան խօսնակը դառնան՝ յոյսի պատգամը փոխանցելով բոլորին:

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի շեփորախումբին սուրիական քայլերգի նուազակցութեամբ, պաշտօնական հաւաքը հասաւ իր աւարտին:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ՔԵՍԱՊԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Շաբաթ, 14 Օգոստոս 2021-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւն մը այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանին, Քեսապի իր բնակավայրին մէջ: Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան, Սկառուտ. Խորհուրդի եւ խմբապետութեան ներկայացուցիչները:

Այցելուները Սրբազան Հայրը հրաւիրեցին Ս. Աստուածածնայ տօնին առիթով կազմակերպուած աւանդական տողանցքին եւ Հալէպի մասնաճիւղի տարեկան բանակումի խարուկահանդէսին:

Մտերմիկ միջնորդութիւն մէջ ընթացած հանդիպումին արծարծուեցան միութեան տարեկան բանակումներու կազմակերպչական աշխատանքները եւ դիմագրաւած գլխաւոր մարտահրաւէրները:

Սրբազան Հայրը զնահատեց կենցաղային եւ տնտեսական



ներկայ դժուարին պայմաններուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հայակերտումի յոյժ կարեւոր աշխատանքը, անոր մաղթելով բարեյաշիւղ գործունէութիւն:





## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Ա. ԱՌՑԱՆՑ ՄԱՐԶԱԽԱՂ ԵՐԸ

**Հ.Մ.Ը.Մ.ի** Կեդրոնական Վարչութեան մարզական յանձնախումբին կազմակերպութեամբ, 4 Հոկտեմբեր-24 Դեկտեմբեր 2021 տեղի ունեցան միութեան Ա. առցանց մարզախաղերը՝ պասքեթպոլ (անհատական, խըմբային), Ֆութպոլ (անհատական), լող եւ աթլէթ:

Առցանց մարզախաղերուն համար նկատի առնուեցան տարիքային հետեւեալ խմբաւորումները.-

- 21 տարեկան եւ վեր (Ծնած 30 Սեպտեմբեր 2001-ին կամ առաջ)
- 20 տարեկանէն վար (Ծնած 1 Հոկտեմբեր 2001-ին կամ ետք)
- 18 տարեկանէն վար (Ծնած 1 Հոկտեմբեր 2003-ին կամ ետք)
- 16 տարեկանէն վար (Ծնած 1 Հոկտեմբեր 2005-ին կամ ետք)
- 14 տարեկանէն վար (Ծնած 1 Հոկտեմբեր 2007-ին կամ ետք)

### ԽԱՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Իւրաքանչիւր շրջանի մէջ մարզախաղերը կազմակերպուեցան Ֆիզիքական ձեւով՝ Շրջանային կամ Մեկուսի վարչութիւններու կողմէ, նկատի ունենալով առցանց մարզախաղերուն համար մշակած յատուկ օրէնքները եւ յարգելով քորոնայի առողջապահական տեղական արգելափակումները:

Առցանց մարզախաղերուն արտօնուեցաւ մասնակցիլ բոլոր մարզաձեւերով կամ միայն շրջանէն ներս կիրարկուող մարզաձեւով:

Մասնակցութեան արդիւնքները տեսերիզի միջոցով իւրաքանչիւր շրջանի մարզական ներկայացուցիչին կողմէ առցանց փոխանցուեցան Կեդրոնական Վարչութեան մարզական յանձնախումբին: Տեսերիզներուն փոխանցումը կատարուեցաւ Google Drive-ով եւ կամ Ե-նամակով՝ մարզական յանձնախումբին կապուելով՝ 11th-Games@homenetmen.org հասցեով, Google Drive-ի արտօնութիւն ստանալու համար:

Իւրաքանչիւր շրջան ներկայացուց իւրաքանչիւր դասակարգի եւ մարզաձեւի իր երեք լաւագոյն արդիւնքները:

Տեղեկութիւնները փոխանցուեցան իւրաքանչիւր շրջանի յատուկ folder-ի մը մէջ:

Շրջանները իրաւունք ունեցան տեսնելու միայն իրենց շրջանին եւ մարզական յանձնախումբին կողմէ տեղադրուած տեղեկութիւնները:

Առցանց մարզախաղերու համար մարզական յանձնախումբին

կողմէ պատրաստուած օրէնքներու եւ կանոններու տեսերիզներն ու գրքոյկները տեղադրուեցան Google Drive-ի վրայ:

ԽԱՂԵՐՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ Աթլէթի եւ լողի մրցումներուն համար թելադրուեցաւ ելեկտրոնիկ ժամացոյց մը:

Յանձնախումբը ընդունեց տուեալ երկրի մը մարզական ֆետերասիոնին կամ sanctioning body-ին կողմէ փոխանցուած արդիւնքներուն պաշտօնական ժամանակը:

Մրցումներուն արդիւնքները ներկայացուեցան տպագրուած օրինաւոր թուղթով (Scan ընելով, նկարելով եւ դրկելով): Համացանցի վրայ տեղ գտած արդիւնքներուն կապերը փոխանցուեցան համապատասխան կերպով:

Իւրաքանչիւր մարզաձեւի համար ճշդուեցան ժամանակի յատուկ օրէնքներ:

Բազմափուլ մարզաձեւերուն (լող եւ աթլէթ) բաժնուած ժամանակը եւս փոխանցուեցաւ: Այս իմաստով, իւրաքանչիւր տեսերիզ ներկայացուց տուեալ մրցումին սկիզբը, վերջաւորութիւնը, եւ վերջին փուլին ժամանակը: Բաժնուած ժամանակը ցոյց տուաւ իւրաքանչիւր փուլին արձանագրուած ժամանակը: Բաժնուած ժամանակը ներկայացուեցաւ Ե-նամակով կամ թուղթով՝ համապատասխան տեսերիզի ներկայացման հետ:





ԻՄ ՀԵՐՈՍ...  
ԻՄ ՀԱՅԿ  
ԻՄ ԵՂԲԱՅՐ...  
ԻՄ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

